**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1261 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒ-ԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի դեկտեմբերի 1-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մարզասարքերը (5,004.50 կգ ընդհանուր քաշով, 38,567.11 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,001,470 դրամ, ՄԾՓ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1262 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻԶՄԻՐԼՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34943-15 և նոյեմբերի 13-ի N 06/3-3/35066-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 02/14/14030-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 10-ի N ԱՄ/22.2/12966-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 85,276,100 դրամ արժողությամբ «Իզմիրլյան բժշկական կենտրոնի համար նոր սարքավորումների տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Այգեձոր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00815501) 2015 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N 20Ճ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական նոր սարքավորումների տեղադրման, ապամոնտաժված ռենտգեն ապարատի տեղափոխման համար շինվերանորոգման աշխատանքների իրականացում՝ 85,276,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«5» նոյեմբեր 2015 թ.

### Իզմիրլյան Բկ-ի համար նոր սարքավորումների տեղադրում

### Ծ Ր Ա Գ Ի Ր

15/2

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրլյան Բկ-ի համար նոր սարքավորումների տեղադրման, ապամոնտաժված <<SIEMENS>> ՌԵՆՏԳԵՆ ապարատի տեղափոխման համար շին. վերանորոգման աշխատանքների իրականացումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ առողջապահություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 85,276,100 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 սեպտեմբեր 2015թ. – 29 դեկտեմբեր 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրլյան Բկ-ի համար նոր սարքավորումների տեղադրման, ապամոնտաժված <<SIEMENS>> ՌԵՆՏԳԵՆ ապարատի տեղափոխման համար շին. վերանորոգման աշխատանքների իրականացումը՝ 85,276,100 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Այգեձոր»ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Աճառյան 35/3, ՀՎՀՀ 00815501)՝ պայմանագիր կնքված 01.09.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 01 սեպտեմբեր 2015թ. – 29 դեկտեմբեր 2015թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իզմիրլյան Բկ-ի համար նոր սարքավորումների տեղադրման, ապամոնտաժված <<SIEMENS>> ՌԵՆՏԳԵՆ ապարատի տեղափոխման համար շին. վերանորոգման աշխատանքների իրականացումը ՝ 85,276,100 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և [illegible] բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո [illegible] ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1263 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏՊԱՐԱՆԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34889-15 ու նոյեմբերի 10-ի N 06/3-4/34520-15 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 02/14/14029-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1,242,940 դրամ արժողությամբ «Տպարանի տանիքի վերափոխում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտալան Ինդաստրիզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00137948) 2015 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ N 19Շ/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տանիքի վերափոխման աշխատանքների իրականացում՝ 1,242,940 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«5» նոյեմբեր 2015 թ.

## Տպարանի տանիքի վերափոխում
## ԾՐԱԳԻՐ

15/3

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարանի տանիքը վերափոխել, որպեսզի այնտեղ տեղադրվեն օդափոխության սարքերը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,242,940 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 12 հոկտեմբեր 2015թ. – 10 դեկտեմբեր 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարանի տանիքը վերափոխել, որպեսզի այնտեղ տեղադրվեն օդափոխության սարքեր՝ 1,242,940 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Արտալան Ինդաստրիզ»-ի կողմից (ՀՀ ք. Երևան Մ. Բաղրամյան 24բ, ՀՎՀՀ 00137948)՝ պայմանագիր կնքված 12.10.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 12 հոկտեմբեր 2015թ – 10 դեկտեմբեր 2015թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարանի տանիքը վերափոխել, որպեսզի այնտեղ տեղադրվեն օդափոխության սարքեր 1,242,940 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1264 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 18-ի N 07/80-2/35790-15 և նոյեմբերի 19-ի N 06/3-3/35974-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օդորակիչների (1,127 կգ ընդհանուր քաշով, 26,211 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 535,500 դրամ, «ՄԾՓ» ՍՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Էօրնեկեան կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1265 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 18-ի N 07/80-2/35795-15 և նոյեմբերի 19-ի N 06/3-3/35965-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պղնձյա թիթեղի (2,916 կգ ընդհանուր քաշով, 27,350.80 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 309,750 դրամ, «ՄԾՓ» ՍՊ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Էօրնեկեան կրթական կենտրոնի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1266 - Ա
քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 20-ի N 07/80-2/35989-15 և նոյեմբերի 25-ի N 06/3-3/36634-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Վաչե և Թամար Մանուկյան» բարեգործական կազմակերպության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի (47 կգ ընդհանուր քաշով, 3,555.52 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,490 ռուսական ռուբլի, բեռի ցանկը կցվում է, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Անվանացանկ

| հհ | Անվանում |
|---|---|
| 1 | Խոնավացնող սարք |
| 2 | Գոլորշեբաժանիչ |
| 3 | Ջերմության և խոնավության տվիչ |
| 4 | Ջրի մատակարարող խողովակ |
| 5 | Գոլորշատար խողովակ |
| 6 | Կոնդեսատի հեռացման խողովակ |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1267 -Ա
քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2015 թվականի նոյեմբերի -ի N 07/80-2/-15 և նոյեմբերի -ի N 06/3-3/-15 եզրակացու-թյունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայրի հասարակական կազմակերպության 2015 թվականի նոյեմբերի 9-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակա-կան կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա, 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա և մարտի 18-ի N Մ-263-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02594556) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջակա-նորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՏՈՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02526227) 2015 թվականի նոյեմբերի 6-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի կաթսայի ձեռքբերում՝ 844,451 դրամի չափով, ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Սոցիալական ինտեգրման կենտրոն "Մայրի" հասարակական կազմակերպության տնօրեն Զարուհի Մանուկյանի կողմից

«10» նոյեմբերի 2015թ.

## Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների ինտեգրումը հասարակության մեջ:<br>Ծրագիրը ուղղված է՝<br>1.Բացահայտելու հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների անհատական օժտվածությունները եւ հնարավորությունները:<br>2.Ապահովելու երեխաներին և երիտասարդներին օրական ութ ժամ կենսատարածքով,<br>3.Ապահովելու երեխաներին և երիտասարդներին հասակակիցների հետ շփման հնարավորություն մշակութային համատեղ նախագծերին մասնակցելու միջոցով:<br>4.Ժամանակի ընթացքում փոխելու հասարակության մեջ արմատավորված կարծիքը հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդների վերաբերյալ եւ հրավիրել ուշադրություն նրանց կարիքներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից (այսուհետ՝ հարկային արտոնություններ) |
| 3. | Բարեգործը | 1.Գերմանիայի Դաշնային Հանրապետության աջակցող BMZ հիմնադրամ Հասցե՝ Վայնմայստեր շտրասսե 16, D-10178 Բեռլին<br>2.Անտրոպոսոֆական բժշկության զարգացման հիմնադրամ, Շվեյցարիա, Դորնախ:<br>3. Բուժական մանկավարժության խթանման հիմնադրամ ( SBH, Հոլլանդիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Սահմանափակ հնարավորություններով երեխաների և պատանիների սոցիալական ինտեգրման կենտրոն «Մայրի» ՀԿ<br>ՀՎՀՀ 02594556, Եղբայրության 11, Շենգավիթ վարչական շրջան, Երևան: |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սկզբնական շրջանում՝ ք. Երևան, հետագայում՝ նաև ՀՀ մարզեր: Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 35,141,000.00 (երեսունհինգ միլիոն հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ցանկացած ախտորոշմամբ վեցից երեսունհինգ տարեկան հատուկ կարիքներով երեխաներ և երիտասարդներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10 տարի (2014թ. հունվարի 1-ից – 2024թ-ի հունվարի մեկ ) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Երևան, Շենգավիթի շրջան, Եղբայրության 11 հասցեում գտնվող շինությունում 6 արհեստանոցների ներքին հարդարում, կահավորում, սարքավորումներով ապահովում:<br>1. Ներքին հարդարման աշխատանքներ.պահանջվող գումարն է 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ներքին հարդարման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն 2014թ.-ի ընթացքում<br>2. Կահավորում: Կահավորման համար անհրաժեշտ գումարն է 6,800,000.00 (վեց միլիոն ութ հարյուր հազար ) ՀՀ դրամ: Կահավորման աշխատանքները նախատեսվում է, որ կավարտվեն մինչև 2015 թվականի հոկտեմբեր ամիս:<br>3. Արհեստանոցները սարքավորումներով և նյութերով ապահովման համար անհրաժեշտ գումարն է 4,798,000.00 (չորս միլիոն յոթ հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ:<br>4. էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) ՀՀ դրամ:<br>5. «Արմենթել» ՓԲԸ հանրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200,000 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ,<br>6. Գազաֆիկացում, սպասարկում 1,594,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ<br>7. ՍՈՍ Սիսթեմս ՍՊԸ անվտանգության համակարգի տեղակայում՝ 908,000 (Ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ:<br>8. Մինիբուսի ծառքբերում 2,256,000 (երկու միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ:<br>9. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ*<br>*(Այս ծախսը ներառված է նաև ծրագրի 11-րդ կետում:)<br>10.Գազի սպառման հետ կապված ծախս 7,745,000.00 (յոթ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ,<br>11. Ջրի սպառման ծախս 840,000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: |

15/10.10



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ներքին հարդարման աշխատանքներ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:<br>2. Խոհանոցի համար կահույք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>3. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>4. Նկարչական արհեստանոցի համար կահույք 1,300,000.00 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>5. Խեցեգործության արհեստանոցի համար կահույք, 1,200,000.00 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>6. Փայտամշակման արհեստանոցի կահույք և կահույքի հումք 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):<br>7. Խոհանոցի համար էլեկտրական սարքավորումներ, սպասք, տնտեսական ապրանքներ 2,000,000.00 (երկու միլիոն) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>8. Ձեռագործ աշխատանքների արհեստանոցի էլեկտրական և այլ սարքեր և գործիքներ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>9. Նկարչական և խեցեգործական արհեստանոցի համար վրձիններ, ներկեր, նյութեր, գլազուր, կավ և այլն 848,000.00 (ութ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, որը ձեռք է բերվելու ՀՀ-ից<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից) |

15/10.10

| | | |
|---|---|---|
| | | 10. Փայտամշակման արհեստանոցի սարքավորումներ 450,000.00(չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը ներմուծվելու է:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>11. էլեկտրաէներգիայի ծախս 6,000,000.00 (վեց միլիոն) ՀՀ դրամ<br>12.«Արմենթել» ՓԲԸ հանրային էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս 1,200 000 (Մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ տարեկան 57,600.00 (Հիսունյոթ հազար վեց հարյուր) էլեկտրոնային հաղորդակցության գծով ծախս և տարեկան կտրվածքով 62,400.00 (Վաթսուներկու հազար չորս հարյուր)) ՀՀ դրամ հեռախոսակապի ծառայությունների գծով ծախս:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից)<br>13. Գազաֆիկացում, սպասարկում 1,594,000.00 մեկ միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ, որից՝ գազի կաթսա - 844,000 (ութ հարյուր քառասունչորս հազար), գազաֆիկացում - 350,000 (երեք հայուր հիսուն հազար) դրամ, գազի սպասարկման վճար տարեկան - 40,000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):<br>14.Անվտանգության համակարգ՝ տարեկան սպասարկումով 908,000 (Ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ՝ որից տեղադրում՝ 368,000 (Երեք հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ և տարեկան սպասարկում 54,000 (հիսունչորս հազար) ՀՀ դրամ:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):<br>15. Մինիբուսի ձեռքբերում 2,256,000 (երկու միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):<br>16. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորումներ 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ*<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):<br>*(Այս ծախսը ներառված է նաև ծրագրի 11-րդ կետում:)<br>17. Գազի տարեկան սպառման ծախս մոտավորապես 770,000.00 (յոթ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ և գազի հաշվիչ 45,000 |



| | | |
|---|---|---|
| | | ( քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից):<br>18. Ջրի սպառման ծախս տարեկան մոտավորապես 84,000.00 (ութսունչորս հազար) ՀՀ դրամ:<br>(Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. Ադմինիստրատցիայի սենյակի համար կահույք և տեխնիկական սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնություններից): |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սոցիալական Ապահովման Նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| 13. | Ծրագրի [illegible]մամբ վերահ[illegible]պարագրությունը | «Մայրի» ՀԿ հոգաբարձուների խորհուրդ, BMZ Հիմնադրամ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1268 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ**
**«ԳԱՐԵԳԻՆ Ա» ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 07/80-2/37553-15 և նոյեմբերի 11-ի N 06/3-3/37224-15 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 02/14/14665-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 21,972,000 դրամ արժողությամբ «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռայվերտի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2015 թվականի հուլիսի 15-ին կնքված՝ N 05Գ/015 (2015 թվականի հոկտեմբերի 14-ի կնքված համաձայնագիր թիվ 1 և 2015 թվականի հոկտեմբերի 10-ի կնքված համաձայնագիր թիվ 2) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեխանիկական մեխանիզմով վարագույրների ձեռքբերում՝ 21,972,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«24» նոյեմբեր 2015 թ.

**«Գարեգին Ա» կրթական կենտրոնի կահավորում**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնը ապահովել վարագույրներով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 21,972,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 15 նոյեմբեր 2015թ. – 27 ապրիլ 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնը ապահովել վարագույրներով՝ 21,972,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Ռայվերտի»ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Տ. Մեծի 69, շին. 27, ՀՎՀՀ 00801721)՝ պայմանագիր կնքված 15.07.2015թ.: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 15 նոյեմբեր 2015թ. – 27 ապրիլ 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնը ապահովել վարագույրներով՝ 21,972,000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է ֆինանսական հաշվետվություն՝ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի [illegible] և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1269 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38080-15 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/38044-15 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 1/2/3/1-1/6065-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Adibekian Family Foundation for Advancement (AFFA) a.s.b.l հիմնադրամի միջոցներով, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքապետարանի հայցեով ստացված բեռի (արհեստական բազմամյա օգտագործման եղևնի համալրված լուսային էլեմենտներով, մեկ հատ, 2,300 կգ ընդհանուր քաշով, 50,070 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 12,770 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Եղևնին նախատեսվում է տեղադրել Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակում Ամանորյա միջոցառումների կազմակերպման համար:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքապետարանին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին և Մասիսի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1270 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38101-15 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/37812-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (935 տեղ, 22,961 կգ ընդհանուր քաշով, 38,912.89 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՍՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**7 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1271 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/38374-15 և դեկտեմբերի 7-ի N 06/3-3/38571-15 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 101/104.3.2/5213-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Սևակ Սեյրանի Պողոսյանի (ծնված՝ 27.09.1990թ., անձնագիր՝ AH0398048) միջոցներով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի հասցեով ստացված Автогрейдер ДЗ-180А-ի (1999 թվականի արտադրության, 85,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 97,000 ռուսական ռուբլի, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Տեխնիկան օգտագործվելու է համայնքի ճանապարհների հարթեցման, ձյունամաքրման և այլ շինարարական, բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1272 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի դեկտեմբերի 3-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված գեներատորը (2,526 կգ ընդհանուր քաշով, 28,478 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 943,700 դրամ, ՄԾՓ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1273-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-912-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N AC-184-15 և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/36840-15 ու նոյեմբերի 23-ի N 06/3-3/36348-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի կանխարգելումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 60 գյուղական համայնքներում» ծրագրի մասին» N Մ-912-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «175,500» թիվը փոխարինել «214,625» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն Գագիկ Տարասյանի կողմից
«17» նոյեմբերի, 2015թ.

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ–ի կանխարգելումը ՀՀ Շիրակի մարզի գյուղական համայնքներում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Շիրակի մարզի 60 գյուղական համայնքների բնանկարներում շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածման կանխարգելումը՝ իրազեկվածության բարձրացման և անվճար, անանուն հետազոտման հնարավորություն ընձեռնելու միջոցով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում,օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ավստրիայի Զարգացման Գործակալություն<br>Caritas Austria, Zelinkagasse2,1010 Vienna<br>Albrechtslreithgasse 19-21, A-1160 Vienna |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ<br>Հասցե՝ ք.Գյումրի,Հ.Սարգսյան փ, 3-րդ նրբանցք,տուն 3<br>ՀՎՀՀ 05514397 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզի 60 գյուղ: Ամեն տարի ընդգրկվելու է 20 գյուղ:<br>Առաջին տարի՝ Շիրակի մարզի Արփենի, Թորոսգյուղ, Ցողամարգ, Կրասար, Ձորակաբյուր, Փոքր Սեպասար, Մեծ Սեպասար,Ղազանչի, Թավշուտ, Սիզավետ, Բավրա, Աշոցք, Ողջի,Մեղրաշատ, Բյուրակն, Գտաշեն, Արեգնադեմ, Ամասիա, Հովտուն,Հողմիկ համայնքները:<br>Երկրորդ տարի՝ Անիի և Արթիկի տարածաշրջանների 20 գյուղ:<br>Երրորդ տարի՝ Ախուրյանի տարածաշրջանի 20 գյուղ:<br>Բնագավառը՝ առողջապահություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքն է 214.625 եվրոյին համարժեք դրամ, որից՝<br>1-ին տարվա համար նախատեսված է 73750 եվրոյին համարժեք դրամ,<br>2-րդ տարվա համար՝ 50 875 եվրոյին համարժեք դրամ և<br>3րդ տարվա համար՝ 90 000 եվրոյին համարժեք դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողի թիվն առաջին տարին կազմում է 5րդ կետում նշված 20 գյուղերի 3600 բնակիչ:<br>Երկրորդ տարին կկազմի է մոտավորապես 4000 բնակիչ:<br>Երրորդ տարին կկազմի մոտավորապես 4000 բնակիչ: |

15/114

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 40 ամիս<br>Սկիզբը՝ 01.09.12<br>Ավարտը՝ 31.12.15. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նպատակն է Շիրակի մարզի 60 գյուղական համայնքների բնակչության շրջանում ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարածման կանխարգելումը՝ իրազեկության բարձրացման և անվճար, անանուն հետազոտման հնարավորություն ընձեռնելու միջոցով:<br>Ծրագրի նպատակն է խթանել անվտանգ վարքագիծ համայնքի անդամների և հատկապես միգրանտների և նրանց ընտանիքների շրջանում՝ կանխարգելիչ և իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումների միջոցով, համագործակցելով տվյալ համայնքների գյուղապետերի և եկեղեցու հոգևոր առաջնորդների հետ: Ծրագրի տևողությունը 36 ամիս է, ամեն տարի ընդգրկելով 20 գյուղ:<br>Միջոցառումներ ուղղված ծրագրի իրականացմանը՝<br>1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում ծրագիրն իրականացնող թիմի,համայնքների համակարգողների և տեղի հոգևոր հայրերի կարողությունների զարգացում՝ դասընթացների,սեմինար վարժանքների, քննարկումների և փորձի փոխանակման միջոցով : Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 75 616 եվրոյին համարժեք դրամ: /2012 նոյեմբեր- 2014 նոյեմբեր /<br>2. Գյուղական համայնքի բնակչության տարբեր խավերի, մասնավորապես գյուղական բնակավայրերի տեղաշարժվող բնակչության և նրանց ընտանիքների անդամներ շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացում: Միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 39 842 եվրոյին համարժեք դրամ: /2012 նոյեմբեր- 2015 օգոստոս/<br>3. Անվճար, անանուն հետազոտության տրամադրում թիրախ համայնքների բնակիչներին: Միջոցառման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 60 042 եվրոյին համարժեք դրամ: /2012 նոյեմբեր- 2015 դեկտեմբեր/<br>4. Շտապ օգնության մեքենաների, բժշկական պարագաների և սարքավորումների ներմուծում: Նախատեսվում է ներմուծել 2 մեքենա, էխոգրաֆ և բժշկական պարագաներ: Միջոցառումների համար անհրաժեշտ է 39 125 եվրոյին համարժեք դրամ: /2015 հոկտեմբեր- 2015 դեկտեմբեր/<br>Ծրագրի արժեքը կազմում է 214.625 եվրոյին համարժեք դրամ: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | *Մարդկային ռեսուրսներ՝ - 42,300* եվրոյին համարժեք դրամ<br>*Մասնագիտական թիմ՝*<br>~ Համայնքներում ծրագրային գործողություններն իրականացնող մասնագիտական թիմի համար նախատեսված ծախս – 18000 եվրոյին համարժեք դրամ<br>*Հետևյալ նյութական ռեսուրսներ ձեռք բերում՝*<br>~ դյուրակիր համակարգիչ և պրոյեկտոր - 2500 եվրոյին համարժեք դրամ<br>~ Chevrollete Niva մակնիշի ավտոմեքենա - 14 000 եվրոյին համարժեք դրամ /ծրագրի ավարտից հետո մեքենան կծառայի «Հայկական Կարիտաս» կազմակերպությանը՝ նմանատիպ բարեգործական ծրագրերի համար/<br>~ 600 շահառուի արյան հետազոտություն - 15 000 եվրոյին համարժեք դրամ<br>~ համայնքներում օգտագործվող սարքավորումների վերանորոգում - 2000 եվրոյին համարժեք դրամ<br>*Դասընթացներ/միջոցառումներ՝*<br>~ համայնքներում կազմակերպվող դասընթացներ/միջոցառումներ – 5400 եվրոյին համարժեք դրամ<br>~ համայնքների 120 համակարգողների համար անցկացվելիք արտագնա դասընթացներ – 9000 եվրոյին համարժեք դրամ<br>~ 60 հոգևոր հայրերի համար անցկացվելիք արտագնա դասընթացներ – 4500 եվրոյին համարժեք դրամ<br>*Ուսուցողական այց շահառուների համար՝*<br>~ ավիատոմսեր/տրանսպորտային ծախսեր- 1800 եվրոյին համարժեք դրամ<br>~ գիշերակացի համար նախատեսված ծախս – 1575 եվրոյին համարժեք դրամ<br>*Այլ ծախսեր՝*<br>~ ծրագրի գործողությունների, դասընթացների և վարժանքների կազմակերպում – 7290 եվրոյին համարժեք դրամ<br>~ համայնքներում շահագործվող ավտոմեքենայի վառելանյութի , պահեստամասերի ծախս - 19 800 եվրոյին համարժեք դրամ<br>~ համայնքի վրա ծրագրի ազդեցության ամենամյա գնահատման և ֆինանսական ազդեցության գնահատման ծախս – 12 334.85 եվրոյին համարժեք դրամ<br>~ Ֆիլմի նկարահանում – 1500 եվրոյին համարժեք դրամ<br>~ Ձեռնարկների, բուկլետների և պաստառների տպագրություն - 3000 եվրոյին համարժեք դրամ<br>~ Պահուստային ֆոնդ - 4 031,43 եվրոյին համարժեք դրամ,որը միայն |

| | | |
|---|---|---|
| | | կարող է օգտագործվել դոնորի հատուկ թույլտվությամբ լրացուցիչ միջոցառումների /լրացուցիչ արյան և այլ բժշկական հետազոտությունների տրամադրման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների/ համար:<br>~ Ծրագրի ադմինիստրատիվ ծախսեր - 10 968.72 եվրոյին համարժեք դրամ<br>*Բեռների ներմուծում`*<br>~ 2 շտապ օգնության մեքենայի ներմուծում – 30 000 եվրոյին համարժեք դրամ /ծրագրի ավարտից հետո մեքենան կծառայի «Հայկական Կարիտաս» կազմակերպությանը` նմանատիպ բարեգործական ծրագրերի համար/<br>~ բժշկական պարագաների և սարքավորումների ներմուծում – 4 217 եվրոյին համարժեք դրամ<br>~ տրանսպորտային ծախսեր – 4908 եվրոյին համարժեք դրամ<br><br>Ընդամենը` 214 625 եվրոյին համարժեք դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսերը կազմում են 24 968.72 եվրոյին համարժեք դրամ:<br>Գրասենյակային ադմինիստրատիվ ծախսեր - 10 968.72 եվրոյին համարժեք դրամ<br>Chevrollete Niva մակնիշի ավտոմեքենա - 14 000 եվրոյին համարժեք դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Առողջապահության Նախարարություն, Շիրակի մարզպետարան:<br>Անմիջական համագործակցություն կիրականացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՄԻԱՎ/ ՁԻԱՀի Ազգային Կենտրոնի, Գյումրիի «Արյան Փոխներարկման Կայան» ՓԲԸ –ի , Հայ Կաթողիկե և Առաքելական առաջնորդարանների, ինչպես նաև 60 գյուղերի գյուղապետարանների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կրելու է պարբերական բնույթ և կատարվելու է Ավստրիայի Զարգացման Գործակալության, Կարիտաս Ավստրիայի կազմակերպության և «Հայկական Կարիտաս» ԲՀԿ –ի Վարչական Խորհրդի կողմից: Վերահսկումը կատարվելու է այցերի, զեկուցագրերի և վերստուգիչ միջոցառումների միջոցով:<br>Մարզպետարանը ու համայնքապետարանն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները:<br>Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1274- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N Մ-1338-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 17-ի N 07/80-2/35591-15 ու նոյեմբերի 18-ի N 06/3-4/35757-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-1338-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա» Հյուրանոցային Համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2015 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված N 1151974 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընթրիքի կազմակերպում՝ 3,455,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/11.3

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1275-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 1/08.2/12405-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 17-ի N 07/80-2/35610-15 ու նոյեմբերի 19-ի N 06/3-3/35829-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ
Խ.Աղաբեկյան
<<30>> հոկտեմբեր 2015թ.

## ԾՐԱԳԻՐ

**ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Արփի լիճ» ազգային պարկում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենհոֆշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | Ծրագրի կատարող | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզ, գ.Բերդաշեն<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | Ծրագրի բյուջեն | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ **43 485,1 հազ.դրամ**): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ, Շիրակի մարզ, գ.Բերդաշեն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 05.04.2015թ. – 31.12.2015թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.03.2013թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի ծրագիր՝ 05.04.2015թ. – 31.12.2015թ. – **43 485,1** հազ.դրամ, այդ թվում՝ |

1. Գրասենյակային նյութերի ձեռքբերում (2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակ) - **452,1 հազ.դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ.դրամ) |
|---|---|---|---|
| Գրասենյակային պիտույքներ | հատ | 104 | 13.0 |
| Տոներային քարթրիջ | հատ | 7 | 140.0 |
| Նոթատետր | հատ | 24 | 6.0 |
| Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն | հատ | 16 | 2.4 |
| Սոսնձամատիտ | հատ | 20 | 4.0 |
| Գծանշիչ | հատ | 20 | 5.0 |
| Թղթադարակ հարկերով, պլաստմասե | հատ | 4 | 16.0 |
| Կարիչի մետաղալարե կապեր | տուփ | 26 | 2.5 |
| Պոլիմերային թաղանթ (ֆայլ) | հատ | 1000 | 10.0 |
| Թղթապանակ | հատ | 60 | 33.0 |
| Դակիչ քանոնով | հատ | 3 | 10.5 |
| Ապակարիչ | հատ | 6 | 1.5 |
| Թուղթ A4 ֆորմատի | տուփ | 60 | 150.0 |
| Բացիկներ | հատ | 40 | 24.0 |
| Նամակի ծրար A5 ձևաչափի | հատ | 60 | 1.8 |
| Ինչնակպչուն ժապավեն | հատ | 50 | 4.0 |
| Թուղթ նշումների համար | տուփ | 50 | 10.0 |
| Ֆլեշ հիշողություն, 4GB | հատ | 4 | 10.4 |
| Գրասենյակային գիրք | հատ | 5 | 4.0 |
| Ամրակ մետաղյա | տուփ | 20 | 2.4 |
| Սեղմակ | հատ | 35 | 1.6 |

2. Գյուղատնտեսական ապրանքներ (3-4-րդ եռամսյակ) – **810,0 հազ.դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Անասնակեր /գարի/ | կգ. | 4500 | 810.0 |

3. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակ) –
**4978,4 հազ.դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Բենզին <Ռեգուլյար> | լիտր | 7500,0 | 2925.0 |
| Դիզելային վառելիք/ամառային/ | լիտր | 1000,0 | 390.0 |
| Դիզելային վառելիք/ձմեռային/ | լիտր | 1000,0 | 430.0 |
| Շարժիչի յուղ | լիտր | 170,0 | 525.0 |
| Արգելակի հեղուկ | լիտր | 84.0 | 92.4 |
| Հակասառիչ հեղուկ /անտիֆրիզ/ | լիտր | 80.0 | 96.0 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 8,0 | 520.0 |

4. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (3-րդ, 4-րդ եռամսյակ) **–14500,0 հազ.դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ամենագնաց մեքենաներ | հատ | 2 | 14500.0 |

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 8 575 654 ՀՀ դրամ

| Նկարագրություն | Նախատեսված բյուջե /ՀՀ դրամ/ |
|---|---|
| Ծրագրի հիմնական անձնակազմի աշխատավարձ | 5 583 654.00 |
| ՏԱԿ ՊՈԱԿ-ի գործառնական ծախսեր | 2 992 000.00 |

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ

Նախատեսվում է համագործակցություն՝

- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
- ՀՀ ֆինանսների նախարարության
- ՀՀ առողջապահության նախարարության,
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության
- Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների ենթակայության բժշկական հաստատությունների (պոլիկլինիկաներ, հակատուբերկուլոզային դիսպանսեր:
- Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և այլ միջազգային կազմակերպությունների հետ:

13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարգրությունը

Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝

- ՀՀ առողջապահության նախարարություն և Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբին,
- ՀՀ ֆինանսների նախարարությանը,
- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

Ծրագիրը կազմեց՝
ՀՀ առողջապահության նախարարության
«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ
Հեռ. +37455 44 55 69

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1285- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/37894-15 ու դեկտեմբերի 7-ի N 06/3-3/38744-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N ԱՄ/22.2/13814-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում հսկողություն իրականացնող դաշնային ծառայության (Роспотребнадзор) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Ռոսպոտրեբնադզոր»-ի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև կնքված վարակիչ հիվանդությունների ոլորտում համագործակցության վերաբերյալ պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (թեստ-հավաքածուներ՝ 3 հատ, 15,6 կգ ընդհանուր քաշով, 1,063,960.00 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1286-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1225-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015 թվականի նոյեմբերի 23-ի N 615 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 07/80-2/37275-15 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/37749-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N ԱՄ/22.2/13696-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) N Մ-1225-Ա որոշման 1-ին կետում «30 տեղ» բառերը փոխարինել «31 տեղ», «365 կգ քաշով» բառերը՝ «361 կգ քաշով» և «381,210 հնդկական ռուփի» բառերը՝ «377,034 հնդկական ռուփի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1287- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**
(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 07/80-2/37075-15 ու դեկտեմբերի 1-ի N 06/3-3/37695-15 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N ԱՄ/22.2/13689-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված, դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղ՝ 1 տեղ, 2.1 կգ քաշով, 6,960 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1157-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1288- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N ԱԿ/15/13781-15 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38082-15 ու* դեկտեմբերի 3-ի N 06/3-3/38258-15 *եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» ծրագրի մասին» N Մ-1074-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1157-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505735) 2015 թվականի նոյեմբերի 24-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԳՀ ՇՀԱՊՁԲ-15/4-2015/26 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի գնում՝ 63,777,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**7 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1289-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնեցման թերթը, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված տնկիները (864 տեղ, 21,580 կգ ընդհանուր քաշով, 19,350 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա, 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա և հոկտեմբերի 7-ի N Մ-1109-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1291-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/36793-15 և նոյեմբերի 12-ի N 06/3-3/34846-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 02/14/13955-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10014-15, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 17-ի N 06/18.1/6640-15 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 101/104.3.2/4895-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 495,810,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԱԳ-Էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2015 թվականի նոյեմբերի 3-ին կնքված՝ N 4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 120,065,820 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Ալավերդու քաղաքապետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 11/15)
19 նոյեմբերի 2015թ.

հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

## «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում՝ հաշվի առնելով համայնքում մանկապարտեզի ժամանակակից և հարմարավետ շենքի անհրաժեշտությունը |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Ալավերդի, սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 495,810,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ալավերդու քաղաքային համայնք՝ շինությունն անհատույց հանձնվելու է համայնքին: |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի նոյեմբերի 02-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. հողային աշխատանքների իրականացում - 5,400,000 դրամ,<br>2. շենքի կառուցման և ներքին հարդարման աշխատանքներ - 458,910,000 դրամ,<br>3. տարածքի բարեկարգում և կառուցապատման այլ աշխատանքներ - 31,500,000 դրամ:<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.12.2016թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է շինարարական նյութերի, սարքավորումների, ապրանքների ներմուծման և Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ:.<br>1. «Մագ Էլեկտրոն» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների իրականացում- 120,065,820 դրամ,<br>2. հողային աշխատանքների իրականացում - 1080 խոր. մետր - 5,400,000 դրամ,<br>3. երկաթբետոնե հիմնակմախքի և պատերի կառուցման, հիմքի ջրամեկուսացման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում – 134,688,000 դրամ, որից ամրանների, ամրալարերի և այլ նյութերի ներմուծում – 36,000,000 դրամ<br>4. էլեկտրոնունցման, ջրամատակարարման – ջրահեռացման համակարգերի կառուցում, ջեռուցման համակարգի մոնտաժում, սանհանգույցների կառուցում և դրանց համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում – 81,360,000 դրամ,<br>5. տանիքի ջրամեկուսացման համար նյութերի ձեռք բերում և կառուցման աշխատանքների իրականացում - 1,260 քառ. մետր - 27,450,000 դրամ,<br>6. արտաքին երեսպատման և ներքին հարդարման աշխատանքների իրականացում<br>- գրանիտե, մարմարե, տրավերտինե, բազալտե սալիկների, ներկանյութերի և այլ նյութեր ձեռք բերում – 4,250 քառ. մետր – 30,745,000 դրամ,<br>- հատակների, պատերի կառուցման և հարդարման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերում – 2,700 քառ. մետր – 29,420,000 դրամ<br>7. դռների, պատուհանների, ապակե ֆասադի պատրաստում և տեղադրում 870 քառ.մետր – 35,570,000 դրամ,<br>8. տարածքի բարեկարգում, կառուցապատման այլ աշխատանքների իրականացում - 7,200 քառ. մետր – 20,111,180 դրամ,<br>9. նախագծային աշխատանքների իրականացում – 5,000,000 դրամ,<br>10. ավտոտրանսպորտային ծախսեր – 6,000,000 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Լոռու մարզպետարան, Ալավերդու քաղաքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1292-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 07/80-2/35951-15 և նոյեմբերի 20-ի N 06/3-4/36060-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 23-ի N 02/14/14462-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 20-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10328-15 ու Երևանի քաղաքապետարանի նոյեմբերի 23-ի N 02/34-61200Հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 1,694,372 դրամ ընդհանուր արժեքով «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2015 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված՝ N 100915 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Քանաքեռի 6-րդ փողոցի 4-րդ նրբանցքի 8-րդ տանը կից սանհանգույցի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 774,763 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2015 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված՝ N 131015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Սարկավագի 126/2 հասցեի 21 բնակարանի ջեռուցման համակարգի և մետաղապլաստե



պատուհանի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 919,609 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«11»-ը նոյեմբերի 2015թ.

**«Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին»**
**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Աջակցել երևանաբնակ սոցիալապես անապահով 2 ընտանիքների՝ բարելավելով նրանց բնակարանային պայմանները |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան՝ սոցիալական բնագավառ<br>ք. Երևան, Քանաքեռ 6-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 8 տուն և ք. Երևան, Քանաքեռ, Սարկավագի փողոց, 126/2շենք, թիվ 21 բնակարան |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 1,694,372 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | 1. Սոցիալապես անապահով ընտանիք՝ Սարգսյան Էլմիրա (անձնագիր՝ AH0583212, տրվ. 16.05.2008թ. 007 կողմից, հեռ. 077.78.32.74)<br>2. Սոցիալապես անապահով ընտանիք՝ Խաչիկյան Աննա (անձնագիր՝ AM0875129, տրվ. 19.09.2012թ. 007 կողմից, հեռ. 077.03.84.84) |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2015 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 1. 2015 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2015թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ք. Երևան, Քանաքեռ 6-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 8 տուն հասցեում գտնվող բնակելի տան սանհանգույցի վերանորոգում՝ 774,763 դրամ ընդհանուր արժողությամբ:<br>2. 2015 թվականի հոկտեմբերի 13-ից մինչև 2015թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ք. Երևան, քանաքեռ, Սարկավագի փողոց 126/2 շենք, 21 բնակարանի ջեռուցման համակարգի և մետալոպլաստե պատուհանի տեղադրման աշխատանքներ՝ 919,609 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | 1. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան սանհանգույցի վերանորոգման պայմանագիր, որի արժեքը կազմում է 774,763 դրամ:<br>2. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակարանի ջեռուցման համակարգի և մետալոպլաստե պատուհանի տեղադրման պայմանագիր, որի արժեքը կազմում է 919, 609 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց ՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1293-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴՊՐՈՑԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34967-15 և նոյեմբերի 13-ի N 06/3-3/35064-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 02/14/13953-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 03/07-1/13697-15 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի նոյեմբերի 17-ի N 01/14.2/4358-15եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 3,743,062 դրամ ընդհանուր արժեքով «Դպրոցի բակային տարածքների բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2015 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված՝ N 070915 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Աշտարակ քաղաքի Պերճ Պռոշյանի անվան հիմնական դպրոցի բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 3,743,062 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/7

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբակյանի կողմից

«6»-ը նոյեմբերի 2015թ.

## «Դպրոցի բակային տարածքների բարեկարգում»
## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արագածոտնի մարզ, քաղաք Աշտարակ, Չարենցի 1 հասցեում գտնվող Պերճ Պռոշյանի անվան դպրոցի բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ՝ վարդերի պուրակի, գլխավոր մուտքի դիմացի և հարակից այգիների, կաքսայատանը հարակից այգու ոռոգման համակարգերի կառուցում, վարդերի պուրակի արահետների վերանորոգում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ՝ կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,743,062 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Արագածոտնի մարզ, քաղաք Աշտարակ, Պերճ Պռոշյանի անվան դպրոց<br>Տնօրեն՝ Շուխյան Սամվել, անձնագիր՝ AF0328466, տրվ. 16.06.2001թ. 029 կողմից, հեռ. 095.87.86.33 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 2015 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2015թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Պերճ Պռոշյանի անվան դպրոցի բակային տարածքների բարեկարգում՝ 3,743,062 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Պերճ Պռոշյանի անվան դպրոցի բակային տարածքների բարեկարգման պայմանագիր, որի արժեքը կազմում է 3,743,062 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մարզպետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների ներկայացում Ծրագրային, «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց ՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1294-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 07/80-2/37076-15 և նոյեմբերի 27-ի N 06/3-3/37243-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Նորակառույց հանրապետական հիվանդանոցի համար ձեռք բերված ապրանքների (15 տեղ, 178.92 կգ ընդհանուր քաշով, 496,299.20 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,577.28 ռուսական ռուբլի, բեռի ցանկը կցվում է, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բեռի ցանկ

15/9.11

| ապրանքի անվանում | փաթեթավորում | չ/մ | քանակ | տեղի քանակ | քաշ բրուտտո կգ | գին ՌԴ ռուբլի |
|---|---|---|---|---|---|---|
| ֆիլտրերի կոմպլեկտ W5829-01 | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 11.2 | 3138.66 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5829-05, ֆիլտրերի կոմպլեկտ W5841-01 | ստվարաթղթե տուփ | հատ | 2 | 1 | 23.2 | 4635.38 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5833-00, ֆիլտրերի կոմպլեկտ W5843-00 | ստվարաթղթե տուփ | հատ | 2 | 1 | 12.2 | 3078.24 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5834-00, ֆիլտրերի կոմպլեկտ W5841-05 | ստվարաթղթե տուփ | հատ | 2 | 1 | 29.2 | 3127 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5836-00 | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 8.2 | 922.2 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5836-01 | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 8.2 | 10075.3 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5838-00 | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 8.2 | 1539.12 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5838-01 | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 8.7 | 17456.08 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5839-01 | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 8.7 | 3138.66 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5839-04, ֆիլտրերի կոմպլեկտ W5839-05 | ստվարաթղթե տուփ | հատ | 2 | 1 | 8.7 | 36470.36 |
| ֆիլտրերի կոմպլեկտ W5840-00, ֆիլտրերի կոմպլեկտ W5840-01 | ստվարաթղթե տուփ | հատ | 2 | 1 | 8.7 | 18995.2 |
| համակարգչային ռադիոգրաֆ-իայի բաղկացուցիչ Regius sigma, Regius sigma 2.պլաստինա 14x17 դույմ Regius sigma ֆորմատի | | | 1 | | | |
| համակարգչային ռադիոգրաֆ-իայի բաղկացուցիչ Regius sigma, Regius sigma 2.կասետ-ներ 14x17 դույմ Regius sigma ֆորմատի | | | | | | |
| համակարգչային ռադիոգրաֆ-իայի բաղկացուցիչ Regius sigma, Regius sigma 2.պլաս-տինաներ 24x30 սմ Regius sigma ֆորմատի համակարգ-չային ռադիոգրաֆիայի համար | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| համակարգչային ռադիոգրաֆ-իայի բաղկացուցիչ Regius sigma, Regius sigma 2.կասետներ 24x30 սմ Regius sigma ֆորմատի համակարգ-չային ռադիոգրաֆիայի համար | | | 1 | | | |
| համակարգչային ռադիո-գրաֆիայի պարագաներ Regius sigma, Regius sigma 2., պլաստինաներ համակարգ-չային ռադիոգրաֆիայի Regius sigma 18x24 սմ | | | 1 | | | |
| համակարգչային ռադիո-գրաֆիայի պարագաներ Regius sigma, Regius sigma 2., կասետներ համակարգչային ռադիոգրաֆիայի Regius sigma 18x24 սմ | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 18.6 | 144443.31 |
| ռենտգեն պլիոնկա բժշկական SD-Q 14 x 17 դյուիմ 125 թերթ/տուփ, 1 տուփ/ 4 փաթեթ, Konica Minoita Medical & Graphik | | | 1 | | | |
| ռենտգեն պլիոնկա բժշկական SD-Q 10 x 12 դյուիմ 125 թերթ/տուփ, 1 տուփ/ 4 փաթեթ, Konica Minoita Medical & Graphik | | | 1 | | | |
| ռենտգեն պլիոնկա բժշկական SD-Q 8 x 10 դյուիմ 125 թերթ/տուփ, 1 տուփ/ 4 փաթեթ, Konica Minoita Medical & Graphik | | | 1 | | | |
| պոմպ 18լ/ժամ, 24 Վատտ Smart, մաքրող սարքավորում 3 պոմպերի համար/կոլեկտոր / | ստվարաթղթե տուփ | հատ | 2 | 1 | 3.2 | 38806.78 |
| Մինի ATC Panasonic KX-TDE100RU | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 10.82 | 46820.56 |
| բացազատման քարտ Panasonic KX - TDE 0111 XJ | | | 1 | | | 44407.71 |
| բացազատման քարտ Panasonic KX - TDA 0170 XJ | | | 1 | | | 14709.75 |
| բացազատման քարտ Panasonic KX - TDA 0174XJ | | | 3 | | | 49578.36 |
| բացազատման քարտ Panasonic KX - TDA 0180XJ | ստվարաթղթե տուփ | հատ | 1 | 1 | 11.1 | 12689.46 |
| բացազատման քարտ Panasonic KX - TDA 0290CJ | | | 1 | | | 32144.95 |
| Միստեմային հեռախոս Panasonic KX - DT 343 RU | | | 1 | | | 7202.62 |
| ամֆենոլային մալուխ 3 մետր | | | 5 | | | 2919.5 |
| Ընդամենը | | | | 15 | 178.92 | 496299.2 |

15/9.11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1295-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/36837-15 և նոյեմբերի 27-ի N 0/3-3/37274-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված 14.512 խոր. մետր նրբատախտակը (16 տեղ, 9,887.3 կգ ընդհանուր քաշով, 289,421.45 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 142,422.72 ռուսական ռուբլի, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1296-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-133-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/36836-15 և նոյեմբերի 27-ի N 06/3-4/37242-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված աթոռները (մեկ տեղ, 540 կգ ընդհանուր քաշով, 4,650 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-133-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1297-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 17-ի N 07/80-2/35408-15 և նոյեմբերի 13-ի N 06/3-3/35065-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 9-րդ կետում «կազմակերպչական ծախսեր – 6,000,000 դրամ» բառերը փոխարինել «ավտոտրանսպորտային ծախսեր – 6,000,000 դրամ» բառերով.

2) 11-րդ կետում «Նախատեսվող կազմակերպչական ծախսերը կկազմեն 6,000,000 դրամ այդ թվում բեռները Երևանից – Ստեփանավան ավտոտրանսպորտային միջոցներով տեղափոխելու ծախսերը:» բառերը փոխարինել «Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում» բառերով:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«Ջի ընդ Էյ Ինքորփորեյշն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01839901) 2015 թվականի նոյեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե սալիկների, աստիճանների, աստիճանատակերի և տումբաների ձեռքբերում՝ 4,832,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1298-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-834-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/36823-15 և նոյեմբերի 26-ի N 06/3-3/36807-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի նոյեմբերի 17-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» N Մ-834-Ա որոշման 1-ին կետում «125,487,660 դրամի չափով» բառերը փոխարինել «94,938,888 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1299-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 07/80-2/37079-15 և նոյեմբերի 23-ի N 06/3-3/36351-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի նոյեմբերի 16-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա, օգոստոսի 28-ի N Մ-911-Ա և հոկտեմբերի 2-ի N Մ-1051-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «2015 թվականի նոյեմբերին» բառերը փոխարինել «2016 թվականի ապրիլի 30-ին» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**8 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1300-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին)**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱ-ԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 7-ի N 07/80-2/38540-15 և դեկտեմբերի 7-ի N 06/3-3/38639-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 1/06/1544-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Դահուկային սպորտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (5 տեղ, 90.5 կգ ընդհանուր քաշով, 2,256.20 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1301-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-134-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 07/80-2/37281-15 և նոյեմբերի 27-ի N 06/3-3/37190-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖՐ/ԱեՄ-1-2/10695-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ **«Դիակոնիա»** բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մակարոնային արտադրանքը (2,000 տեղ, 20,600 կգ ընդհանուր քաշով, 43,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բեռի քաշխման ցանկը կցվում է) և բուսական յուղը (2,160 տեղ, 20,217.6 կգ ընդհանուր քաշով, 62,156.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ, բեռի քաշխման ցանկը կցվում է) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող **«Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը»** ծրագրի մասին» N Մ-134-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

հ/վոյս P-D15111501 15.11.2015

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | | Շահառուների քանակը | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մակարոնային արտադրանք | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 341 | 737 |
| | | | Այգուտ | 164 | 757 | 1.634 |
| | | | Մարտունի | 73 | 337 | 727 |
| | | | Դպրաբակ | 81 | 374 | 807 |
| | | | Վահան | 188 | 867 | 1.873 |
| | | | Կալավան | 23 | 106 | 229 |
| | | | Բարեպատ | 6 | 28 | 60 |
| | | | Ջրավանք | 31 | 143 | 309 |
| | | | Անտառամեջ | 22 | 101 | 219 |
| | | | Գավառ | 61 | 281 | 608 |
| | | | Թթուջուր | 81 | 374 | 807 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 235 | 508 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 78 | 169 |
| | | | Արտաշատ | 16 | 74 | 159 |
| | | | Գետազատ | 39 | 180 | 389 |
| | | | Մրգանուշ | 16 | 74 | 159 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 60 | 130 |
| | | | Սևաբերդ | 41 | 189 | 409 |
| | | | Ջրառատ | 18 | 83 | 179 |
| | | | Աբովյան | 38 | 175 | 379 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 221 | 478 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 69 | 149 |
| | | | Իջևան | 18 | 83 | 179 |
| | | Երևան | | 3201 | 14770 | 31.898 |
| | Ընդամենը | | | 4335 | 20000 | 43.200 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* Բ. Զամբազյան

## Բեռի բաշխման ցանկ

ինվոյս P-D19111501 19.11.2015

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բուսական յուղ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 299 | 1.061 |
| | | | Այգուտ | 164 | 662 | 2.351 |
| | | | Մարտունի | 73 | 295 | 1.047 |
| | | | Դպրաբակ | 81 | 327 | 1.161 |
| | | | Վահան | 188 | 759 | 2.696 |
| | | | Կալավան | 23 | 93 | 330 |
| | | | Բարեպատ | 6 | 24 | 86 |
| | | | Զորավանք | 31 | 125 | 444 |
| | | | Անտառամեջ | 22 | 89 | 315 |
| | | | Գավառ | 61 | 246 | 875 |
| | | | Թթուջուր | 81 | 327 | 1.161 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 206 | 731 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 69 | 244 |
| | | | Արտաշատ | 16 | 65 | 229 |
| | | | Գետազատ | 39 | 157 | 559 |
| | | | Մրգանուշ | 16 | 65 | 229 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 52 | 186 |
| | | | Սևաբերդ | 41 | 165 | 588 |
| | | | Զորաղբյուր | 18 | 73 | 258 |
| | | | Արզական | 38 | 153 | 545 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 194 | 688 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 61 | 215 |
| | | | Իջևան | 18 | 73 | 258 |
| | | Երևան | 3201 | | 12917 | 45.896 |
| | Ընդամենը | | 4335 | | 17496 | 62156.8 |

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն Հ. Ղազարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1302-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/37892-15 և նոյեմբերի 27-ի N 06/3-3/37226-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1198-Ա և 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1297-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեհրաբյան և Որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239171) 2015 թվականի նոյեմբերի 13-ին կնքված՝ N 11-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական ապրանքների ձեռքբերում՝ 5,496,150 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1303-Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1253-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/37827-15 և նոյեմբերի 27-ի N 06/3-3/37222-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սպիտակ քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1253-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2015 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ N 131-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդ ցեմենտի ձեռքբերում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1304-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/38310-15 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/38040-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռեդ-փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2015 թվականի նոյեմբերի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 596,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1305-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N Մ-1167-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38005-15 և դեկտեմբերի 1-ի N 06/3-4/37714-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Բանանց» ֆուտբոլային ակումբի խաղադաշտի վերակառուցում» N Մ-1167-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Edel Grass» ՍՊԸ-ի հետ (Fabrieksstraat 13, 8281 BW Genemuiden, the Netherlands) 2015 թվականի նոյեմբերի 5-ին կնքված՝ N Rev 003 պայմանագրի N Nbr 62090430ED-Rev003 նախահաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 18,815 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1306-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-277-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/37893-15 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/37619-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի նոյեմբերի 19-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» N Մ-277-Ա որոշման 1-ին կետում «342,206,807 դրամի չափով» բառերը փոխարինել «208,776,736 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1307-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/38446-15 և դեկտեմբերի 7-ի N 06/3-3/38562-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված լարերի ուղեկալների պլաստիկ դետալները (5 տեղ, 69 կգ ընդհանուր քաշով, 1,905 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 855 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառա-վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղ-ծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն:

ՆԱԽԱԳԱՀ	Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1308-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին)**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/37447-15 և դեկտեմբերի 7-ի N 06/3-3/38642-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված գրասենյակային աթոռները (18 հատ՝ մեկ տեղ, 126 կգ ընդհանուր քաշով, 1,170 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 194,000 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1309 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 17-ի N 07/80-2/35617-15 և նոյեմբերի 19-ի N 06/3-3/35941-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 18-ի N ԱՄ/22.2/13301-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի մանկական համալսարանական հիվանդանոցի պրոֆեսոր Մարկուս Վեյսի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված միանվագ օգտագործման բժշկական պարագաները (երակային և զարկերակային կաթետրներ, շնչառական խողովակներ, 2 տեղ, 6.167 կգ ընդհանուր քաշով, 100 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 127 շվեյցարական ֆրանկ, ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1310 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/36945-15 և նոյեմբերի 27-ի N 06/3-3/37273-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N ԱՄ/22.2/13697-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամ - Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված լողական սարքերն իրենց բաղադրիչներով (1 տեղ, 14.5 կգ ընդհանուր քաշով, 1,401.72 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 202.3 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1311 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒ-ԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 07/80-2/37461-15 և դեկտեմբերի 2-ի N 6/3-3/38048-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ձայնային համակարգի ապրանքները (55.70 կգ ընդհանուր քաշով, 4,360 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, որից փոխադրման ծախսերը կազմել են 780 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1312 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒ-ԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/36486-15 և նոյեմբերի 25-ի N 6/3-3/36637-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված երկու խմբաքանակ սառեցման համակարգի ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) «Новые спортивные технологии» ՍՊԸ-ից՝ 41,850 եվրո արժողությամբ.

2)«Новые спортивные технологии» ՍՊԸ-ից՝ 2,435,300 ռուսական ռուբլի արժողությամբ:

Ապրանքների ընդհանուր քաշը կազմում է 18,941 կգ:

Ընդհանուր փոխադրման և այլ ծախսերը կազմել են 2,422,650 դրամ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1313 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1197-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38094-15 և դեկտեմբերի 1-ի N 06/3-4/37790-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-1197-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետալ-Դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2015 թվականի նոյեմբերի 23-ին կնքված N 56 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում չժանգոտվող մետաղից բռնակների պատրաստում և տեղադրում՝ 380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1314 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 17-ի N 07/80-2/35949-15 և նոյեմբերի 18-ի N 06/3-3/35682-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և հոկտեմբերի 23-ի N Մ-1135-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 49/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված ապրանքների ձեռքբերում՝ 1,611,130 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2015 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 50/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հավելվածում նշված վերհան ամբարձիչի ձեռքբերում՝ 4,355,298 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1315 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/36618-15 և N 06/3-3/36573-15 եզրակացությունները և հաշվի առնելով «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի նոյեմբերի 17-ի N 92 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա, օգոստոսի 28-ի N Մ-888-Ա և հոկտեմբերի 23-ի N Մ-1135-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 10-րդ կետի 4.4-րդ ենթակետերում «2,500,000 դրամ» բառերը փոխարինել «7,500,000 դրամ» բառերով.

2) 10-րդ կետի 4.5-րդ ենթակետերում «23,000,000 դրամ» բառերը փոխարինել «18,000,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սատրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00068497) 2015 թվականի նոյեմբերի 16-ին կնքված N 55 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձայնակարգավորման աշխատանքների իրականացում՝ 7,560,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1316 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34886-15 ու նոյեմբերի 13-ի N 06/3-3/35086-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10015-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված ծածկոցները (14 տեղ, 1,284 կգ ընդհանուր քաշով, 10,809 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից՝ փոխադրման ծախսերը կազմել են 3,279 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» N Մ-010-Ա (2015 թվականի օգոստոսի 12-ի N Մ-843-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի**

15/5.17

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)**

Կոնտեյների համարն է՝ DRYU 266592-3: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 10809.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 3279.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 1284.00 կգ, տեղերի քանակը 14:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

15/9.17

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 400 | հատ | Ծածկոց | | **861.27** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 620 | հատ | Ծածկոց | | **1335.03** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեր-Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 1284.00 | 10809.00 | |

02528755 ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ WV ARMENIAN BRANCH

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1317 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 07/80-2/37463-15 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/38045-15 եզրակացությունները և հաշվի առնելով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2015 թվականի նոյեմբերի 24-ի N 4024 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի N Մ-010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» N Մ-1189-Ա որոշման 1-ին կետում «3,299.60 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «3,880 կգ ընդհանուր քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1318 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 07/80-2/37458-15 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/38041-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N ԱՄ/22.2/13817-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (օգտագործված ներարկիչների համար նախատեսված տուփեր, 4 տեղ, 1,430 կգ ընդհանուր քաշով, 2,326.18 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 45,159.40 դանիական կրոն, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1319 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34977-15 և նոյեմբերի 16-ի N 06/3-3/35262-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N ԱՄ/22.2/13024-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ախտորոշիչ թեստեր՝ 1տեղ, 18.5 կգ ընդհանուր քաշով, 4,925 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 309.05 շվեյցարական ֆրանկ, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1320 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 07/80-2/37462-15 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/38046-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N ԱՄ/22.2/13816-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (պատվաստանյութ՝ իր լուծիչով, 37 տեղ, 399.5 կգ ընդհանուր քաշով, 178,750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1354.41 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1321 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34888-15 և նոյեմբերի 16-ի N 06/3-3/35274-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 11-ի N ԱՄ/22.2/13025-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ախտորոշիչ թեստեր՝ 1տեղ, 3.1 կգ ընդհանուր քաշով, 1,056.02 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 78.95 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1322 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 20-ի N 07/80-2/35985-15 և նոյեմբերի 25-ի N 06/3-3/36644-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24-ի N ԱՄ/22.2/13582-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս. Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (դեղ և բժշկական պարագաներ՝ 2 տեղ, 50 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են քրոնիկ փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1323 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 23-ի N 07/80-2/36117-15 և նոյեմբերի 25-ի N 06/3-3/36645-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24-ի N ԱՄ/22.2/13579-15 եզրակացություն-ները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մեծ Բրիտանիայի «BirthLink» բարեգործական կազմակերպության կողմից «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (բժշկական սարքավորումներ՝ 2 հատ արհեստական շնչառության սարք և 4 հատ օդի խոնավացուցիչ, 53 կգ ընդհանուր քաշով, 12,000 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 551.82 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստերլինգ, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1324 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24–ի N 07/80-2/36528-15 և N 06/3-3/36571-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24–ի N ԱՄ/22.2/13584-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Իտալիայի «Arcobaleno-Onlus» ասոցիացիայի կողմից «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (4,126 կգ ընդհանուր քաշով, 56,500 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,345 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՑԱՆԿ

| Հ/հ | Նկարագրությունը | Միավորը | Քանակը | Միավորի գինը | % զեղչ | Գումարը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Չժանգոտվող պողպատից պատի վահանակների հավաքածու, ներկված – գույն SIMIL AB 847՝ SOCLED-ի հավաքածուի, վերին պարագծի հավաքածուի, ենթակառուցվածքի հավաքածուի, հենաշրջանակի հավաքածուի հետ՝ կազմված H015PNA00-H015SRA00-H015SRD00-H015SRC00-H015SRB00-ից | հավաքածու | 1 | 19.920.00 € | | 19.920.00 € |
| 2. | Չժանգոտվող պողպատից պատի վահանակների համար անկյունային հենաշրջանակի հավաքածու՝ կազմված H015SRT00-ից | հավաքածու | 1 | 2.960.00 € | | 2.960.00 € |
| 3. | Էլեկտրական վարդակների վահանակ՝ կազմված H015PEC00-ից | հավաքածու | 1 | 850.00 € | | 850.00 € |
| 4. | Գազի վարդակների համար վահանակ՝ կազմված H015PEA00-ից | հավաքածու | 1 | 850.00 € | | 850.00 € |
| 5. | Ժամացույցի մոդուլ – անալոգային՝ առանց համաժամանակեցման՝ կազմված H015ORA00-ից | հատ | 1 | 1.063.00 € | | 1.063.00 € |
| 6. | Negastope մոդուլ՝ կազմված HHF0001-ից | հատ | 1 | 1.063.00 € | | 1.063.00 € |
| 7. | Կեղծ առաստաղի վահանակների հավաքածու H015PFB00-ի հավաքածուի, պարագծի շրջանակի հավաքածուի, ենթակառուցվածքի հավաքածուի հետ՝ կազմված H015QQA00-H015PFB00-H015SRE00-H015QSA00-ից | հավաքածու | 1 | 4.675.00 € | | 4.675.00 € |
| 8. | Առաստաղի լույս – 3x55W՝ կազմված H015QQC00-ից | հատ | 10 | 435.00 € | | 4.350.00 € |
| 9. | Թիթեղյա օդի դիֆուզոր-DS180/240-ֆիլտրերի հետ՝ կազմված H015DSC00-ից | հատ | 1 | 6.540.00 € | | 6.540.00 € |
| 10. | Մեխանիկական միակողմանի սահող դուռ շարժիչով՝ ավտոմատ սահող դռան համար, դռան շրջանակի կողափայտ – դռան շրջանակի փակիչ՝ կազմված H015PSB00-H015PSI00-H015PSK00-H015PSL00-ից | հատ | 1 | 6.190.00 € | | 6.190.00 € |
| 11. | Նայելու պատուհան, ամրացված ապակի՝ կազմված H015VSB00-ից | հատ | 1 | 3.425.00 € | | 3.425.00 € |
| 12. | Վիրաբուժական լվացարան՝ երկու լվացման բաժիններով, չժանգոտվող | հատ | 1 | 3.114.00 € | | 3.114.00 € |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պողպատից օճառամանի, բաշխիչ խմբի խոզանակների հետ՝ կազմված VA02578-VA03452-VA03454-ից | | | | | |
| 13. | Ալյումինե աստիճան | հատ | 2 | 100.00 € | | 200.00 € |
| 14. | Պաշտպանիչ սաղավարտ | հատ | 2 | 15.00 € | | 30.00 € |
| 15. | Տրանսպորտային գործիքների տուփ | հատ | 1 | 90.00 € | | 90.00 € |
| 16. | Մխոցավոր սղոց | հատ | 1 | 180.00 € | | 180.00 € |
| 17. | Հարվածային հորատիչ + գլխիկ | հատ | 1 | 270.00 € | | 270.00 € |
| 18. | ACCU պտուտակահան + լիցքավորիչ 2 մարտկոց | հատ | 1 | 220.00 € | | 220.00 € |
| 19. | ACCU պտուտակահան + 2 մարտկոց | հատ | 1 | 160.00 € | | 160.00 € |
| 20. | Փոքր անկյունային կտրիչ | հատ | 1 | 110.00 € | | 110.00 € |
| 21. | Էլեկտրական սղոց | հատ | 1 | 30.00 € | | 30.00 € |
| 22 | Վակուումային սեղմակ | հատ | 2 | 20.00 € | | 40.00 € |
| 23 | Փոքր գործիքների հավաքածու /օրինակ՝ հորատիչ, կտրիչ, մուրճ, հղկիչ/ | հատ | 1 | 25.00 € | | 25.00 € |
| 24 | Փոքր գործիքների հավաքածու /օր.՝ ռետինե գլխիկով մուրճ, հարթաշուրթ, մանեկադարձակ, սեղմակ, պտուտակահան/ | հատ | 1 | 125.00 € | | 125.00 € |
| 25 | Երկարացման լար էլեկտրականության համար | հատ | 1 | 20.00 € | | 20.00 € |
| | Ընդհանուր փաթեթները 37, որոնք տեղավորված են 5 փայտե արկղերի մեջ + 2 նեյլոն + 1 ծրարված արտ, համախառն քաշը՝ 4126,00 ԿԳ | | | | | |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԸ | | | | | 56.500.00 € |

Տնօրեն
ՀՀ ԳԱԱ [illegible]

պրոֆ. Ռ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1325 - Ա**
**քաղ. Երևան**

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 07/80-2/37078-15 և N 06/3-3/37276-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N ԱՄ/22.2/13688-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վլադիմիր Գեորգիի Ավագյանի (անձնագիր՝ N 72 4846802, տրված՝ 07.06.2013 թ.) կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտարի քաղաքային համայնքի հասցեով ստացված շտապ օգնության ավտոմեքենաները՝

1) TC 2834VX (հատուկ) մակնիշի, 2015 թվականի արտադրության, 445,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, նույնականացման համարը՝ XU42834VXG000037.

2) TC УАЗ 396295 (հատուկ) մակնիշի, 2015 թվականի արտադրության, 294,950 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, նույնականացման համարը՝ XTT396295F0470764:

Ընդհանուր բեռնափոխադրման ծախսերը կազմել են 45,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ:

Բեռն ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտարի քաղաքային համայնքի տեղամասային հիվանդանոցին:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտարի քաղաքային համայնքին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1326 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-110-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 06/3-3/37225-15 և դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38093-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թթ. իրականացվող ծրագրի մասին» N Մ-110-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02535097) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երևան Հյուրանոց» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533075) 2015 թվականի նոյեմբերի 10-ին կնքված՝ N YH-16-G... պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում՝ 1,903,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
**Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն Լարիսա Մինասյանի կողմից**

«23 նոյեմբերի» 2015թ.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015 – 16թթ. իրականացվող

# ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| 1 | **Ծրագրի նպատակը**<br>Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) ծրագրի առաքելությունն է նպաստել Հայաստանում ժողովրդավարության կայացմանը, մարդու իրավունքների և ազատությունների իրականացմանն ուղղված բարեփոխումների արդյունավետ կյանքի կոչելուն, խրախուսել հանդուրժողականության տարածմանը հասարակության տարբեր խոցելի խմբերի նկատմամբ, աջակցել քաղաքացիական հասարակության կառույցների զարգացմանը, տարածել բաց հասարակության արժեքները և սատարել բաց, թափանցիկ և արդյունավետ կառավարմանը նպաստող քաղաքականության մշակմանն ու կիրառմանը հանրային կյանքի տարբեր ոլորտներում, նպաստել որակյալ կրթության և առողջապահության մատչելիությանը հանրության լայն շերտերի համար, ներառյալ խոցելի խմբերը: Ծրագիրը նպատակ ունի նաև աջակցել քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների, ներառյալ հասարակական կազմակերպություններին, անհատներին, ակադեմիական միջավայրի ներկայացուցիչներին, լսելի դարձնել իրենց ձայնը պետությանը և հասարակությանը հուզող տարբեր խնդիրների շուրջ, ինչպես նաև ապահովել նրանց մասնակցության բարձր և արդյունավետ մակարդակ պետական կառավարման գործընթացներում:<br><br>*ԲՀԻՕՀՀՄ-ն ունի հետևյալ ուղղությունները.* 1. Քաղաքացիական հասարակություն, 2. Հանրային առողջապահություն, 3. Կրթություն, 4. Իրավունք և քրեական արդարադատություն:<br><br>ԲՀԻՕՀՀՄ-ի նպատակները հետևյալներն են ըստ ուղղությունների.<br><br>*Քաղաքացիական հասարակություն*<br>- Հիմնադրամն այս ծրագրի միջոցով, ներառյալ դրամաշնորհի տրամադրելն ու սեփական կարողություններն օգտագործելը, աջակցելու է Հայաստանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացմանը և հզորացնելու է հասարակական կազմակերպությունների կարողությունները՝ արդյունքում ունենալով անկախ կազմակերպություններ, որպես կարևոր համակարգ՝ երկրում ժողովրդավարական գործընթացների առավել արդյունավետ իրականացման համար: Նաև աջակցելու է Հայաստանի հասարակության տարբեր խոցելի խմբերին՝ |

ա 15/11.9

կանանց, երեխաների, տարեցների, ազգային, կրոնական, սեռական փոքրամասնությունների, սոցիալապես անապահով մարդկանց, փակ և կիսափակ հաստատություններում գտնվողներին, իրենց հիմնարար իրավունքների և ազատությունների իրականացմանն ու պաշտպանությանը՝ համաձայն ՀՀ Սահմանադրության և մեր երկրի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների դրույթների: Այս ծրագիրը հնարավորություն է ստեղծելու նպաստել Հայաստանի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ի հայտ եկած խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ու դրանց շուրջ քննարկումների անցկացմանը՝ պետական, հասարակական, միջազգային կառույցների մասնակցությամբ: Հիմնադրամն այս ծրագրի շրջանակներում նպաստելու է մարզային բնակչության ակտիվությանն՝ սեփական համայնքի կառավարման գործընթացներում առավել մասնակցային դառնալուն, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնելու երիտասարդներին կյանքի կոչել գաղափարներ, որոնք ուղղված կլինեն իրենց համայնքի զարգացմանը, նաև հասարակության ուշադրությունը գրավելուն երկրի համար կարևորություն ունեցող խնդիրներին: «Քաղաքացիական հասարակություն» ուղղության գաղափարները իրականացնելուն նպաստելու համար ԲՀԻՕՀՀՄ-ն կտրամադրի դրամաշնորհներ կազմակերպություններին, անհատներին, ինչպես նաև, Հիմնադրամն ինքը կիրականացնի մի շարք միջոցառումներ՝ հետազոտություններ, զեկույցների պատրաստումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, բանավեճեր՝ ընդգրկելով տեղական և միջազգային փորձագետներ տարբեր նախաձեռնություններում:

<u>Հանրային առողջապահություն</u>

- Այս ծրագրի շրջանակներում Հիմնադրամը շարունակելու է ջատագովել Հայաստանում պալիատիվ (ցավամոքիչ) բժշկության քաղաքականության ներդրմանը, որի հայեցակարգն արդեն իսկ հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից: Սա Հիմնադրամն իրականացնելու է՝ աջակցելով համապատասխան օրենսդրական դաշտի և իրատեսական գործողությունների ծրագրի մշակմանն ու ապահովելով համապատասխան մասնագիտական պատրաստվածություն և բարձրակարգ փորձագիտական օժանդակություն: Նախատեսվում է առանձին ուշադրություն դարձնել մանկական պալիատիվ խնամքի զարգացման հեռանկարներին, իրականացնելով կարիքների և երկրում առկա հնարավորությունների գնահատում, որը հիմք կհանդիսանա իրատեսական ռազմավարության մշակման համար: Այս ամենը Հիմնադրամը կիրականացնի թե իր և թե գործընկերների փորձագիտական հնարավորություններն օգտագործելով: Հիմնադրամի այս ծրագիրը շարունակելու է օժանդակել Հայաստանի Հոգեկան առողջության քաղաքականության իրականացմանը՝ համաձայն ՀՀ Կառավարության կողմից ընդունված ռազմավարության, որն հիմնված է համայնքային խնամքի կենտրոնների սկզբունքի վրա և որոնց, թվով 2 մոդելների աջակցումը հնարավորություն կստեղծի դրանց հետագա ընդլայնման համար: Ծրագիրը նպաստելու է խոցելի և մարգինալացված խավերի առողջապահական իրավունքների պաշտպանությանը: Այս ծրագիրը նաև ստեղծելու է համապատասխան կրթական և մասնագիտական միջավայր՝ պալիատիվ խնամքի, հոգեկան առողջության, հանրային առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության խնդիրները զուգահեռ քննարկելու լայն հանրության համար: Հիմնադրամն իր այս ծրագրի միջոցով նպաստելու է առողջապահության ոլորտի արդյունավետ իրավական կարգավորման գործընթացներին: Ծրագիրը կիրականացվի ինչպես դրամաշնորհների տեսքով, այնպես էլ ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ քննարկումների, հետազոտական աշխատանքների, նաև պետական, հասարակական կազմակերպությունների և միջազգային ու տեղական համապատասխան փորձագետների ընդգրկմամբ:

<u>Կրթություն</u>

- Հիմնադրամի Կրթություն ծրագիրը շարունակելու է լինել ջատագովը հայաստանյան բուհական համակարգի համապատասխանելիությանն եվրոպական չափանիշներին՝ օժանդակելով Բոլոնիայի շրջանակներում իրատեսական, մասնակցային և արդյունավետ բարեփոխումների իրականացմանը: Ծրագիրը, օգտագործելով թե Հիմնադրամի, թե հետաքրքրված ակադեմիական համայնքի, և թե միջազգային վարկանիշ ունեցող փորձագետների գիտելիքներն ու կարողությունները, նպաստելու է անկախ փորձագիտական գնահատումների և հետազոտությունների իրականացմանը, որոնք էլ խթան են հանդիսանալու առավել արդյունավետ և շոշափելի իրականացվող բարեփոխումներին:
- Ծրագիրը ստեղծելու է հնարավորություններ անկախ գնահատումների և մշտադիտարկումների համար, որոնք պետք է նպաստեն միջնակարգ կրթության բնագավառում տեղի ունեցող բարեփոխումներին, դրանք դարձնելով առավել թափանցիկ, դյուրին և արդյունավետ, ինչպես նաև բարձրացնելու են որակյալ դպրոցական կրթության մատչելիությունը՝ աջակցելով միջազգայնորեն ընդունված չափորոշիչների ներդրմանը մեր կրթական համակարգում՝ համաձայն ստանձնած պարտավորությունների և մեծածավալ նախագծերի: Ծրագիրը կիրականացվի դրամաշնորհների տեսքով, որոնք կշնորհվեն և կազմակերպություններին, և տեղական ու միջազգային փորձագետներին, ինչպես նաև, որոշ նախաձեռնություններ կիրականացվեն ուղղակիորեն Հիմնադրամի կողմից՝ հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պատրաստված առաջարկությունների ջատագովություն, շահագրգիռ լայն խմբերի համար քննարկումների կազմակերպում:

<u>Իրավունք և քրեական արդարադատություն</u>

- Ծրագիրն, օգտագործելով Հիմնադրամի և գործընկերների ներուժը, նպաստելու է մեր երկրում օրենքի գերակայության հաստատմանը, Հայաստանի կողմից արդարադատության ոլորտում ստանձնած բարեփոխումների թափանցիկ և իրատեսական իրականացմանը և դրանց մասին տեղեկատվությունը դարձնելու է մատչելի լայն հասարակության համար, աջակցելու է փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանությանը, այնտեղի պայմանների բարելավմանը և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն, ինչպես նաև օժանդակելու է արդարադատության մատչելիության բարձրացմանն՝ աջակցելով փաստաբանական գործունեությանը, այն հասցնելով առավել բարձր որակի: Ծրագիրը, հենվելով տեղական և միջազգային փորձագիտական կարողությունների վրա, նպաստելու է Հայաստանում ընթացող քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումներին՝ դրանք իրականացնելով միջազգային չափանիշներին համապատասխան, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով խոշտանգումների, վատ և անմարդկային վերաբերմունքի դեմ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարմանը: «Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության նպատակին հասնելու համար կտրվեն դրամաշնորհներ կազմակերպություններին, անհատ մասնագետներին, ինչպես նաև կկատարվեն աշխատանքներ ուղղակիորեն ԲՀԻՕՀՀՄ-ի կողմից, այն է՝ կազմակերպել քննարկումներ, վերապատրաստման դասընթացներ, որոնք ուղղված կլինեն զարգացնելու տեղական մասնագետների հմտություններն ու կարողությունները:

| | |
|---|---|
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը**<br>Ակնկալվում է հարկային արտոնությունների ստացում՝ ապրանքների, սարքավորումների, գրքերի և գրականության, ուսումնական նյութերի ներմուծման և ձեռքբերման դեպքում մաքսային մճարներից և ԱԱՀ-ից ազատում,

հեռահաղորդակցման և կապի ծառայությունների վարձավճարների ԱԱՀ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱԱՀ-ից ազատում, կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալության, հյուրանոցների և այլ ծառայությունների ԱԱՀ-ից ազատում, տարեկան ֆինանսական աուդիտի ծախսերի ԱԱՀ-ից ազատում:

3. Բարեգործը

Ֆինանսավորումը կատարվում է Բաց հասարակության հիմնադրամներ Ցյուրիխ (Շվեյցարիա) և Բաց հասարակության խթանման հիմնադրամի (ԱՄՆ)՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով:

4. Ծրագիրը կատարողը

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ
Գործող հասցե՝ Թումանյան փողոց, 2-րդ փակուղի, տ. 7/1, Երևան 0002, հեռ. 533862, 536758
Իրավաբանական հասցե՝ Արամի 44
ՀՎՀՀ՝ 02535097

5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը

Ծրագիրն իր բոլոր ուղղություններով իրագործվում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ ներառյալ Երևանն ու հեռավոր մարզերը: Ծրագրերն իրականացվում են կրթության, առողջապահության և իրավա-հասարակական բնագավառներում:

6. Ծրագրի բյուջեն

ԲՀՀԻՕՀՄ-ի 2015 – 16թթ. ընդհանուր ծրագրի գումարը կազմում է 1,750,550 ԱՄՆ դոլար, որից ըստ ուղղությունների.

| | |
|---|---|
| 1. Քաղաքացիական հասարակություն | 800,000 ԱՄՆ դոլար (350,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 450,000 ԱՄՆ դոլար 2016թ.) |
| 2. Հանրային առողջապահություն | 210,000 ԱՄՆ դոլար (120,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2014թ.) |
| 3. Կրթություն | 360,000 ԱՄՆ դոլար (200,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 160,000 ԱՄՆ դոլար 2016թ.) |
| 4. Իրավունք և քրեական արդարադատություն | 200,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 100,000 ԱՄՆ դոլար 2016թ.) |
| 5. Կազմակերպչական ծախսեր | 180,550 ԱՄՆ դոլար (88,550 ԱՄՆ դոլար 2015թ. և 92,000 ԱՄՆ դոլար 2016թ.) |

Ֆինանսավորումը կատարվում է Բաց հասարակության հիմնադրամներ Ցյուրիխ (Շվեյցարիա) և Բաց հասարակության խթանման հիմնադրամի (ԱՄՆ) կողմից՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրած միջոցներով՝ ծրագրի իրականացման ընթացքում (եռամսյակային կտրվածքով՝ միջինը մոտ 218,818 ԱՄՆ դոլար):

7. Բարեգործության ստացողը

«Քաղաքացիական հասարակություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհի ստացողները կլինեն ցանկում ընդգրկված կազմակերպություններից, որոնք կընտրվեն մրցույթների արդյունքում՝ համաձայն ԲՀՀԻՕՀՄ-ի 2014-17թթ. ռազմավարական ուղղությունների և իրենց կողմից ներկայացված ծրագրերի: Ներկայացված ծրագրերը հաստատվելու են ԲՀՀԻՕՀՄ-ի տնօրենների խորհրդի և ցանցային ծրագրերի Խորհուրդների կողմից:.

«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Սարյան 22, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 01512224
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Ա. Խաչատրյան 23, բն. 70, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00826651
«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պուշկինի 96, ք. Գյումրի 3102, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05522266
«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Տիգրան Մեծ 59, ք. Վանաձոր, Լոռու մարզ
ՀՎՀՀ՝ 06926024
«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Մաշտոցի պող. 15, բն. 131, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 00055317
«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Այգեստան 9-րդ փող., տ. 6, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 00063072
«Մանդատ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Թումանյան 24, բն. 33ա, ք. Երևան 0002
ՀՎՀՀ՝ 02709141
«Հայաստանի հելսինկյան կոմիտե» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պուշկինի 3ա, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 01215357
«Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Հալաբյան 22բ., բն. 42, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 01229454
«Հանրային լրագրության ակումբ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Սարյան 30, 2-րդ հարկ, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 02597658
«Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Շահումյան 68ա, ք. Արմավիր 0901, Արմավիրի մարզ
ՀՎՀՀ՝ 04417204
«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Պռոշյան 8, ք. Մարտունի 1402, Գեղարքունիքի մարզ

ՀՎՀՀ՝ 08410372
«Գորիսի մամուլի ակումբ» հասարակական կազմակեպություն
Գտնվելու վայրը՝ Անկախության 2, ք. Գորիս, Սյունիքի մարզ
ՀՎՀՀ՝ 09207456
««ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոն» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Ս. Մկրտչյան 37ա/1, ք. Գյումրի, Շիրակի մարզ
ՀՎՀՀ՝ 05528262
«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02554073
«Իրական աշխարհ, իրական մարդիկ» հասարակական կազմակերպությունը
Գտնվելու վայրը՝ Մ. Ավետիսյան 4-րդ փող., ք. Երևան 0069
ՀՎՀՀ՝ 00855742

2015-16թթ. ընթացքում իրականացվող ծրագրի ստացողներ են հանդիսանալու նաև մարդու իրավունքների և խոցելի խավերի շահերի պաշտպանության խնդիրներով զբաղվող այլ հասարակական կազմակերպություններ և անհատներ: Նրանց ընտրությունը կկատարվի հետագայում՝ հայտարարվող բաց մրցույթների արդյունքում ներկայացրած հայտերի հիման վրա:

Մրցույթների չափանիշները միանման են ԲՀԻՕՀՀՄ-ի բոլոր ուղղությունների համար և ներկայացված են ստորև:

«Հանրային առողջապահություն» ուղղությունն իր մեջ ունի մի քանի ենթաուղղություններ: Ստորև ներկայացվում են դրամաշնորհի ստացողներն ըստ ենթաուղղությունների.

ա) «Իրավունք և առողջապահություն» և «Վնասի նվազեցում» ծրագրի ուղղության դրամաշնորհի ստացողներից է
«Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը
Գտնվելու վայրը՝ Արշակունյաց պող. 2, 4-րդ հարկ, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00885303
Ծրագրի ստացողներ են հանդիսանում նաև ԲՈՒՀերը, մարդու իրավունքների և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններն ու անհատները: Նրանց ընտրությունը կկատարվի հայտարարված մրցույթների արդյունքում:

բ) «Ցավամոքիչ (Պալիատիվ) խնամք» ծրագիր
Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն պալիատիվ բժշկության ոլորտի մշակված քաղաքականության իրականացմանն, որի հայեցակարգը հաստատվել է ՀՀ Կառավարության կողմից: Ծրագրի աջակցումը ներառում է՝ համապատասխան մասնագետների պատրաստման նպատակով հատուկ ուսումնական կենտրոնի ստեղծում, ինչպես նաև այդ ոլորտի խնդիրների շուրջ բարձրակարգ տեղական և միջազգային մասնագետների մասնակցությամբ պարբերական քննարկումների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև աջակցել պալիատիվ

խնամքի ծառայությունների իրականացմանը՝ հետագայում պետական ֆինանսավորում ստանալու ակնկալիքով: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարության, Գլոբալ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և այլ հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրը կիրականացվի նաև ինչպես ուղղակիորեն Հիմնադրամի, այնպես էլ պալիատիվ բժշկության բնագավառում գործունեություն իրականացնող պետական, հասարակական կազմակերպությունների և համապատասխան փորձագետների կողմից:
«Ցավամոքիչ (Պալիատիվ) խնամք» ծրագրի ուղղության դրամաշնորհի ստացողներից են
«Հակացավային և պալիատիվ օգնության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, որի ընտրությունը կատարվել է կազմակերպության կողմից ներկայացրած ծրագրի հիման վրա և հավանության է արժանացել Տնօրենների և Հանրային առողջապահություն ցանցային ծրագրի խորհուրդների կողմից:
Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 27, բն. 85, ք. Երևան 0010
ՀՎՀՀ՝ 02571251
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Կորյունի 2, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01503448
Երևանի պետական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01506928
Ծրագրի ստացողներ են նաև մարդու իրավունքներով և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ԲՈՒՀեր:

գ) «Հոգեկան առողջություն» ծրագիր
2015-16թթ. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ոլորտի քաղաքականության իրականացմանը և դրա շուրջ շահագրգիռ կողմերի միջև քննարկումների կազմակերպմանը, ինչպես նաև համապատասխան մասնագետների պատրաստմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ խորհրդակցությամբ և համագործակցությամբ:
Այս աշխատանքները կիրականացվեն տեղական և միջազգային համապատասխան փորձագետների ընդգրկմամբ և կհամակարգվեն Հիմնադրամի կողմից: Տեղական մասնագետները կներկայացնեն ՀՀ Սոցապ, Առողջապահության և Կրթության և գիտության նախարարությունները, ԵՊՀ, ԵՊԲՀ և այլ մասնագիտական կառույցներ:
«Հոգեկան առողջություն» ծրագրի դրամաշնորհի ստացողներից են՝
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Կորյունի 2, Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01503448
Երևանի պետական համալսարանը
Գտնվելու վայրը՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025
ՀՎՀՀ՝ 01506928
«Հոգեկան առողջություն» ծրագրի ստացողներ են նաև մարդու իրավունքներով և խոցելի խավերի շահերի պաշտպանության և առողջապահական խնդիրներով զբաղվող, ինչպես նաև առողջապահական բնագավառում

գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ԲՈՒՀեր, անհատներ:

«Կրթություն» ծրագիր
2015-16թթ. ծրագիրը նախատեսում է իրականացնել կրթության ոլորտին առընչվող խնդիրների և ընթացող բարեփոխումների վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանց արդյունքների քննարկումներ հետաքրքրված անձանց և կառույցների մասնակցությամբ: Հետազոտությունների և ուսումնասիրությունների շահառուներից են հանդիսանալու կրթության ոլորտով հետաքրքրված անհատները, ակադեմիական համայնքի ներկայացուցիչները, բուհերը, դպրոցները, միջազգային կազմակերպությունները:

2015-16թթ ծրագրի շրջանակներում աջակցություն ստացող կազմակերպությունների, բուհերի, դպրոցների և անհատ հետազոտողների ընտրությունը կատարվելու է Հիմնադրամի կողմից հայտարարված մրցույթների շրջանակներում ներկայացված ծրագրերի հիման վրա և հաստատվելու է տեղական Տնօրենների խորհրդի և Կրթության աջակցման ցանցային ծրագրի Խորհրդի կողմից:

«Իրավունք և քրեական արդարադատություն» ուղղության շրջանակներում դրամաշնորհ ստացողներն են՝
«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» հասարակական կազմակերպությունը ՀՀ Արդարադատության նախարարության Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:
Գտնվելու վայրը՝ Ա. Խաչատրյան 23, բն. 70, ք. Երևան
ՀՎՀՀ՝ 00826651
«Մեր իրավունքների սահմանները» հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ Ոստիկանության համակարգի Հասարակական դիտորդների խմբի կողմից ներկայացված ծրագրի իրականացումը ապահովելու համար:
Գտնվելու վայրը՝ Նոր Արեշ 79 – 11, ք. Երևան 0041
ՀՎՀՀ՝ 60454587

Այս կազմակերպությունների ընտրությունը կատարվել է կազմակերպությունների կողմից ներկայացրած ծրագրերի հիման վրա և հաստատվել է տեղական Տնօրենների և Մարդու իրավունքների և դրամաշնորհների ղեկավարման ծրագրի, նստավայրը Բուդապեշտ, խորհրդի կողմից:
2015-16թթ. ծրագրի ստացողներն են հանդիսանում նաև իրավունքի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններ, անհատներ, իրավաբան-գիտնականներ, փաստաբաններ, որոնց ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների և իրենց կողմից ներկայացված հայտերի գնահատման հիման վրա:

<u>2015-16թթ. ԲՀԻՕՀՀՄ-ի դրամաշնորհ ստացող կազմակերպությունների ընտրությունը կկատարվի հայտարարված բաց մրցույթների արդյունքում, հետևյալ հիմնական չափանիշներով՝</u>

ա) ծրագրի համապատասխանելիությունը Հիմնադրամի 2014-17թթ. Ռազմավարությանը
բ) ներկայացված ծրագրի համապատասխանելիությունը Հիմնադրամի կողմից հայտարարած մրցույթի պահանջներին ու նպատակներին
գ) ծրագրի արդյունավետությունը և իրատեսական լինելը
դ) ներկայացված ծրագրի նպատակների, խնդիրների և դրանց իրականացման մեխանիզմների համապատասխանությունը և արդյունավետությունը
ե) պահանջվող միջոցների համապատասխանությունը ներկայացված նպատակներին
զ) ծրագիրը ներկայացրած կազմակերպության և ընդգրկված աշխատակազմի կամ անհատի պատրաստվածությունը
է) ծրագիրը իրականացնելու ժամանակ համագործակցության առկայությունը պետական և հասարակական այլ կառույցների ու կազմակերպությունների հետ:

8. **Ծրագրի իրականացման տևողությունը**
ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագիրը կիրականացվի 2 տարվա ժամկետում՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

9. **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**

2015-16թ. <u>«Քաղաքացիական հասարակություն»</u> ուղղությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագիրը նախատեսում է աջակցել հետևյալ նախաձեռնությանը.
ա) 2015թ. և 2016թ. հունվար ամիսներին հայտարարվելու է մրցույթ՝ ուղղված օժանդակելու մարզերում մարդու իրավունքների ոլորտում գործող ՀԿ-ներին: Մրցույթի նպատակն է աջակցել մարզային հասարակական կազմակերպություններին՝ հզորացնելով և զարգացնելով իրենց իրավապաշտպան կարողությունները մարդու իրավունքների և խոցելի խմբերի շահերի պաշտպանության և ջատագովության ոլորտում: Երկու տարվա ընթացքում կտրամադրվի մինչև 8 դրամաշնորհ, իսկ մրցույթի բյուջեն կկազմի **240,000 ԱՄՆ դոլար (100,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 140,000 ԱՄՆ դոլար 2016թ.)**:
բ) 2015-16թթ. շարունակվելու են իրականացվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներին առընչվող խնդիրների շուրջ քաղաքականությունների մշակմանն ուղղված նախաձեռնություններ: Երկու տարվա ընթացքում հայտարարվելու են նվազագույնը թվով 5 մրցույթներ, որոնց շրջանակներում հնարավորություն է ստեղծվելու ներկայացնել Հայաստանի համար հրատապ հարցերի շուրջ հետազոտական աշխատանքներ իրականացնելու, մշակված փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև դրանց շուրջ բանավեճեր և քննարկումներ կազմակերպելուն ուղղված հայտեր: Մրցույթի արդյունքում դրամաշնորհների են արժանանալու անհատներ, փորձագետների խմբեր, հասարակական կազմակերպություններ, ԲՈՒՀեր, այլ կազմակերպություններ: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 30 դրամաշնորհ, իսկ մրցույթի բյուջեն կկազմի **160,000 ԱՄՆ դոլար (70,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 90,000 ԱՄՆ դոլար 2016թ.)**:
գ) 2015-16թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը շարունակելու է իրականացնել իր հիմնական առաքելությունը, որն է՝ օժանդակել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության առավել արդյունավետ իրականացմանը այնպիսի խավերի մոտ, ինչպիսիք են կանայք, երեխաները, փոքրամասնությունները, ծերերը և հասարակության այլ խոցելի շերտեր, որոնք կունենան այդ պաշտպանության անհրաժեշտությունը: Այս նախաձեռնությունը կիրականացվի թե ուղղակիորեն պաշտպանության մեխանիզմներ ստեղծելով և դրանք կիրառելով, թե կազմակերպությունների կարողությունների զարգացման և հզորացման ճանապարհով: Նախաձեռնությունը կյանքի կկոչվի ինչպես մրցույթների արդյունքում ընտրված, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների կողմից ներկայացված ծրագրերի միջոցով: Երկու տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, կտրամադրվի մինչև 20 դրամաշնորհ, **իսկ նախաձեռնության բյուջեն կկազմի 300,000 ԱՄՆ դոլար (125,000 ԱՄՆ դոլար 2015թ. և 175,000 ԱՄՆ դոլար 2016թ.)**:
դ) 2015-16թթ. քաղաքացիական հասարակության ծրագիրը կշարունակի իր գործունեությունն ուղղված հասարակության խոցելի խմբերի շահերի պաշտպանությանը՝ նրանց խնդիրներին առընչվող տարբեր հարցերի շուրջ հանրային լայն

գրքերը, ամսագրերը ծառայելու են ուսումնական, կրթական, մշակութային և գիտական նպատակների համար, տրամադրվելու են դպրոցներին, ԲՈՒՀ-երին, գրադարաններին, մշակութային և ստեղծագործական կազմակերպություններին, հասարակական կազմակերպություններին: Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը ըստ տարիների ներկայացված է ստորև՝

| Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը | 2015թ.. Քանակ/Ընդհանուր արժեքը | 2016թ.. Քանակ/Ընդհանուր արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|
| Երկրի ներսում ձեռք բերվող ապրանքներ և սարքավորումներ | 1,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար | 7,000 ԱՄՆ դոլար |
| Երկրի ներսում ծառայություններ | | | |
| ա) հեռահաղորդակցման և կապի ծառայություններ | 4,400 ԱՄՆ դոլար | 4,400 ԱՄՆ դոլար | 8,800 ԱՄՆ դոլար |
| բ) տպագրական ծախսեր | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| գ) գրասենյակի վարձակալություն | 12,000 ԱՄՆ դոլար | 12,000 ԱՄՆ դոլար | 24,000 ԱՄՆ դոլար |
| դ) կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալություն | 10,000 ԱՄՆ դոլար | 5,000 ԱՄՆ դոլար | 15,000 ԱՄՆ դոլար |
| ե) հյուրանոցային և այլ ծառայություններ | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| զ) տարեկան հաշվետվության տպագրում | 1,000 ԱՄՆ դոլար | 1,000 ԱՄՆ դոլար | 2,000 ԱՄՆ դոլար |
| է) թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն | 300 ԱՄՆ դոլար | 300 ԱՄՆ դոլար | 600 ԱՄՆ դոլար |
| թ) կոմունալ ծախսեր | 2,840 ԱՄՆ դոլար | 2,840 ԱՄՆ դոլար | 5,680 ԱՄՆ դոլար |
| ժ) տարեկան աուդիտ | 30,000 ԱՄՆ դոլար | 30,000 ԱՄՆ դոլար | 60,000 ԱՄՆ դոլար |
| Է) տրանսպորտային ծախսեր (վառելիք և պահեստամասեր) | 1,800 ԱՄՆ դոլար | 1,800 ԱՄՆ դոլար | 3,600 ԱՄՆ դոլար |
| Արտերկրից ներմուծվող համակարգիչների | 5 հատ/2,000 ԱՄՆ դոլար | 5 հատ/2,000 ԱՄՆ դոլար | 4,000 ԱՄՆ դոլար դոլար |
| Արտերկրից ներմուծվող այլ սարքավորումներ | 5 հատ/1,500 ԱՄՆ դոլար | 5 հատ/1,500 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար |
| Արտերկրից ներմուծվող CD, DVD-ների, գրքերի և ամսագրերի ներմուծում և ձեռքբերում | 500 ԱՄՆ դոլար | 500 ԱՄՆ դոլար | 1,000 ԱՄՆ դոլար |
| Ընդամենը | 73,340 ԱՄՆ դոլար | 73,340 ԱՄՆ դոլար | 146,680 ԱՄՆ դոլար |

11. **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**

2015-16թթ. Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից իրականացվող բոլոր ծրագրերի ընդհանուր կազմակերպական ծախսերը (աշխատավարձ, տարածքի վարձակալում, սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում, 2014-15թթ. ԲՀԻՕՀՀՄ-ի հաշվետվության տպագրում (2,000 ԱՄՆ դոլար էլեկտրոնային ֆորմատով), գործուղման ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձավճարներ, և այլ գրասենյակային ծախսեր) կազմում են 180,550 ԱՄՆ դոլար (88,550 ԱՄՆ դոլար 2015թ. և 92,000 ԱՄՆ դոլար 2016թ.), որը կազմում է ԲՀԻՕՀՀՄ-ի 2015-16թթ. ընդհանուր ծրագրային ծախսերի մոտ 11,5%: Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ըստ տարիների ներկայացված է ստորև՝

| Կազմակերպական ծախսեր | 2015թ. Ընդհանուր արժեք | 2016թ. Ընդհանուր արժեք | Ընդամենը |
|---|---|---|---|
| Աշխատավարձ | 12,210 ԱՄՆ դոլար | 15,660 ԱՄՆ դոլար | 27,870 ԱՄՆ դոլար |
| Գրասենյակային տարածքի վարձակալում | 12,000 ԱՄՆ դոլար | 12,000 ԱՄՆ դոլար | 24,000 ԱՄՆ դոլար |
| Կոնֆերանսների, սեմինարների կազմակերպման հետ կապված տարածքի վարձակալություն և մասնակիցների գիշերակացի վճար | 13,000 ԱՄՆ դոլար | 8,000 ԱՄՆ դոլար | 21,000 ԱՄՆ դոլար |
| Սարքավորումների ձեռքբերում կամ ներմուծում | 4,500 ԱՄՆ դոլար | 9,500 ԱՄՆ դոլար | 14,000 ԱՄՆ դոլար |
| CD-ների, DVD-ների, գրքերի և ամսագրերի ներմուծում և ձեռքբերում | 500 ԱՄՆ դոլար | 500 ԱՄՆ դոլար | 1,000 ԱՄՆ դոլար |
| 2014-15թթ. ԲՀԻՕՀՀՄ-ի | 1,000 ԱՄՆ դոլար | 1,000 ԱՄՆ դոլար | 2,000 ԱՄՆ դոլար |

| | | | |
|---|---|---|---|
| հաշվետվության տպագրում էլեկտրոնային ֆորմատով | | | |
| Տպագրական ծախսեր | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| Գործուղման ծախսեր | 3,000 ԱՄՆ դոլար | 3,000 ԱՄՆ դոլար | 6,000 ԱՄՆ դոլար |
| Թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն | 300 ԱՄՆ դոլար | 300 ԱՄՆ դոլար | 600 ԱՄՆ դոլար |
| Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի վարձավճարներ | 2,840 ԱՄՆ դոլար | 2,840 ԱՄՆ դոլար | 5,680 ԱՄՆ դոլար |
| Տրանսպորտային ծախսեր (վառելիք և պահեստամասեր) | 1,800 ԱՄՆ դոլար | 1,800 ԱՄՆ դոլար | 3,600 ԱՄՆ դոլար |
| Միջազգային և տեղական հեռախոսակապ | 1,400 ԱՄՆ դոլար | 1,400 ԱՄՆ դոլար | 2,800 ԱՄՆ դոլար |
| Բջջային հեռախոսակապ "Արմենտել" ՀՁ ՓԲԸ և "Օրանժ Արմենիա" ՓԲԸ | 1,000 ԱՄՆ դոլար | 1,000 ԱՄՆ դոլար | 2,000 ԱՄՆ դոլար |
| Ինտերնետ - "Արմենիան Դեյթաքոմ Քամփնի" ՓԲԸ | 2,000 ԱՄՆ դոլար | 2,000 ԱՄՆ դոլար | 4,000 ԱՄՆ դոլար |
| Տարեկան ֆինանսական աուդիտի անցկացում - "Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա" ՓԲԸ | 30,000 ԱՄՆ դոլար | 30,000 ԱՄՆ դոլար | 60,000 ԱՄՆ դոլար |
| Ընդամենը | 88,550 ԱՄՆ դոլար | 92,000 ԱՄՆ դոլար | 180,550 ԱՄՆ դոլար |

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ

ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է համագործակցություն՝

ՀՀ Ազգային ժողովի հետ՝ մի շարք օրենքների մշակման և ընդունման հարցերում մասնավորապես, Առողջապահության, մայրության և մանկության հարցերի, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի, Կրթության, գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի, Պետաիրավական հարցերի և եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովների հետ:

ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ եվրոպական հարևանության քաղաքականության, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական զեկույցի և ԵՄ-ի Արևելյան գործընկերության ծրագրերի շրջանակներում մասնակցային գործընթացի ապահովման ուղղությամբ:

ՀՀ Առողջապահության նախարարության հետ, կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, նախատեսվում է միջոցառումներ պացիենտների իրավունքների քաղաքականության մշակման, ինչպես նաև ծառայությունների մոդելների փորձնական իրականացման նպատակով, նաև վնասի նվազեցման ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն [illegible] օգտագործողների այլընտրանքային բուժման շարունակելիությունն ապահովելու նպատակով: Համագործակցությունը շարունակվելու է հետբուհական կրթական առողջապահական ծրագրերի շրջանակներում առողջապահական ոլորտի մասնագետների հետբուհական կրթություն և վերապատրաստում, ինչպես նաև ապագա բժիշկների և արդեն փորձ ունեցող բժիշկների համար իրավունքի և առողջապահության խնդիրների վերաբերյալ դասընթացների կազմակերպման ու անցկացման գործում, նաև պացիենտների և բժիշկների իրավունքների պաշտպանության և [illegible] իրազեկման հարցերի շուրջ:

Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն հոգեկան առողջության Հայաստանի Ռազմավարության իրականացման շրջանակներում, որը ներառում է համայնքային կենտրոնների փորձնական հիմնադրման նախագծերի, անհրաժեշտ իրավական կարգավորումների մշակման և ոլորտի մի քանի կարևոր ուղղությունների կարիքների գնահատման աշխատանքներին աջակցում:

ՀՀ Արդարադատության նախարարության հետ՝ դատաիրավական ոլորտի բարեփոխումների, ինչպես նաև նրանց կողմից ստեղծված քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հասարակական վերահսկման խմբի գործունեության աջակցության շրջանակներում: ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է ՀՀ Արդարադատության նախարարին կից կոլեգիայի անդամ:

Հիմնադրամը հանդիսանում է ՀՀ Կրթության և գիտության նախարարին կից կոլեգիայի անդամ և, հնարավորինս, օգտագործում է այս մասնակցությունը՝ քննարկելու կրթության ոլորտում իրականացվող ծրագրերն ու նախաձեռնությունները:

ՀՀ Ոստիկանության հետ համագործակցությունը տեղի է ունենում ոստիկանական համակարգի ձերբակալվածների պահման վայրերի նկատմամբ քաղաքացիական հսկողություն իրականացնող Հասարակական դիտորդական խմբի գործունեության աջակցման ծրագրի շրջանակներում:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հետ՝ ԲՀԻՕՀՀՄ-ն հանդիսանում է ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումների աշխատանքային խմբի անդամ: Այս կազմակերպության հետ համագործակցություն է հաստատվել նաև Մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական զեկույցի հանրայնացման և ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունման գործընթացներն առավել արդյունավետ իրականացնելու շուրջ:

Հայաստանում Եվրամիության պատվիրակության գրասենյակի հետ համատեղ իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք ուղղված են Հայաստանում մարդու իրավունքների և շահերի պաշտպանությանն և այդ ոլորտում միջազգային նորմերի ներդրմանն ու կիրառմանը: ԵՄ-ի հետ համագործակցության շրջանակ է հանդիսանում նաև Արևելյան գործընկերության ծնաչափը:

Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան և Բրիտանական խորհրդի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Հայաստանում Նիդեռլանդների դեսպանատան (նստավայրը Թբիլիսի) հետ համագործակցում է Հայաստանում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության առավել արդյունավետ իրականացնելու գաղափարների, դրանց մասին լայն հանրությանը տեղեկացնելու շուրջ:

13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը

- ԲՀԻՕՀՀՄ-ի ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝ ա) յուրաքանչյուր տրամադրված դրամաշնորհի ֆինանսական միջոցների և ծրագրի իրականացման վերահսկումը դրամաշնորհների ղեկավարի և ծրագրի պատասխանատուի, բ) ԲՀԻՕՀՀՄ-ի գործադիր տնօրենի, գ) ԲՀԻՕՀՀՄ-ի Տնօրենների խորհրդի, դ) ցանցային գլխամասային (Նյու Յորք, Բուդապեշտ) գրասենյակների: Վերահսկման եղանակներն են.

- Բաց հասարակության ինստիտուտի գլխամասային ցանցային գրասենյակին (Նյու Յորք) և Բաց հասարակության ինստիտուտի կենտրոնացված ֆինանսա-վարչական միավորին (Բուդապեշտ) ամսեկան ֆինանսական

| | |
|---|---|
| | հաշվետվությունների, ինչպես նաև տարեկան հաշվետվությունների տրամադրում;<br>- Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի և տարածաշրջանային ֆինանսական տնօրենի կողմից իրականացվում է ամենամյա ներքին աուդիտ;<br>- Բաց հասարակության ինստիտուտի ցանցային աուդիտորական բաժանմունքի պատվերով իրականացվում է ԲՀԻՕՀՀԱ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտ (2000թ.-ից այն իրականացվում է KPMG-ի կողմից);<br>- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ընդունված կարգի;<br>- Պարբերական տեղեկատվության էլեկտրոնային հրատարակում<br>- Ամենամյա տարեկան հաշվետվության էլեկտրոնային ներկայացում. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**04 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1327-Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄՆ-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» («ՀԱՅՐԵՆԻՔ» ՄԻՈՒԹՅՈՒՆ) ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38089-15 և դեկտեմբերի 4-ի N 06/3-3/38359-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10728-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N ԱՄ/22.2/13906-15, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 01/06.1/4471-15 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 101/104.3.2/5222-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի (ՀՀ, քաղ. Երևան, Նազարբեկյան 13, բն.25, ՀՎՀՀ՝ 00091195) կողմից իրականացվող՝ 69,675 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով «ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) մարդասիրական կազմակերպության կողմից ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (12,835 կգ ընդհանուր քաշով, 69,675 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, բեռի և բաշխման ցանկը կցվում է «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա



ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Լոռու մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՄՆ-ի Հայաստանի Բարեկամներ /Հայրենիք
/Մարդասիրական կազմակերպության
Լիազորված անձ Սերգեյ Թադևոսյանի կողմից
«...02 Դեկտեմբեր 2015..թ.

«ԱՄՆ-ի Հայաստանի Բարեկամներ /Հայրենիք
/Մարդասիրական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ-ի

Հասցեով ստացված բեռի ներմուծում

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայրենիք միության կազմակերպության օգնության բաշխում ԼՂՀ Արալեռի զինվորական սահմանային հոսպիտալին, Լոռու մարզ Գուգարաց թեմի Ծիծեռնակ ճամբարին, Արմավիրի մարզի .Էջմիածնի թիվ 13 և Նալբանդյան գյուղի մանկապարտեզին, ք.Երևան Քանաքեռի արտաքանական հիվանդանոցին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել մաքսային օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայաստանի Բարեկամներ /Հայրենիք Միության / մարդասիրական կազմակերպություն Հասցե Chalrman,Organizing Committee Frends of Armenia Hayrenik Miyuyun P.O. Box 1149-Montebello CA 90540 գործադիր տնօրեն Հագոպ Բաշմակյան հեռ. +13107034537 Լիազորված անձ Սերգեյ Թադևոսյան |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի Հայաստանի Բարեկամներ /Հայրենիք Միություն/ մարդասիրական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղ ՀՎՀՀ 00091195 Հասցե. Նազարբեկյան փ. 13շ-25բն հեռ. 077-286-226 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սոցիալական՝ ԼՂՀ, Լոռու մարզ , Արմավիրի մարզ ք.Երևան , |

2

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | 69675 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործության ստացողը | ԼՂՀ Արալեռի զինվորական սահմանային հոսպիտալ, ք.Երևան արտաքանական հիվ . Արմավիրի մարզ ք.Էջմիածնի թիվ 13 և Նալբանդյան գյուղի մանկապարտեզ, Լոռու մարզ Գուգարաց թեմ Ծիծեռնակ ճամբար, |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2016թ----01.06.2016թ |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Բեռի ներմուծում և անհատույց բաշխում ըստ կից բաշխման ցուցակի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Շինանյութ,Երաժշտական գործիք, կենցաղային պարագաներ, ճոճանակներ 67 խ/մ և 12835 կգ քաշով, 69675դոլարին համարժեք դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ԼՂՀ, Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման Հանձնաժողովի, , Առողջապահության նախարարության, Լոռու և Արմավիրի մարզպետարանների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հաշվետվությունների տեսքով , Հայրենիք միության գերագույն խորհուրդ: |

| Թիվ | Բացատրություն | Նոր Գործածված | Քանի հատ | Ինչպէս | Ծանր. Քիլոկր | Արժէք Տոլար | Մանրամասնություն | Ուր պիտի կնա |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Բժիշկի վիրահատական սեղան | Օգտագործված | 1 | տուփ | 350 | 6000 | Չժանգոտող պողպատից | Վանաձորի Հիվանդանոց |
| 2 | Դաշնամուր | Օգտագործված | 2 | տուփ | 400 | 7500 | Ելեկտրական | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին եւ Կուսապատ |
| 3 | Թենիսի սեղան | Օգտագործված | 1 | հատ | 80 | 580 | Ծալված | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին |
| 4 | Ստեկլովատ insulation | Նոր | 19 | փաթույթ | 510 | 5700 | (R-19) 15 սմ | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին |
| 5 | Մեթլախ | Նոր | 6 | պաղոն | 3300 | 9000 | Չափս 15 սմ x 15 սմ | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին ներքին հարդարման համար |
| 6 | Ներկ (զանազան գույներ) | Նոր | 2 | պաղոն | 870 | 5925 | 237 հատ թիթեղ տուփ | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին ներքին հարդարման համար |
| 7 | Զուգարան (Սանհանգույց) եւ Լվացարան | Նոր | 3 | պաղոն | 470 | 3700 | Տեսականի | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին ներքին հարդարման համար |
| 8 | Ֆաներա | Նոր | 120 | p/մ | 2600 | 5200 | (2.7 մ x 1,3 մ x 1.4 սմ) | Արմավիրի մարզ գյուղ Նալբանդյան |
| 9 | Գիպսագարթոն | Նոր | 60 | p/մ | 1500 | 1500 | (2.7մ x 1.3 մ x 1.25 սմ) | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին ներքին հարդարման համար |
| 10 | Տախտակ (Փայտ) | Նոր | 150 | p/մ | 900 | 1700 | 5 սմ x 10 սմ x 4 մ | Արմավիրի մարզ գյուղ Նալբանդյան |
| 11 | մեխ | Նոր | 3 | Տուփ | 27 | 500 | Մետաղ տանիքների | Արցախ Արալեռի զինվորական սահմանային հոսպիտալ ներքին հարդարման համար |
| 12 | փամփերս | Նոր | 15 | Տուփ | 50 | 950 | Հիվանդների համար | ք.Երևան սրտաբանական հիվ . |
| 13 | Վիրակապ | Նոր | 2 | պաղոն | 550 | 12700 | Տեսականի | ք.Երևան սրտաբանական հիվ |
| 14 | Ապսեներ | Նոր | 3 | Տուփ | 10 | 625 | Պլաստիկ | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին |
| 15 | Անթացուպ ( ձեռնափայտ) | Օգտագործված | 6 | հատ | 5 | 230 | Անդամալույծների համար | Արցախ Արալեռի զինվորական սահմանային հոսպիտալ |
| 16 | կտոր | Նոր | 1 | p/մ | 13 | 415 | Վարագույրի համար | Էջմիածնի թիվ 13 մանկապարտեզ |
| 17 | Խոհանոցային հավաքածու | Օգտագործված | 18 | հատ | 250 | 2100 | Պնակ, գավաթ եւ այլն | Արցախ Արալեռի զինվորական սահմանային հոսպիտալ |
| 18 | Մանկական ձոճանակներ | Օգտագործված | 2 | Հավաքած | 500 | 1750 | Պլաստիկ,Մետաղ, փայտ | Վանաձոր Ծիծեռնակ Ճամբարին |
| 19 | Շարժաթոռ | Օգտագործված | 5 | հատ | 450 | 3600 | (3) Ելեկտրո (2) Նորմալ | ք.Երևան սրտաբանական հիվ . |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 12835 | 69675 | Քոնթեյների ծավալը 67 cubic meter<br>Առավելագույն ծանրություն 26370 Kg | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1328 -Ա**
**քաղ. Երևան**

**«ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՕՐԴԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24-ի N07/80-2/36614-15 և N06/3-3/36570-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 21-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10398-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել, Հայ Առաքելական եկեղեցու Ֆրանսիայի թեմի կողմից «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (1 բեռնարկղ, 190 տեղ, 7,000 կգ, 3,000 եվրո արժողությամբ, իսկ փոխադրման ծախսը կազմում է 4,650 եվրո, «Գուգարք» ՄՏ) ներմուծման ծրագիրը (բեռի ցանկը կցվում է):

2. «Երուսաղեմի Սուրբ Ղազար օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՂԵԿԱՎԱՐ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՕՐԴԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ** 15/9.9

ք. Սպիտակ, Շահումյան 7 Հեռ. 374(255) 2-25-00

N 19/15 «13» 11 2015թ.

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ 2015/05100033/4310 Փ/Ա-ով «ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԲԺՇԿԱԿԱՆ Սբ.ՂԱԶԱՐԻ ՕՐԴԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԲՀ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԲԱՇԽՄԱՆ

ՑԱՆԿ

| N | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ | ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՔԱՆԱԿ | ԱՐԺԵՔ (եվրո) |
|---|---|---|---|---|
| 1 | «Երուսաղեմի բժշկական Սբ Ղազարի Օրդենը Հայաստանում» ԲՀ | դաշնամուր | 2 հատ | 200 |
| | | դաշնամուրի աթոռ | 2 հատ | 20 |
| | | սայլակ | 9 հատ | 90 |
| | | քայլակ | 10 հատ | 10 |
| | | հենակ | 15 զույգ | 15 |
| | | օգտագործված հագուստ | 150 կգ | 120 |
| 2 | Սպիտակի « Հոգեկան առողջության կենտրոն» | մահճակալ | 19 հատ | 912 |
| | | ներքնակ | 19 հատ | 380 |
| | | մահճասեղան | 6 հատ | 120 |
| | | հիվանդանոցային սեղան | 4 հատ | 60 |
| | | ծածկոցներ | 20 հատ | 34 |
| 3 | Վանաձորի թիվ 3 մշակույթի տուն | դաշնամուր (SHERER) | 1 հատ | 100 |
| | | դաշնամուրի աթոռ | 1 հատ | 10 |
| 4 | Սպիտակի երաժշտական դպրոց | դաշնամուր (SHERER) | 1 հատ | 100 |
| | | դաշնամուրի աթոռ | 1 հատ | 10 |
| 5 | «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ | մահճակալ | 6 հատ | 288 |
| | | ներքնակ | 6 հատ | 120 |
| | | ֆունկցիոնալ բազկաթոռ | 2 հատ | 40 |
| 6 | «Առաքելություն Հայաստանի» Տաշիրի բարեգործական ճաշարան | օգտագործված հագուստ | 270 կգ | 180 |
| | | ծածկոցներ | 20 հատ | 34 |
| 7 | «Լոռու մարզի [illegible] վարչություն» | ֆունկցիոնալ բազկաթոռ | 4 հատ | 80 |
| | | ծածկոցներ | 45 հատ | 77 |

ԲՀ տնօրեն՝ Ժ. Հեքիմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1329 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N Մ- 246 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Գլոբալ Էյդ Նեթվորք» գրանցված միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/38305-15 և 3-ի N 06/3-3/38259-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Գերմանիայի Դաշնությունից «GAIN» հիմնադրամից «Գլոբալ Էյդ Նեթվորք» գրանցված միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (1745 տեղ, 13,930 կգ ընդհանուր քաշով, 14,527 եվրո արժողությամբ, իսկ փոխադրման ~~ծախսերը կազմում են 4,2~~10 եվրո, «Արարատյան» Տ/Մ, ցանկը կցվում է) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 14-ի «Գլոբալ Էյդ Նեթվորք» գրանցված միության հայաստանյան մասնաճյուղի կողմից կողմից իրականացվող «ԳԷՆ-ը Հայաստանին» ծրագրի մասին» N Մ-246-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արարատի, Լոռու, Արմավիրի, Արագածոտնի մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

«GAiN-Germany»-ի կողմից «Գլոբալ Էյդ Նեթվորք (ԳԷյՆ)» գրանցված միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռների նախնական բաշխման

ՑԱՆԿ

| N | Կազմակերպության անվանում | Ապրանքների անվանում | Քանակ | Արժեք |
|---|---|---|---|---|
| 1 | Արարատի մարզ, գյուղ Արարատ, 3-րդ միջնակարգ դպրոց | Դպրոցական գրասեղաններ | 16 հատ | 240.00 |
| | | Դպրոցական աթոռներ | 32 հատ | 320.00 |
| | | Պահարան | 1 հատ | 20.00 |
| | | Պահարան | 1 հատ | 20.00 |
| 2 | Արագածոտնի մարզ, Թալին համայնքի մարզադպրոց | Դպրոցական աթոռներ | 6 հատ | 120.00 |
| | | Դպրոցական սեղաններ | 6 հատ | 180.00 |
| 3 | Սոցիալապես անապահով անձիք «Գլոբալ Էյդ Նեթվորք (ԳԷյՆ)» հայաստանյան մասնաճյուղի շահառուներ (Արարատի մարզ, 85 ընտանիք) | Օգտագործված հագուստ | 65 արկղ | 130.00 |
| | | Նոր կոշիկներ | 255 հատ | 1,275.00 |
| | | Լվացող միջոց փոշի | 255 կգ | 175.00 |
| | | Լվացող միջոց հեղուկ | 255 կգ | 255.00 |
| | | Զուգարանի թուղթ | 306 կգ | 290.00 |
| | | Թղթե սրբիչներ | 85 կգ | 49.00 |
| | | Մանկան ( վարսակի շիլա) ժամկետ 12/2016 | 364.6 կգ | 48.00 |
| 4 | Սոցիալապես անապահով անձիք «Գլոբալ Էյդ Նեթվորք (ԳԷյՆ)» հայաստանյան մասնաճյուղի շահառուներ (ք. Երևան, 20 ընտանիք) | Օգտագործված հագուստ | 20 արկղ | 40.00 |
| | | Նոր կոշիկներ | 60 հատ | 300.00 |
| | | Լվացող միջոց փոշի | 60 կգ | 40.00 |
| | | Լվացող միջոց հեղուկ | 60 կգ | 59.00 |
| | | Զուգարանի թուղթ | 72 կգ | 69.00 |
| | | Մանկան ( վարսակի շիլա) ժամկետ 12/2016 | 86 կգ | 12.00 |
| | | Թղթե սրբիչներ | 20 կգ | 12.00 |
| 5 | Սոցիալապես անապահով անձիք «Գլոբալ Էյդ Նեթվորք (ԳԷյՆ)» հայաստանյան մասնաճյուղի շահառուներ (Արմավիրի մարզ, 20 ընտանիք) | Օգտագործված հագուստ | 20 արկղ | 40.00 |
| | | Նոր կոշիկներ | 60 զույգ | 300.00 |
| | | Լվացող միջոց փոշի | 60 կգ | 40.00 |
| | | Լվացող միջոց հեղուկ | 60 կգ | 59.00 |
| | | Զուգարանի թուղթ | 72 կգ | 69.00 |
| | | Մանկան ( վարսակի շիլա) ժամկետ 12/2016 | 86 կգ | 12.00 |
| | | Թղթե սրբիչներ | 20 կգ | 12.00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Սոցիալապես անապահով անձիք «Գլոբալ էյդ Նեթվորք (ԳԷյՆ)» հայաստանյան մասնաճյուղի շահառուներ (Լոռու մարզ, 10 ընտանիք) | Օգտագործված հագուստ | 10 արկղ | 20.00 |
| | | Նոր կոշիկներ | 30 հատ | 150.00 |
| | | Լվացող միջոց փոշի | 30 կգ | 20.00 |
| | | Լվացող միջոց հեղուկ | 30 կգ | 30.00 |
| | | Զուգարանի թուղթ | 36 կգ | 34.00 |
| | | Մնունդ ( վարսակի շիլա) ժամկետ 12/2016 | 43 կգ | 6.00 |
| | | Թղթե սրբիչներ | 10 կգ | 6.00 |
| 7 | Սոցիալապես անապահով անձիք «Գլոբալ էյդ Նեթվորք (ԳԷյՆ)» հայաստանյան մասնաճյուղի շահառուներ (Սյունիքի մարզ, 15 ընտանիք) | Օգտագործված հագուստ | 15 արկղ | 30.00 |
| | | Նոր կոշիկներ | 45 հատ | 225.00 |
| | | Լվացող միջոց փոշի | 45 կգ | 30.00 |
| | | Լվացող միջոց հեղուկ | 45 կգ | 45.00 |
| | | Զուգարանի թուղթ | 54 կգ | 50.00 |
| | | Մնունդ ( վարսակի շիլա) ժամկետ 12/2016 | 64.5 կգ | 9.00 |
| | | Թղթե սրբիչներ | 15 կգ | 9.00 |
| 8 | Սոցիալապես անապահով անձիք «Գլոբալ էյդ Նեթվորք (ԳԷյՆ)» հայաստանյան մասնաճյուղի շահառուներ (Արագածոտնի մարզ, 25 ընտանիք) | Օգտագործված հագուստ | 25 արկղ | 50.00 |
| | | Նոր կոշիկներ | 75 հատ | 375.00 |
| | | Լվացող միջոց փոշի | 75 կգ | 52.00 |
| | | Լվացող միջոց հեղուկ | 75 կգ | 75.00 |
| | | Զուգարանի թուղթ | 90 կգ | 85.00 |
| | | Մնունդ ( վարսակի շիլա) ժամկետ 12/2016 | 107.4 կգ | 14.00 |
| | | Թղթե սրբիչներ | 25 կգ | 14.50 |
| 9 | Լոռու մարզ, ք. Սպիտակ, «Սպիտակ-ֆերմեր» Հ/Կ | Օգտագործված հագուստ | 40 արկղ | 80.00 |
| | | Նոր կոշիկներ | 127 հատ | 635.00 |
| | | Լվացող միջոց փոշի | 111 կգ | 76.00 |
| | | Լվացող միջոց հեղուկ | 112 կգ | 111.00 |
| | | Զուգարանի թուղթ | 211.5կգ | 200.00 |
| | | Թղթե սրբիչներ | 166 կգ | 96.00 |
| | | Մնունդ ( վարսակի շիլա) ժամկետ 12/2016 | 752 կգ | 100.00 |
| | | Բժշկական պարագաներ | 100 կգ | 500.00 |
| | | Թուղթ A4 ֆորմատի | 310 կգ | 205.00 |
| | | սեղաններ | 4 հատ | 80.00 |
| | | Թուղթ A3 ֆորմատի | 310 կգ | 207.50 |
| 10 | «Գլոբալ էյդ Նեթվորք (ԳԷյՆ)» հայաստանյան մասնաճյուղ | Օգտագործված սպիտակեղեն | 1 արկղ | 2.00 |
| | | Օգտագործված վարագույր | 1 արկղ | 2.00 |
| | | Աման լվանալու մեքենա | 1 հատ | 30.00 |
| | | Լվացքի կախիչ | 1 հատ | 30.00 |
| | | Սեղաններ | 5 հատ | 100.00 |
| | | Թուղթ A3 ֆորմատի | 323 կգ | 214.00 |
| | | Թուղթ A4 ֆորմատի | 320 կգ | 213.00 |
| | | Լողախցիկ(Պատեր, դռներ) | 1 արկղ | 20.00 |
| | | Օգտագործված պատուհան | 1 հատ | 30.00 |
| | | Էլ. Սալօջախ | 1 հատ | 30.00 |
| | | Սառնարան | 2 արկղ | 60.00 |
| | | Սառցարան | 1 արկղ | 30.00 |
| | | Օգտագործված լվացքի մեքենա | 1 հատ | 30.00 |
| | | Ներքնակներ | 1 հատ | 5.00 |
| | | Բժշկական ներքնակ | 1 արկղ | 25.00 |
| | | Հաշմանդամի սայլակներ | 10 հատ | 350.00 |
| | | Հիվանդանոցային մահճակալներ | 3 հատ | 150.00 |
| | | Անիվներով պահարան | 30 հատ | 450.00 |
| | | Մանկասայլակ փայտից | 2 հատ | 20.00 |
| | | Փոքր կահույք | 2 հատ | 20.00 |
| | | Փոքր կահույք | 10 հատ | 200.00 |
| | | Փոքր կահույք | 8 հատ | 160.00 |
| | | Սեղան, աշխատանքային սեղան | 3 հատ | 60.00 |
| | | Աթոռներ | 3 հատ | 30.00 |
| | | Դպրոցական պայուսակներ | 159 հատ | 795.00 |
| | | Գրենական պիտույքներ | 36 արկղ | 360.00 |
| | | Գնդակներ Adidas | 25 արկղ | 1,500.00 |
| | | Կարի մեքենա | 1 հատ | 20.00 |
| | | Կիթառ հենակով | 1 հատ | 15.00 |
| | | Օգտ. Գրասենյակային կահույք(ապամոնտաժված) | 245 հատ | 1,720.00 |
| | | Ձեռքի ամբարձիչ | 1 հատ | 50.00 |
| | | | | 14,527.00 |

«Գլոբալ Էյդ Նեթվորք(ԳԷյՆ)» գրանցված միության հայաստանյան մասնաճյուղ

Տնօրեն՝ Մանֆրեդ Զայֆերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1330 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ- 442 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 07/80-2/36822-15 և 25-ի N 06/3-3/36686-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (110 տեղ, 11,280 կգ ընդհանուր քաշով, 33,898.27 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 7,020 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԲԱՇԽՄԱՆ Ց ՈՒ Ց Ա Կ

**110 տեղ /18 պալետ և 92 արկղ/ 11280.00 կգ. քաշով -- $33898.27 ԱՄՆ դոլար արժեքով, իսկ ճանապարածախսը կազմում է --$7020 ԱՄՆ դոլար**

| N | Ապրանքի Անվանումը | Տեղ արկղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԱՄՆ դոլար | Շահառուները |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ատամի մածուկ /Pepsodent/ | 313 | 1583.6 | 1268.9 | 6009.60 | Սույն ապրանքատեսակները տրամադրվելու են երեխաներին Ամանորյա միջոցառումների ժամանակ ընկերակցության գրասենյակների և կենտրոնների միջոցով՝ Երևան, Այնթափ, Արտաշատ, Արովյան, Աշտարակ, Արմավիր, Ալավերդի, Օձուն, Թումանյան, Վանաձոր, Սպիտակ, Շիրակամուտ, Ստեփանավան, Նոյեմբերյան, Կողբ, Դիլիջան, Բերդ, Իջևան, Ազատամուտ, Գյումրի, Վարդենիս, Գորիս, Ղափան, Սիսիան, Տավուշի մարզի սահմանամերձ գյուղեր |
| 2. | Պլաստմասե մազակալ | 30 | 184.3 | 155.1 | 763.80 | |
| 3. | Ստվարաթղթե ձևվածք | 3պալետ | 1275.5 | 1253 | 1500.00 | |
| 4. | Պլաստմասե խաղալիք | 87 | 687.8 | 616 | 6723.00 | |
| 5. | Ներկելու գիրք | 84 | 1217.7 | 1175.9 | 1008.00 | |
| 6. | Ցուղամատիտ | 163 | 1236.6 | 1185.9 | 2738.40 | |
| 7. | Հաշվիչ դպր. | 33 | 144.6 | 114.8 | 1267.00 | |
| 8. | Կպչուն ժապավեն /սքոչ/ | 18 | 88.3 | 72.3 | 230.00 | |
| 9. | Արևային ակնոց | 106 | 279.2 | 253.4 | 1060.00 | |
| 10. | Կանացի շարֆ | 4 | 458.8 | 439.2 | 937.50 | |
| | | 1 | 99.8 | 92.8 | 247.20 | |
| 11. | Խառը մանվածք | 5<br>1 | 41.9<br>18.6 | 328.1<br>18.2 | 238.00<br>40.00 | |
| 12. | Բժշկատերիա մանկ. | 5 | 65.4 | 63 | 375.00 | |
| 13. | Մկրատ /դպր./ | 102 | 325.3 | 294 | 918.00 | |
| 14. | Պլաստմասե քանոն /դպր./ | 6 | 67.6 | 62.2 | 375.00 | |
| 15. | Գրիչ | 81 | 108.9 | 99.4 | 191.00 | |

Վ.15/10.15

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 16. | Թելեր | 24 | 434.2 | 408.5 | 936.00 | |
| 17. | Ռետին դպր. | 51 | 308.7 | 286.2 | 388.00 | |
| 18. | Գուլպաներ/տղամարդու/ | 14 | 307.6 | 296.3 | 1613.36 | |
| 19. | Մատիտ հասարակ | 12 | 104.8 | 97.6 | 480.00 | |
| 20. | Տետր զսպանակով | 295 | 1853.6 | 1785.8 | 2123.60 | |
| 21. | Մատիտի սրիչ | 4 | 76.7 | 71.5 | 1040.00 | |
| 22. | Ատամի խոզանակ | 9 | 131.2 | 121.9 | 1244.81 | |
| 23. | Պլաստմասե գավաթներ | 8 | 155.5 | 149 | 1000.00 | |
| 24. | [illegible]պիտակներ | 4 | 23.8 | 19.9 | 451.00 | |
| | Ընդամենը | 1463 | 11280 | 10728.9 | 33898.27 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1331 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆԱՄԵՐՁԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 07/80-2/34971-15 և N 06/3-3/34853-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 02/14/14032-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 16-ի N 1/32.2/16804-15 ու Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 01/06.1/6648 -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3,400,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձերի ոռոգման ցանցի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջրտուր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2015 թվականի նոյեմբերի 5-ին կնքված՝ N ՀՀ/ՆՆ-05/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ոռոգման ցանցի վերակառուցում՝ 3,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն՝ այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«09» նոյեմբերի 2015թ.

## «Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի վերակառուցման նախագծում»

### ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կառուցել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցը և մաքրել գոյություն ունեցող ջրամբարը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Խաչիկ համայնք, ջրամատակարարման բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 3.400.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչիկ գյուղի համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ նոյեմբերի 05 |



| | | |
|---|---|---|
| | | -ից մինչեւ 2016թ.ապրիլի 05-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ նոյեմբերի 05 -ից մինչեւ 2015թ.փետրվարի 05-ը նախագծման աշխատանքների կատարում՝ 3.100.000,00 դրամ արժողությամբ,<br>2015 թ.փետրվարի 05-ից մինչև ապրիլի 05-ը նախագծի փորձաքննության իրականացում՝ 300.000,00 դրամ մոտավոր արժեքով: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ջրտուր» ՍՊԸ-ի կողմից Վայոց Ձորի մարզի Խաչիկ համայնքի տնամերձների ոռոգման ցանցի կառուցման և գոյություն ունեցող ջրամբարի մաքրման նախագծում՝ 3.100.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի<br><br>Նախատեսվում է նաև նախագծի փորձաքննություն՝ 300.000,00 դրամ մոտավոր արժեքով: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Վայոց Ձորի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1332 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N 07/80-2/36839-15 և նոյեմբերի 22-ի N 06/3-3/36168-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 23-ի N 02/14/14459-15 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 25-ի N 03/07-1/14105-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայ դպրոց» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 250,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. «Հայ դպրոց» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՀԱՅ ԴՊՐՈՑ» հիմնադրամ կազմակերպության
տնօրեն Կարեն Բունիաթյանի կողմից
«26» նոյեմբերի. 2015թ.

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է դպրոցական աթոռ-սեղաններով, գրատախտակներով, ուսուցչական աթոռ-սեղաններով, դպրոցական պահարաններով, նախադպրոցական աթոռ-սեղաններով, նախադպրոցական պահարաններով և դպրոցական ու նախադպրոցական անհրաժեշտ այլ գույքով ապահովել Հայաստանի և ԼՂՀ-ի կրթական պետական համակարգի կարիքավոր դպրոցներին և նախադպրոցական հիմնարկներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003թվականի հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի » 3-րդ կետի : |
| 3. | Բարեգործը | «Հայ Դպրոց» Հիմնադրամի միջոցները գոյանում են Ամերիկայի Միացյալ Նահանգներում գրանցված «Armenia School Foundation – USA» ոչ առևտրային, բարեգործական կազմակերպության նվիրատվություններից:<br>Նվիրատվությունների չափը ծրագրի ամբողջ ժամանակաշրջանի համար կկազմի 250.000 ԱՄՆ դոլար: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «Հայ Դպրոց » Հիմնադրամը, հասցեն՝<br>Իրավաբանական՝ք. Երևան, Բաղրամյան 17<br>Գործունեության՝ ք.Երևան, Վ.Անտառային փողոց, 127/2 շենք, բն.6<br>հեռ. 093 589194, 094 589195<br>ՀՎՀՀ՝ 02566785 |

15/8

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և ԼՂՀ շրջանները, կրթության հանրակրթական և նախադպրոցական բնագավառը: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Հիմնադրամի ֆոնդը՝ ներկայացվող ծրագրի համար կազմում է 250.000 ( երկու հարյուր հիսուն հազար ) ԱՄՆ դոլար:<br><br>Ծրագրի առաջին փուլում՝ 2016թ.-ի հունվար - 2017թ-ի դեկտեմբեր ժամանակահատվածում, */հումքի գնում, ներմուծում, արտադրություն, բաշխում/* արժեքը կազմում է 88.000 ԱՄՆ դոլարի չափով գումար:<br>Ծրագրի երկրորդ փուլում՝ 2018թ.-ի հունվար- 2018թ դեկտեմբեր ժամանակահատվածում, */արտադրություն, բաշխում /* ծրագրի արժեքը կազմում է 44.000 ԱՄՆ դոլարի չափով գումար:<br>Ծրագրի երրորդ փուլում՝ 2019թ.-ի հունվար - 2020թ-ի դեկտեմբեր ժամանակահատվածում */ հումքի գնում, ներմուծում, արտադրություն, բաշխում /*ծրագրի արժեքը կազմում է 88.000 ԱՄՆ դոլարի չափով գումար:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքի 12%-ը՝ 30.000 ԱՄՆ դոլարի չափով գումար կտրամադրվի կազմակերպչական ծախսերին: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ և ԼՂՀ հանրակրթական համակարգի դպրոցները և մանկապարտեզներ: Սույն ծրագրով նախատեսվում է գույքով ապահովել շուրջ 50 դպրոց և մանկապարտեզ: Դպրոցները և նախադպրոցական հիմնարկները կնտրվեն « Հայ Դպրոց » Հիմնադրամի կողմից մշակված ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում՝ ելնելով դպրոցների և նախադպրոցական հիմնարկների կարիքավորության աստիճանից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի իրականացման տևողությունը կազմում է հինգ տարի՝ 2016թ. հունվար -2020թ. դեկտեմբեր: |



| | | |
|---|---|---|
| | | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Հայ Դպրոց » Հիմնադրամի ծրագրի տևողությունը կազմում է հինգ տարի:<br>Հիմնադրամի ֆոնդը ներկայացվող ծրագրի համար կազմում է 250.000 ԱՄՆ դոլար:<br>Ծրագրով նախատեսվում է.<br>2500 միավոր ( 1միավորը՝1աշ.սեղան և 2աթոռ) դպրոցական սեղան-աթոռների պատրաստում:<br>300 հատ ուսուցչական սեղանների պատրաստում:<br>300 հատ ուսուցչական աթոռների պատրաստում:<br>300 հատ գրատախտակների պատրաստում:<br>180 հատ դպրոցական գրապահարանների պատրաստում:<br>100 միավոր ( 1 միավորը՝ 1 սեղան և 4 աթոռ ) նախադպրոցական սեղան-աթոռների պատրաստում:<br>25 հատ ( 8 տեղանոց ) նախադպրոցական պահարանների պատրաստում:<br>250 հատ դպրոցական կախիչների ( 8տեղանոց ) պատրաստում:<br><br>Ծրագրի առաջին փուլում՝ 2016թ.-ի հունվար - 2017թ-ի դեկտեմբեր ժամանակահատվածում, ծրագրի արժեքի 20.000 ԱՄՆ դոլարի չափով գումարը նախատեսվում է հումքի՝ MDF-ի, մետաղյա պրոֆիլների,ներկի, գամերի և այլի գնման և ներմուծման համար, 63.000 ԱՄՆ դոլարի չափով՝ գույքի պատրաստման համար /կապալառուների հետ պայմանագրեր/: Գույքը արտադրվելու է տեղի կապալառու ձեռնարկությունների միջոցով:<br>Ծրագրի երկրորդ փուլում՝ 2018թ.-ի հունվար- 2018թ դեկտեմբեր ժամանակահատվածում, ծրագրի արժեքի 44.000 ԱՄՆ դոլարի չափով գումարը նախատեսվում է գույքի պատրաստման համար /կապալառուների հետ պայմանագրեր/: Գույքը արտադրվելու է տեղի կապալառու ձեռնարկությունների միջոցով:<br>Ծրագրի երրորդ փուլում՝ 2019թ.-ի հունվար - 2020թ-ի դեկտեմբեր ժամանակահատվածում, ծրագրի արժեքի 20.000 ԱՄՆ դոլարի չափով գումարը նախատեսվում է հումքի՝ MDF-ի, մետաղյա պրոֆիլների,ներկի և գամերի և այլի գնման և ներմուծման համար, 63.000 ԱՄՆ դոլարի չափով՝ |

| | | |
|---|---|---|
| | | գույքի պատրաստման համար /կապալառուների հետ պայմանագրեր/: Գույքը արտադրվելու է տեղի կապալառու ձեռնարկությունների միջոցով:<br>Ծրագրի ընդհանուր արժեքի 10.000 ԱՄՆ դոլարի չափով գումարը նախատեսվում է գույքի տեղափոխումն ու բաշխումը իրականացնելու համար (բեռնատար մեքենաների վարձավճար, վառելանյութ) :<br>Ծրագրի ընդհանուր արժեքից՝ 30.000 ԱՄՆ դոլարի չափով կտրամադրվի կազմակերպական ծախսերին: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ▪ փայտյա հումք՝ MDF–ի գնում և ներկրում ՝ 25.000 ԱՄՆ դոլար – ներմուծում արտերկրից<br>▪ մետաղյա պրոֆիլների գնում և ներկրում՝ 12.000 ԱՄՆ դոլար – ներմուծում արտերկրից<br>▪ ներկի, գամերի և այլնի գնումներ՝ 3.000 ԱՄՆ դոլար – ձեռք է բերվելու Հայաստանի Հանրապետությունում<br>▪ պայմանագրերի կնքում՝ գույք պատրաստող կապալառու ձեռնարկությունների հետ՝ 170.000 ԱՄՆ դոլար՝ գույքի հետևյալ միավորների համար.<br>▪ 2500 միավոր (1միավորը՝1աշ.սեղան և 2աթոռ) դպրոցական սեղան-աթոռներ: Յուրաքանչյուր միավորի համար՝ 45,8 ԱՄՆ դոլար ( 22.000 ՀՀ դրամ):<br>▪ 300 հատ ուսուցչական սեղան: Յուրաքանչյուրի համար՝ 33,3 ԱՄՆ դոլար ( 16.000 ՀՀ դրամ )<br>▪ 300 հատ ուսուցչական աթոռ: Յուրաքանչյուրի համար՝ 12,5 ԱՄՆ դոլար (6.000 ՀՀ դրամ )<br>▪ 300 հատ գրատախտակ: Յուրաքանչյուրի համար՝ 34,4 ԱՄՆ դոլար (16.500 ՀՀ դրամ ):<br>▪ 180 հատ դպրոցական գրապահարան: Յուրաքանչյուրի համար՝ 91,2 ԱՄՆ դոլար (44.000 ՀՀ դրամ ):<br>▪ 100 միավոր (1 միավորը՝ 1 սեղան և 4 աթոռ ) նախադպրոցական սեղան-աթոռներ: Յուրաքանչյուրի համար՝ 75,0 ԱՄՆ դոլար ( 36.000 ՀՀ դրամ ):<br>▪ 25 հատ նախադպրոցական պահարան (8 տեղանոց): Յուրաքանչյուրի համար՝ 83,3 ԱՄՆ դոլար ( 40.000 ՀՀ դրամ ):<br>▪ 250 հատ դպրոցական կախիչ ( 8տեղանոց ): Յուրաքանչյուրի համար՝ 20,8 ԱՄՆ դոլար ( 10.000 ՀՀ դրամ ): |



| | | |
|---|---|---|
| | | (Միավորների արժեքների դոլարային միջինացված արտահայտությունները հաշվարկված են ելնելով ՀՀ ԿԲ-ի ներկայիս փոխարժեքային կուրսից ):<br>Ծրագրի ընդհանուր արժեքի 10.000 ԱՄՆ դոլարի չափով գումարը նախատեսվում է գույքի տեղափոխումն ու բաշխումը իրականացնելու համար (բեռնատար մեքենաների վարձավճար, վառելանյութ) : |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական գումարը նախատեսվում է ծրագրի ընդհանուր արժեքի 12% տոկոսը, որը կազմում է 30.000 ԱՄՆ դոլար: Այս գումարը, ըստ կազմված նախահաշվի, պետք է օգտագործվի հետևյալ ծախսերի համար.<br>▪ Վարձատրվող աշխատավարձերի (ներառյալ օրենքով սահմանված հարկերը ) վճարումներ - 23.370 ԱՄՆ դոլար<br>▪ գրասենյակի վարձակալության ծախսեր - 4.000 ԱՄՆ դոլար<br>▪ ՀՀ մարզեր և ԼՂՀ գործուղման ծախսեր - 1.500 ԱՄՆ դոլար<br>▪ կապի և հաղորդակցության ծախսեր - 880 ԱՄՆ դոլար<br>▪ գովազդային աշխատանք (ցուցատախտակների պատրաստում ) - 250 ԱՄՆ դոլար |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման շրջանակներում Հիմնադրամը համագործակցելու է ՀՀ Կրթության և Գիտության նախարարության հետ, ինչպես նաև մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը իրականացվում է Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհուրդի կողմից: Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգվող հանձնաժողովին՝ Ծրագրի ընթացքի և արդյունքների մասին: |

[illegible] Հիմնադրամի տնօրեն — Կարեն Բունիաթյան

FOUNDATION 02566785

26.նոյեմբերի.2015թ

13/8

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1333 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-857-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/36546-15 և N 06/3-3/36580-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2015» ծրագրի մասին» N Մ-857-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1205-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2015 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N IS-180-10-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կանխիկ ձևով մուտքագրված դրամական նվիրատվությունների հավաքագրում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1334 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N Մ-330-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 16-ի N 07/80-2/35327-15 և նոյեմբերի 11-ի N 06/3-3/34591-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 22-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հիշում եմ և պահանջում» ծրագրի մասին» N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոմեթեյ Ռիելթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02565422) 2015 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N 03/0109 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճաշկերույթի կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 9,652,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01510288) 2015 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամսագրերի տպագրում՝ 2,725,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00830786) 2015 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N 0022/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Մամփրե արքան» գրքի անգլերեն լեզվով տպագրական աշխատանքների իրականացում՝ 694,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00830786) 2015 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N 0022/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արհավիրքի օրերը» գրքի ռուսերեն լեզվով տպագրական աշխատանքների իրականացում՝ 3,563,730 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Աութդոր էֆեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02615612) 2015 թվականի ապրիլի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գովազդային պաստառների տպագրում և տեղադրում՝ 1,426,240 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507456) 2015 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջոցառումների իրականացում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1335 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 24-ի N 07/80-2/36484-15 և նոյեմբերի 19-ի N 06/3-3/35826-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00076315) 2015 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված N Պ 15-27 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեք ավտոմեքենայի ձեռքբերում՝ 59,650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2015 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված N 25-28102015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 1,209,796 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ծաղկաձորի ստեղծագործական տուն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03003504) 2015 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընդունել և սպասարկել սեմինարի մասնակիցներին՝ 295,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ֆարմ Թրասթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00043772) 2015 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N 18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի ձեռքբերում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման օրինակը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1336 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒ-ԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 16-ի N 07/80-235155-15 և նոյեմբերի 13-ի N 06/3-3/35085-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա և 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱսՇին Տրանս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01249476) 2015 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված N 01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական տեխնիկայի վարձակալում՝ 1,170,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2015 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N 02/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրատար խողովակների ձեռքբերում՝ 15,596,607 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1337 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-905-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38015-15 և դեկտեմբերի 1-ի N 06/3-3/37618-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-905-Ա որոշմամբ (2009 թվականի հուլիսի 17-ի N Մ-458-Ա, 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-860-Ա և 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-979-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի 8-րդ կետում «2007 թ. նոյեմբերից մինչև 2015 թ. դեկտեմբեր» բառերը փոխարինել «2007 թ. նոյեմբերից մինչև 2018 թ. դեկտեմբեր» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1338 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/29545-15 և հոկտեմբերի 6-ի N 06/3-3/29294-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/14/14903-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8760-15 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի N 01/14.2/4768-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 113,413,776 դրամ ընդհանուր արժողությամբ «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայան

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի կողմից

«30» նոյեմբերի 2015թ.

«Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և դաստիարակության»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | 1. ապահովել «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի սաների և հարակից համայնքների նախադպրոցական տարիքի թվով 120 երեխաների դաստիարակությունը և ընդհանուր զարգացումը;<br>2. ստեղծել զարգացնող միջավայր, որը կնպաստի նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվ կյանքին և ստեղծագործական զարգացմանը ;<br>3. ապահովել «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի սաների ինտեգրացիան հասակակիցների միջավայրում;<br>4. նպաստել նախադպրոցական տարիքի երեխաների կարողությունների, հմտությունների ունակությունների զարգացմանը և ինքնուրույնության ձևավորմանը;<br>5. նպաստել ծնողների հոգեբանամանկավարժական և երեխաների իրավունքների մասին գիտելիքների ձեռքբերմանը և հարստացմանը;<br>Այս կենտրոնում համաժամանակյա գործում են 5 խմբակներ՝ յուրաքանչյուրում 20-25 երեխա: Ընդ որում՝ վերը նշված 120 երեխաներից առավելագույնը սոսկ 15 երեխաներն են հանդիսանում մեր կազմակերպության սաները, իսկ մնացյալ 105 երեխաները հարակից 4 համայնքների՝ Կոտայք, Նոր-Գյուղ, Արամուս և Ակունք գյուղերի երեխաներն են, քանի որ մեր կենտրոնը նախադպրոցական տարիքի երեխաների համար գործող միակ հաստատությունն է այդ տարածքում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |



| | | |
|---|---|---|
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Կոտայքի Մարզ, գ. Կոտայք, Հերման-Գմայների փողոց 1<br>«Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և զարգացման կենտրոնն» իր համապատասխան շինությամբ գտնվում է Կոտայքի մարզի Կոտայք գյուղի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 6 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Եթե ՍՕՍ Մանկական Գյուղ «Կոտայք» մասնաճյուղում բնակվող դպրոցական տարիքի երեխաները հաճախում են մանկական գյուղին հարակից Կոտայք և Նոր-Գյուղ համայնքների միջնակարգ դպրոցները, ապա նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և դաստիարակության համար գործում է այս կենտրոնը, որն իր շենքային պայմաններով, ձևավորմամբ և կահավորմամբ սպասարկում է 120 երեխաների:<br>Ծրագիրն առնչվում է սոցիալական, հոգեբանական և կրթական բնագավառներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Տարեկան կտրվածքով ծրագրի բյուջեն կազմում է 37 804 592 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 9 451 148 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 9 451 148 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 9 451 148 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 9 451 148 ՀՀ դրամ<br>2016-2018 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 113 413 776 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և մանկական գյուղին հարակից (Կոտայք, Նոր Գյուղ, Արամուս, Ակունք) համայնքների 3-5 տարեկան 120 երեխաներ և նրանց ծնողները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 931 900 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>2. Իրավաբանական և հոգեբանամանկավարժական աջակցություն ծնողներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 050 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>3. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 411 995 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>4. գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր |

| | | |
|---|---|---|
| | | տարվա համար կազմում է մոտ 1 193 500 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության;<br>5. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 26 416 690 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>5.1 մանկապարտեզի դաստիարակներ՝ 21 300 034 ՀՀ դրամ;թվով՝ 6<br>5.2 մանկապարտեզի դայակներ՝ 5 116 656 ՀՀ դրամ; թվով՝ 3<br>Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>6. Հեռահաղորդակցություն, ինտերնետ `յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 168 000 ՀՀ դրամ;<br>7. Կազմակերպական ծախսերը յուրաքնչյուր տարվա համար կազմում են մոտ 3 632 507 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով: |
| 10. | Ձեր բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 931 900 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1 կրթա-դաստիարակչական պրոցեսի կազմակերպման համար սնունդ և լվացող նյութեր յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 876 500 ՀՀ դրամ<br>1.2 գրենական պիտույքներ, խաղալիքներ և խաղեր երեխաների համար, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 500 000 ՀՀ դրամ<br>1.3 նախասիրությունների խմբակներ, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 355 400 ՀՀ դրամ<br>1.4 հանդեսներ, տոն-զվարճություններ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 200 000 ՀՀ դրամ<br>2. Իրավաբանական և հոգեբանամանկավարժական աջակցություն ծնողներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 050 000 ՀՀ դրամ,<br>3. Կոմունալ ծառայություններ ` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 411 995 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1 ջրամատակարարման վարձավճար՝ 40 000 ՀՀ դրամ;<br>3.2 էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 881 995 ՀՀ դրամ;<br>3.3 գազամատակարարման վարձավճար՝ 1 490 000 ՀՀ դրամ;<br>4. Ինչպես կազմակերպության մյուս ծրագրերն ու դրանց իրականացման համար նախատեսված շինություններն ու դրանցում գտնող գույքը ձեռք են բերված կազմակերպության միջոցներով և հանդիսանում են կազմակերպության սեփականությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս կենտրոն օրեկան միջինը 120 երեխաներ են հաճախում, ինչպես կենտրոնի շինությունը, այնպես էլ դրանում գտնվող գույքը համապատասխանաբար ենթարկվում են մաշվածության՝ կազմակերպությունը յուրաքանչյուր տարի որոշակի գումար է առանձնացնում |



| | | |
|---|---|---|
| | | կահույքի՝ պահարաններ, գրասեղաններ, սեղաններ և աթոռներ, խոհանոցային և փափուկ կահույք, ինչպես նաև էլեկտրական և այլ սարքավորումների՝ սառնարաններ, լվացքի մեքենաներ, գազօջախներ, վառարաններ, ջեռուցիչներ, փոշեկուլներ, արդուկներ և այլն վերանորոգման կամ մասնակի փոխարինման համար:<br>Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 193 500 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>4.1 տարածքի և շինությանների (մանկապարտեզի շենքեր, ոռոգման, էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում, պահպանում և արդիականացում՝ 402 500 ՀՀ դրամ;<br>4.2 կահույքի, սարքավորումների ձեռք բերում և վերանորոգում՝ 791 000 ՀՀ դրամ;<br>5. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 150 000 ՀՀ դրամ;<br>6. Հեռահաղորդակցություն, ինտերնետ ` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 168 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>6.1. հեռախոսի վարձավճար 60 000 ՀՀ դրամ;<br>6.2. ինտերնետի վարձավճար 108 000 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը յուրաքանչյուր տարվա համար կազմում են մոտ 3 632 507 ՀՀ դրամ, որը կազմում է տարեկան բյուջեի 9.60 տոկոսը:<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 482 507<br>1.1. աշխատավարձ (սպասարկող անձնակազմ)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 332 507 ՀՀ դրամ; թվով 2 պահակ<br>1.2. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 150 000 ՀՀ դրամ:<br>2. Գրասենյակի նյութատեխնիկական ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 150 000 ՀՀ դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն Ա. Քոչարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1339 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏԻՊԻ ԽՆԱՄՔ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 07/80-2/29699-15 և հոկտեմբերի 6-ի N 06/3-3/29270-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/14/14905-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8759-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N 01/19.2/4771-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 816,124,617 դրամ ընդհանուր արժողությամբ «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Ա. Եսայան
«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
«30» Նոյեմբերի 2015թ.

«Տավուշի մարզ,Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ▪ իրականացնել մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն;<br>• մինչև 14-15 տարեկան խնամազուրկ երեխաների համար ձևավորել հոգատար և ապահով ընտանեկան միջավայր, որը կապահովի նրանց ներդաշնակ զարգացումը և հետագա ինտեգրացումը;<br>• «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ստեղծում է նոր ընտանիք: Երեխաները դառնում են ՍՕՍ-ընտանիքի անդամ և ապրում են ՍՕՍ-ընտանեկան տներում, ընդ որում յուրաքանչյուր ընտանեկան տանը ապրում, խնամվում և դաստիարակվում են միջինը մինչև 7 երեխաներ: Յուրաքանչյուր ընտանեկան տուն ներառում է 4 ննջասենյակ, հյուրասենյակ, խոհանոց և ճաշասենյակ, 4 սանհանգույց՝ համապատասխան լվացարաններով և զուգարաններով, մեկ տնտեսական սենյակ և խորդանոց: Յուրաքանչյուր ՍՕՍ-ընտանիք ղեկավարվում է ՍՕՍ-մայր դաստիարակի կողմից, որն ապրում և աշխատում է այդ տանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8, բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Տավուշի Մարզ, ք. Իջևան,Երևանյան 10<br>ՍՕՍ Մանկական Գյուղ « Իջևան » մասնաճյուղը գտնվում է Տավուշի մարզի Իջևան քաղաքի քաղաքապետարանի կողմից անհատույց օգտագործման համար հանձնված շուրջ 1.7 հեկտար ընդհանուր հողատարածքի վրա: Այն բաղկացած է 14 ընտանեկան տներից, վարչա-տնտեսական և ուսումնական շինություններից: Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույքը կազմակերպության սեփականությունն են և հիմնականում ձեռք են բերվել «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, |



| | | |
|---|---|---|
| | | Ավստրիա) կողմից հատկացված միջոցներով:<br>Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2016- 2018 թվականների կտրվածքով ծրագրի տարեկան բյուջեն կկազմի մոտ 272 041 539 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն<br>I եռամսյակում 70 131 595 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 66 495 235 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 66 495 235 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 68 919 474 ՀՀ դրամ<br>2016-2018 թթ. ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 816 124 617 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում ծնողական խնամքից զրկված մինչև 15 տարեկան ընդհանուր թվով 91 երեխաներ, որոնք ՍՕՍ Մանկական Գյուղ են ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան հանձնաժողովների որոշումների և աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա:<br>Սաների ընդունելությունն իրականացվում է տեղական համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համապատասխան որոշմամբ, աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա և հիմնականում ընդգրկվում են կամ երկողմանի, կամ միակողմանի ծնողական խնամքից զրկված երեխաներ ինչպես նաև սոցիալապես որբացած և լքված երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր թվով 91 երեխաների շարունակական խնամքի և դաստիարակության անընդմեջ իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 84 555 865 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>2. Ուրջտարյա կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում՝յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 32 563 000 ՀՀ դրամ,<br>2.1. քիչ թիվ չեն կազմում նաև սոցիալապես որբացած և լքված երեխաները, որոնք իրենց ծնողների անտարբերության, բռնության, անտեսման կամ էլ ընտանեկան բարդ ու խճճված հանգամանքների բերումով է, որ հայտնվում են կացմակերպության խնամքի ներքո: Որպեսզի կարողանանք ապահովել նրանց մտավոր, հոգևոր և ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, սաների համար կազմակերպվում են նաև արտադասարանային պարապմունքներ և նախասիրությունների խմբակներ:<br>Նախասիրությունների խմբակների , ինչպես նաև մինչ ՍՕՍ-ՄԳ ծրագրի մեջ ներգրավվելը հանրակրթական դպրոցներ չհաճախած կամ քերհաճախած երեխաների համար, ինչպես նաև հատուկ դասընթացների և առանձնահատուկ ընդունակություններ ունեցող երեխաների արտադասարանային |

| | | |
|---|---|---|
| | | պարապմունքների կազմակերպում և ուսումնական հաստատություններում վճարովի հոսքերում սովորողների ուսման վարձեր (մասնագետների վարձավճար, անհրաժեշտ պարագաների և նյութերի ձեռքբերում )՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 766 500 ՀՀ դրամ;<br>2.2 մարզա-մշակութային միջոցառումներ, մարզական խաղեր, օլիմպիադաներ, մրցաշարեր, համերգներ, թատերական և կրկեսային ներկայացումներ, էքսկուրսիաներ, մանկական դիսկոտեկներ, ազգային ավանդական և միջազգային տոնական միջոցառումներ, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 431 000 ՀՀ դրամ;<br>2.3. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 24 365 500 ՀՀ դրամ;<br>*Կազմակերպությունը չունի սեփական ճամբարային կամ առողջարանային համալիրներ և ամառային արձակուրդների շրջանում երեխաների հանգիստը առավել բովանդակալից անցկացնելու և իրենց հասակակիցների հետ ինտեգրվելու նպատակով կազմակերպությունը նրանց ճամբարային ծրագիրը կազմակերպում է գործող որևէ ճամբարային համալիրում և ըստ կնքված պայմանագրերի՝ կատարում է բոլոր համապատասխան վճարումները: Առողջական խնդիրներ ունեցող երեխաներին կազմակերպությունը տանում է համապատասխան առողջարանային համալիրներ և դարձյալ կատարում է բոլոր վճարումները:*<br>Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով,իսկ ամառային հանգիստը կազմակերպվում է հուլիս, օգոստոս ամիսներին;<br>3. Շուրջտարյա առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում և հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 1 603 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության՝<br>3.1. երեխաների առաջնային առողջության պահպանում, և բուժսպասարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 943 000 ՀՀ դրամ;<br>3.2. հոգեբանական աջակցություն երեխաներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 660 000 ՀՀ դրամ<br>4. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 11 711 020 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>5. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 390 000 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության;<br>6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 93 605 406 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով՝<br>6.1. ՍՕՍ-մայր դաստիարակներ՝ 50 771 843 ՀՀ դրամ; թվով 14 աշխատակից |



| | | |
|---|---|---|
| | | 6.2. ՍՕՍ-մայր դաստիարակների օգնականներ՝ 21 179 358 ՀՀ դրամ; թվով 14 աշխատակից<br>6.3. մանկավարժական և բժշկական անձնակազմ՝ 18 504 714 ՀՀ դրամ; թվով 6 աշխատակից<br>6.4. դպրոցական ավտոբուսի վարորդ՝ 3 149 491 ՀՀ դրամ; թվով 1 աշխատակից<br>7. Հեռահաղորդակցություն, յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 256 000 ՀՀ դրամ;<br>8. Կազմակերպական ծախսերը կազմում են մոտ 41 357 248 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով; |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնելու համար կազմակերպությունը տրամադրում է ամսեկան ընտանեկան բյուջե, որը ներառում է նրանց սննդի, հիգիենայի պարագաների, լվացող նյութերի, հագուստի, դպրոցական և գրպանի ծախսերի, ինչպես նաև մանր փոխանակումների գումարները: Մանր փոխանակումները, որպես առանձին ծախսերի հոդված, ներառում է տարբեր տեսակի կենցաղային պիտույքների և պարագաների փոխարինում (ափսեներ, բաժակներ, էլեկտրական լամպեր, արդուկ, արդուկի սեղան, սրբիչներ, ինչպես նաև կենցաղային այլևայլ պարագաներ)՝ դրանց մաշվածության, շարքից դուրս գալու և այլևս պիտանի չլինելու դեպքում:<br>Յուրաքանչյուր նոր երեխա ընդունելիս կազմակերպությունը միանվագ հատկացնում է գումար (տես. «նոր երեխայի մուտքի գումար») նրանց համար հագուստ և առաջին անհրաժեշտության այլ պարագաներ ձեռք բերելու համար:<br>1. Ընդհանուր թվով 91 երեխաների խնամքի և դաստիարակության իրականացում ՍՕՍ-ընտանիքի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 84 555 865 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1. սնունդ՝ 38 719 800 ՀՀ դրամ<br>1.2. լվացող նյութեր և հիգիենայի պարագաներ՝ 4 126 500 ՀՀ դրամ<br>1.3. հագուստ և կոշիկ՝ 16 391 180 ՀՀ դրամ<br>1.4. դպրոցական ծախսեր՝ 6 814 420 ՀՀ դրամ<br>1.5. գրպանի գումար՝ 3 029 630 ՀՀ դրամ<br>1.6. այլ ընտանեկան ծախսեր՝ 13 111 920 ՀՀ դրամ<br>1.7. առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթի ձեռքբերումների եկամտային հարկ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 084 475 ՀՀ դրամ,<br>1.8. կենսաբանական ընտանիքի աջակցություն՝ 1 277 940 ՀՀ դրամ<br>2. 91 երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարային և առողջարանային համալիրներում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 24 365 500 ՀՀ դրամ;<br>3. Կոմունալ ծառայություններ ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 11 711 020 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1. ջրամատակարարման վարձավճար՝ 824 400 ՀՀ դրամ;<br>3.2. էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 2 217 120 ՀՀ դրամ;<br>3.3. գազամատակարարման վարձավճար՝ 8 569 500 ՀՀ դրամ;<br>3.4. աղբահանության վարձավճար՝ 100 000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | | 4. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 390 000 ՀՀ դրամ, այդ թվում`<br>4.1. մանկական գյուղի տարածքի և շինությունների (ընտանեկան տներ, ոռոգման, էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում, պահպանում` և արդիականացում, գործիքների և պարագաների ձեռք բերում` 1 890 000 ՀՀ դրամ;<br>4.2. կահույքի վերանորոգում` 50 000 ՀՀ դրամ;<br>4.3. էլեկտրական սարքավորումների` սառնարանների, գազօջախների, փոշեկուլների, լվացքի մեքենաների, համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում` 2 450 000 ՀՀ դրամ;<br>5. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 151 668 ՀՀ դրամ;<br>6. Հեռահաղորդակցություն յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 256 000 ՀՀ դրամ, այդ թվում`<br>6.1. հեռախոսի վարձավճար 756 000 ՀՀ դրամ;<br>6.2. ինտերնետի վարձավճար 1 040 000 ՀՀ դրամ;<br>6.3. փոստային առաքումների վարձավճար 460 000 ՀՀ դրամ;<br>7. Աշխատակիցների գործուղման ծախսեր և տրանսպորտային միջոցների (Opel Frontera, ՎԱԶ 21214 Նիվա, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Hyundai մակնիշի միկրոավտոբուս) նորոգում, սպասարկում, շահագործում` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 462 460 ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը 2016-2018 թվականներից յուրաքանչյուրի համար կազմում են մոտ 41 357 248 ՀՀ դրամ, որոնք համապատասխանաբար կազմում են 2016-2018 թվականների տարեկան բյուջեի 15.20 տոկոսը :<br>Այդ թվում`<br>1. Աշխատակազմի ծախսեր` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 32 628 788 ՀՀ դրամ, ընդ որում`<br>1.1 աշխատավարձ (վարչական և սպասարկող անձնակազմ) ` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 28 477 120 ՀՀ դրամ, թվով 8 աշխատակից,<br>1.2 աշխատակազմի վերապատրաստման ծախսեր` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 151 668 ՀՀ դրամ;<br>2. Աշխատակիցների գործուղման ծախսեր և տրանսպորտային միջոցների (Opel Frontera, ՎԱԶ 21214 Նիվա, MITSUBISHI մարդատար մեքենաներ, Hyundai մակնիշի միկրոավտոբուս) նորոգում, սպասարկում, շահագործում` յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 462 460 ՀՀ դրամ,<br>3. Գրասենյակի նյութատեխնիկական ապահովում յուրաքանչյուր տարվա համար` 1 266 000 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության գնահատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից` պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

[illegible]ին տնօրեն`          Ա. Քոչարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1340 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԽՆԱՄՔ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 07/80-2/29697-15 և հոկտեմբերի 6-ի N 06/3-3/29269-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/14/14901-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8758-15 ու Երևանի քաղաքապետի 2015 թվականի հոկտեմբերի 13-ի N 02/35-52162h եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 577,237,893 դրամ ընդհանուր արժողությամբ «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայան

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի կողմից

«30» նոյեմբերի 2015թ.

«Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Առանց ծնողական խնամքի մնացած 15-23 տարեկան պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն՝ ընտանեկան մոտեցման կիրառմամբ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ ք. Երևան Հր. Քոչարի շենք 8 բն. 18-19, Երզնկյան փող. տուն 79 և Նար-Դոսի փող. 34 հասցեներում գտնվող երիտասարդական տներում:<br>Այս բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև դրանցում օգտագործվող գույքը կազմակերպության սեփականությունն են և հիմնականում ձեռք են բերվել «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) կողմից հատկացված միջոցներով:<br>Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Տարեկան կտրվածքով ծրագրի բյուջեն կազմում է 192 412 631 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 48 265 658 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 48 015 658 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 47 915 658 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 48 215 657 ՀՀ դրամ<br>2016-2018 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 577 237 893 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ–Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում ծնողական խնամքից զրկված 15-23 տարեկան այն պատանիներն ու երիտասարդները, ովքեր ընդգրկված են եղել ՍՕՍ Մանկական Գյուղ «Կոտայք» մասնաճյուղի ծրագրում: Ներկայումս ծրագրում ընդգրկված են 95 պատանիներ ու երիտասարդներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1.Որպեսզի սաները կարողանան հոգալ իրենց առօրյա նիստուկացը, կազմակերպությունը՝ աստիճանական մարման սկզբունքով, տրամադրում է ամսեկան նպաստ, որը ներառում է նրանց սննդի, հիգիենայի պարագաների, լվացող նյութերի, հագուստի, ուսումնական և գրպանի ծախսերի գումարները: Նպաստները տնօրինվում են երիտասարդների կողմից: Նպաստի չափը մնում է անփոփոխ, եթե երիտասարդը ուսանող է և ցուցաբերում է միջինից բարձր առաջադիմություն:<br>Ընդհանուր թվով 95 երիտասարդների խնամքի և դաստիարակության իրականացում ՍՕՍ-երիտասարդական տների և կիսաանկախ բնակության փուլի շրջանակներում (ընտանեկան բյուջե)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 44 748 460 ՀՀ դրամ, նույն թվում<br>1.1 սնունդ՝ 13 616 646 ՀՀ դրամ<br>1.2 լվացող նյութեր և հիգիենայի պարագաներ՝ 1 625 690 ՀՀ դրամ<br>1.3 հագուստ և կոշիկ՝ 6 518 998 ՀՀ դրամ<br>1.4 դպրոցական ծախսեր՝ 948 461 ՀՀ դրամ<br>1.5 գրպանի գումար՝ 4 155 110 ՀՀ դրամ<br>1.6 այլ ընտանեկան ծախսեր՝ 1 625 690 ՀՀ դրամ<br>1.7 կիսաանկախ փուլում գտնվող երիտասարդների նպաստ 16 257 865 ՀՀ դրամ;<br>Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>2. Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների և ամառային հանգստի կազմակերպում՝յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 33 803 950 ՀՀ դրամ: Կրթա-դաստիարակչական ծրագրերի, մարզա-մշակութային միջոցառումների ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով,իսկ ամառային հանգիստը կազմակերպվում է հուլիս,օգոստոս ամիսներին;<br>Այն երիտասարդները, ովքեր չեն ցանկանում իրենց ուսումը շարունակել ԲՈՒՀ-երում՝ մասնագիտական կրթություն ստանալուց հետո անցնում են աշխատանքի և շարունակում են ապրել երիտասարդական տանը մինչև 18-19 տարեկան դառնալը: ԲՈՒՀ ընդունվել ցանկացողները հաճախում են Երևանյան դպրոցներ և անհրաժեշտության դեպքում կազմակերպությունը վարձում է մասնագետներ՝ նրանց ԲՈՒՀ-ական ընդունելության քննություններին նախապատրաստելու համար: Վճարովի համակարգում ուսանելու դեպքում կազմակերպությունը վճարում է բոլոր ուսումնական վարձերը: Կազմակերպությունը երիտասարդներին աջակցում է մասնագիտական պիտույքների ձեռք բերման հարցերում: |

| | | |
|---|---|---|
| | | 2.1 մասնագիտական պատրաստության պարապմունքներ (մասնագետների վարձավճար) և ուսման վարձեր յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 25 976 450 ՀՀ դրամ<br>2.2 մասնագիտական պիտույքների և պարագաների ձեռքբերում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 865 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար;<br>2.3 բովանդակալից ժամանցի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 500 000 ՀՀ դրամ<br>2.4 ամառային հանգստի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 462 500 ՀՀ դրամ;<br>3. Առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում և հոգեբանական աջակցություն երիտասարդներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 5 343 840 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1 երիտասարդների առաջնային առողջության պահպանում, և բուժսպասասարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 094 840 ՀՀ դրամ;<br>3.2 հոգեբանական աջակցություն երիտասարդներին՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ՝ 249 000 ՀՀ դրամ<br>Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>4. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 013 478 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>5. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 554 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության;<br>6. Երիտասարդների առաջին անհրաժեշտության պարագաներ բնակության կիսաանկախ փուլ տեղափոխվելիս, նրանց համար վարձակալված բնակարանների վարձավճար և աջակցություն բնակարան ձեռքբերելու հարցերում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 15 405 556 ՀՀ դրամ: Երիտասարդների առաջին անհրաժեշտության պարագաներ բնակության կիսաանկախ փուլ տեղափոխվելիս և բնակարան ձեռքբերելու ծախսերը կատարվում են ըստ անհրաժեշտության,իսկ նրանց համար վարձակալված բնակարանների վարձավճարների ծախսերը՝ ամսեկան կտրվածքով՝<br>6.1 երիտասարդների առաջին անհրաժեշտության պարագաներ բնակության կիսաանկախ փուլ տեղափոխվելիս՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 050 000 ՀՀ դրամ<br>6.2 երիտասարդների համար վարձակալված բնակարանների վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 9 355 556 ՀՀ դրամ<br>6.3 աջակցություն երիտասարդներին բնակարան ձեռքբերելու հարցերում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 000 000 ՀՀ դրամ; |



| | | |
|---|---|---|
| | | 7. Երիտասարդների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 849 200 ՀՀ դրամ,<br>8. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 53 029 619 ՀՀ դրամ, նույն թվում՝<br>8.1 երիտասարդական տների մանկավարժներ՝ 49 728 157 ՀՀ դրամ, թվով 15 աշխատակից,<br>8.2 երիտասարդական տների խոհարարներ՝ 3 301 462 ՀՀ դրամ, թվով 3 աշխատակից,<br>9. Հեռահաղորդակցություն , ինտերնետ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 081 800 ՀՀ դրամ,<br>10. Հանրային կապեր և ներկայացուցչական ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 179 000 ՀՀ դրամ,<br>11. Կազմակերպական ծախսերը յուրաքնչյուր տարվա համար կազմում են մոտ 15 403 728 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Մասնագիտական պիտույքների և պարագաների ձեռքբերում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 865 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար;<br>2. ամառային հանգստի կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 462 500 ՀՀ դրամ;<br>3. Կոմունալ ծառայություններ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 5 013 478 ՀՀ դրամ;<br>3.1 էլեկտրաէներգիայի վարձավճար՝ 1 655 000 ՀՀ դրամ;<br>3.2 ջրամատակարարման վարձավճար՝ 464 800 ՀՀ դրամ;<br>3.3 գազամատակարարման վարձավճար 2 550 000 ՀՀ դրամ<br>3.4 աղբահանություն վարձավճար՝ 98 000 ՀՀ դրամ;<br>3.5 տեղական հարկեր(գույքահարկ)՝ 245 678 ՀՀ դրամ;<br>Ինչպես երիտասարդական տները, այնպես էլ դրանցում գտնվող գույքը ձեռք են բերված կազմակերպության միջոցներով և հանդիսանում են կազմակերպության սեփականությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երիտասարդական տներում միջինը տարեկան 12 սաներ են ապրում և գույքը համապատասխանաբար ենթարկվում է մաշվածության՝ կազմակերպությունը յուրաքանչյուր տարի որոշակի գումար է առանձնացնում կահույքի՝ մահճակալներ, պահարաններ, գրասեղաններ, սեղաններ և աթոռներ, խոհանոցային և փափուկ կահույք, ինչպես նաև էլեկտրական և այլ սարքավորումների՝ սառնարաններ, լվացքի մեքենաներ, գազօջախներ, վառարաններ, ջեռուցիչներ, փոշեկուլներ, արդուկներ և այլն վերանորոգման կամ մասնակի փոխարինման համար:<br>4. Գույքի ձեռքբերում, փոխարինում, վերանորոգում և պահպանում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 554 000 ՀՀ դրամ; |

| | | |
|---|---|---|
| | | 4.1 Երիտասարդական տների շինությունների (երտասարդկան տներ, էլեկտրասնուցման, գազամատակարարման և ջրամատակարարման համակարգեր) վերանորոգում, պահպանում և արդիականացում՝ 4 673 000 ՀՀ դրամ;<br>4.2 կահույքի ձեռք բերում և վերանորոգում 2 301 000 ՀՀ դրամ;<br>4.3 էլեկտրական սարքավորումների՝ սառնարանների, գազօջախների, լվացքի մեքենաների, համակարգիչի ձեռք բերում և վերանորոգում՝ 1 580 000 ՀՀ դրամ;<br>5. Երիտասարդների տրանսպորտային ծապսերի փոխհատուցում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 849 200 ՀՀ դրամ:<br>6. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 750 000 ՀՀ դրամ;<br>7. Հեռահաղորդակցություն, ինտերնետ և գրասենյակային պարագաներ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 081 800 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>7.1 հեռախոսի վարձավճար 2 362 800 ՀՀ դրամ;<br>7.2 ինտերնետի վարձավճար 1 719 000 ՀՀ դրամ;<br>8. Աշխատակիցների գործուղման ծախսեր և տրանսպորտային միջոցի(Opel Astra մակնիշի ավտոմեքենայի) նորոգում, սպասարկում, շահագործում,՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 004 250 ՀՀ դրամ:<br>9. Գրասենյակի նյութատեխնիկական ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 2 594 000 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը յուրաքանչյուր տարվա համար կազմում են մոտ 15 403 728 ՀՀ դրամ, որը կազմում է տարեկան բյուջեի 8.01 տոկոսը:<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 9 805 478 ՀՀ դրամ, ընդ որում՝<br>1.1. աշխատավարձ (վարչական անձնակազմ)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 9 055 478 ՀՀ դրամ, թվով 3 աշխատակից;<br>1.2. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 750 000 ՀՀ դրամ;<br>2. Աշխատակիցների գործուղման ծախսեր և տրանսպորտային միջոցի(Opel Astra մակնիշի ավտոմեքենայի) նորոգում, սպասարկում, շահագործում,՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 004 250 ՀՀ դրամ:<br>3. Գրասենյակի նյութատեխնիկական ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է 2 594 000 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության ստուգումների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1341 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՈՒ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՄԱՆԿԱԼՔՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 07/80-2/29711-15 և հոկտեմբերի 6-ի N 06/3-3/29272-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/14/14882-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/8762-15, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 7-ի N 01/5118-15, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 5-ի N 01/21.1/4769-15 ու Երևանի քաղաքապետի 2015 թվականի հոկտեմբերի 13-ի N 02/35-52164h եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 458,211,339 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի և Տավուշի մարզպետներին ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայան

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի կողմից

« 30 » նոյեմբերի 2015թ.

«Գյումրի,Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելման»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ինչպես «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպության , այնպես էլ Հայաստանյան «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի համար ռազմավարական առաջնահերթություն է մանկալքության կանխարգելմանն ուղղված գործունեությունը: Այս ուղղությամբ կազմակերպությունը ծրագրեր է իրականացնում Գյումրի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում: Այս ծրագրերն ուղղված են ընտանիքների ամրապնդմանը և երեխաներին լքելու դեպքերի ռիսկայնության նվազեցմանը: Ընտանիքներին կազմակերպությունը ցուցաբերում է ամենայն աջակցություն, նրանց սոցիալ-իրավական խնդիրների, ներընտանեկան բարոյա-հոգեբանական մթնոլորտի բարելավման, ինչպես նաև զբաղվածության և առողջապահական հարցերում.<br>Այս ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցությամբ, մասնավորապես՝ նրանց կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Գյումրիում ծրագիրն իրականացվում է գործընկեր կազմակերպության կողմից վարձակալած տարածքում, Երևանում՝ Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի շենքում, իսկ Իջևանում՝ թիվ 3 դպրոցի կողմից տրամադրված տարածքում:<br>1. Գյումրի և Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջաններում մանկալքության դեպքերի քանակի նվազեցում ;<br>2. ծրագրի շահառու ծնողների մոտ ծնողավարության գիտելիքների և հմտությունների ավելացում;<br>3. ծրագրի շահառու երեխաների հոգեբանական վերականգնում;<br>4. ծրագրի շահառու ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում;<br>5. ներընտանեկան միջանձնային հարաբերությունների բարելավում: |



| | | |
|---|---|---|
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսվող արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայների փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8 բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Գյումրի և Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն և Արաբկիր վարչական շրջաններում, այն առնչվում է սոցիալական, իրավական և կրթական բնագավառներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Տարեկան կտրվածքով ծրագրի բյուջեն կազմում է 152 737 113 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝<br>I եռամսյակում 37 352 858 ՀՀ դրամ<br>II եռամսյակում 38 994 578 ՀՀ դրամ<br>III եռամսյակում 37 329 578 ՀՀ դրամ<br>IV եռամսյակում 39 060 099 ՀՀ դրամ<br>2016-2018 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 458 211 339 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինտերնացիոնալ» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են սոցիալական ռիսկի ենթակա 1510 երեխաներ և 615 ընտանիքներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է 2016-2018 թվականների ընթացքում (և կրում է շարունակական բնույթ): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 999 000 ՀՀ դրամ:Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով՝<br>1.1. Դպրոցական պարագաների տրամադրում, ուսման վարձերի վճարում, երեխաների հետ արտաժամյա պարապմունքների և նախասիրությունների խմբակների կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 659 000 ՀՀ դրամ;<br>1.2. Նյութեր խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփամ, գունավոր թղթեր, սոսինձ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 340 000 ՀՀ դրամ;<br>2. Առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների |

| | | |
|---|---|---|
| | | դասընթացների կազմակերպում իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 19 010 830 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով՝<br>2.1. առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 740 000 ՀՀ դրամ<br>2.2. անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 940 830 ՀՀ դրամ,<br>2.3. իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքներին սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 330 000 ՀՀ դրամ:<br>3. Ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ ամսեկան որոշակի քանակի սննդի և տարեկան մեկ անգամ հագուստի տրամադրում և տնտեսական կայունացման աջակցություն ծրագրի շահառուներին յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 19 799 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են եռամսյակային կտրվածքով;<br>4. Տրամադրվող տարածքի(Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նվիրատվության կարգով տրամադրված տարածքներ, որոնք օգտագործվում են ծրագրերի իրականացման նպատակով) և սարքավորումների վերանորոգում, կոմունալ ծառայություններ և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 610 900 ՀՀ դրամ: Տրամադրվող տարածքի վերանորոգման ծախսերը և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճարի ծախսերը կատարվում են տարեկան կտրվածքով,իսկ կոմունալ ծառայությունների ծախսերը ամսեկան կտրվածքով;<br>5. Շահառուների համար համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ՝կլոր սեղան և շահառուների խնդիրների քննարկումներ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 947 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են եռամսյակային կտրվածքով;<br>6. Ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 77 039 323 ՀՀ դրամ(4 հոգեբան և 24 սոց.աշխատող): Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով;<br>7. Հեռահաղորդակցություն ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 368 000 |



| | | |
|---|---|---|
| | | ՀՀ դրամ;<br>8. Կազմակերպական ծախսերը յուրաքնչյուր տարվա համար կազմում են մոտ 13 963 060 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսեկան կտրվածքով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Այս ծրագրերի շրջանակներում նաև աջակցություն է ցուցաբերվում երեխաների հոգեբանական կայունության, սոցիալիզացիայի, կրթական և ուսումնական հարցերում: Ելնելով յուրաքանչյուր կոնկրետ ընտանիքի կարիքներից՝ անհրաժեշտության դեպքում, կազմակերպությունը պայմանագրային հիմունքներով ժամանակավորապես աջակցում է «սոցիալական փաթեթով», որը ենթադրում է որոշակի քանակի սննդամթերքի, հագուստի, կոշիկների, գրենական պիտույքների կամ հիգիենայի պարագաների և դեղորայքի տրամադրում՝ ելնելով կոնկրետ ընտանիքի կարիքներից:<br>1. Ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ ամսեկան որոշակի քանակի սննդի և տարեկան մեկ անգամ հագուստի տրամադրում և տնտեսական կայունացման աջակցություն ծրագրի շահառուներին յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 19 799 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1 ամսեկան որոշակի քանակի սննդի և տարեկան մեկ անգամ հագուստի տրամադրում կազմում է մոտ 12 177 000 ՀՀ դրամ<br>1.2 տնտեսական կայունացման աջակցություն ծրագրի համար կազմում է մոտ 7 622 000 ՀՀ դրամ :<br>2. Տրամադրվող տարածքի և սարքավորումների վերանորոգում, կոմունալ ծառայություններ և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 610 900 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>2.1 տրամադրվող տարածքի վերանորոգում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 300 000 ՀՀ դրամ;<br>2.2 համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում 645 000 ՀՀ դրամ;<br>2.3 կոմունալ ծառայություններ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 276 340 ՀՀ դրամ;<br>2.4 գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 389 560 ՀՀ դրամ;<br>3. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 430 400 ՀՀ դրամ;<br>4. Հեռահաղորդակցություն ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 368 000 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>4.1 հեռախոսի վարձավճար՝ 1 400 000 ՀՀ դրամ,<br>4.2 ինտերնետի վարձավճար՝ 968 000 ՀՀ դրամ,<br>5. Գրասենյակների նյութատեխնիկական ապահովում՝յուրաքանչյուր տարվա համար |

| | | |
|---|---|---|
| | | կազմում է մոտ 3 873 000 ՀՀ դրամ; |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը յուրաքնչյուր տարվա համար կազմում են մոտ 13 963 060 ՀՀ դրամ, որը կազմում է տարեկան բյուջեի 9.14 տոկոսը:<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 430 400 ՀՀ դրամ,<br>2. Աշխատակիցների գործուղման և տրանսպորտային ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 659 660 ՀՀ դրամ;<br>3. Գրասենյակների նյութատեխնիկական ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 873 000 ՀՀ դրամ; |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, ինչպես նաև համապատասխան մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների լայն շրջանակների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի, ինչպես նաև ֆինանսատնտեսական և հոգեբանա-մանկավարժական գործունեության աուդիտների իրականացման միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրեն՝ Ա. Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1342 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38081-15 և N 06/3-3/37868-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վլադիմիր Գեորգիի Ավագյանի (անձնագիր N 72 4846802, տրված՝ 07.06.2013թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական ապրանքների և սարքերի (113,660.10 կգ ընդհանուր քաշով, 3,304,048.50 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռն ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1343-Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 07/80-2/37464-15 և դեկտեմբերի 2-ի N 06/3-3/38039-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10694-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N ԱՄ/22.2/13813-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված հաշմանդամների սայլակի բարձերի (27 կգ ընդհանուր քաշով, 2,700 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 780 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ) ներմուծման ծրագիրը: Բեռն անհատույց հանձնվելու է հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպությանը:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1344 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 07/80-2/38221-15 և դեկտեմբերի 4-ի N 06/3-3/38358-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00066784) 2015 թվականի հունիսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային, ռեստորանային սրահի տրամադրման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 303,041 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1345 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 07/80-2/37751-15 և նոյեմբերի 26-ի N 06/3-3/36999-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարք ն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02538542) 2014 թվականի հունիսի 23-ին կնքված N AR 230614/2 պայմանագրում նշված գործարքը (2015 թվականի նոյեմբերի 11-ի փոխանցման հաշիվ 7), որով նախատեսվում է ապրանքների ձեռքբերում՝ 260,131.41 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1346 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-989-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 07/80-2/38004-15 և նոյեմբերի 27 -ի N 06/3-3/37223-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-989-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «156,949,445 դրամ» բառերը փոխարինել «175,449,129 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում ու որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «154,749,445 դրամ» բառերը փոխարինել «173,249,129 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2015 թվականի դեկտեմբերի 8-ի
N 15/15.1/20866-15 ելիցի

23 դեկտեմբերի 2015թ.

No 15/15.1/21963-15

# ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1347-Ա որոշման 1-ի կետում «3,070 կգ քաշով» բառերը փոխարինել «2,903 կգ ընդհանուր քաշով» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**4 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1347 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/38448-15 և դեկտեմբերի 4-ի N 06/3-3/38356-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/ 10807-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N ԱՄ/22.2/14060-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից «Աջակցություն ինքնորոշված Արցախին» միության կողմից «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված Renault Master 7259 YC94 մակնիշի հաշմանդամների համար հարմարեցված ավտոմեքենայի (նույնականացման համարը՝ VF1FDCJH536073027), էլեկտրական սայլակի և բժշկական սարքերի (3,070 կգ քաշով, 5,265 եվրո արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 3,150 եվրո, բեռի բաշխման ցանկը կցվում է, ԱՄ ՄՁՄ ՄՏ և «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:
2. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի ձևակերպումն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը, [illegible] Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը և [illegible] Հանրապետության առողջապահության նախարարությանը:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

SAA –SOUTIEN A L'ARTSAKH AUTODETERMINE
3, Rue Louise 94140-ALFORTVILLE
Association à but non lucratif régie par la loi de 1901
Journal Officiel du 31.3.1993

**ՆՈՒԻՐԱՏՎՈՒԹԵԱՆ ՅԱՒԱՍՏԱԳԻՐ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՏԱՆ**

Ֆրանսիական « Աջակցութիւն Ինքնորոշուած Արցախին-SOUTIEN A L'ARTSAKH AUTODETERMINE (S.A.A.) » միութիւնը հաւաստիացնում է որ ստորեւ ինքնագիրներով եւ լրացուցիչ տուեալներով նշուած Renault Master մեքենան որ նա գնած է Ֆրանսիայում, նուիրում եւ ուղարկում է իբր նուէր հետեւեալ հաստատութեան՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ
Հասցե՝ Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, Բաղրամյան 58
Հեռ.՝ +374237 6 00 25, +374236 6 45 00, +37491 42 79 60
Mail: hbalasanian@yahoo.com

Նուիրուած Renault Master ի անձագիրը

VEHICULE IDENTIFICATION
RENAULT Master : N° d'immatriculation : 7259 YC 94 – N° d'identification VF1FDCJH536073027

**Սոյն Renault Master Ի գինն է 3500 եւրո**

Նոյն Renault Master ի մէջ դրուած կը լինեն նաեւ

- մի օգտագործուած ելեքտրական սայլակ Մեր Միութեան Հայաստանի մասնաճիւղին (մակնիշ Tiger ap2 N° de série 061130893413՝ 100 քիլո քաշով՝ 500 եւրո արժէքով)- Աջակցություն Ինքնորոշված Արցախին Հայաստանի մասնաճյուղ – լիազորված ներկայացուցիչ՝ Մկրտիչ Տոնոյան հեռ 091232455-094244213

- նաև 23 հաստաթուղթ արկղներ որոնց մէջ կան բժշկական սարքեր եւ պիտույքներ : Դրանցից 21 ը Ստեփանակերտի հիւանդանոցի համար են եւ երկուսը Երեւանի հիւանդանոցին : Ամէն մի արկղ համարակալուած է հիւանդանոցների եւ [illegible] անուններու նշումով :

Նաւը որոնց մէջ դրանք դրուած [illegible] Ֆրանսայի հիւսիսի Le Havre քաղաքից նոյեմբերի 13 ին եւ դրանք կը հասնին Եր[illegible] 3-4 [illegible]

Ալֆորվիլ՝ 2015 նոյեմբերի 7 — [illegible] քարտուղար SAA ի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**9 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1348 - Ա**
**քաղ. Երևան**

# ԱՆՀԱՍ ԲԱՐԵՐԱՐ ՏԱՐԻԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Տարիել Մարգարյանի կողմից ձեռք բերված շտապ օգնության ավտոմեքենայի (2015 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ Z7C2250A0F0001865, 995,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 35,000 ռուսական ռուբլի, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջոցով «Բյուրականի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1349-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N Մ-590-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 7-ի N 1/06.2/12572-15 գրությունը և 2015 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի» N Մ-590-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից ձեռք բերված ամենագնաց 2 ավտոմեքենաները (2014 թվականի արտադրության, «LADA 21214» մակնիշի, նույնականացման համարները՝ XTA212140F2201389, XTA212140F2201390, 9,000,000 դրամ արժեքով, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Սփյուռքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ կողմից
Խ.Աղաբեկյան
«04» «դեկտեմբերի» 2015թ.

## Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը: |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենհոֆպշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | **Ծրագրի կատարողը** | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Սյունիքի մարզ. գ.Շիկահող<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի համար «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ **86 191.6 հազար դրամ**: Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 1-11-ի: |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ. գ. Շիկահող |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 01.05.2015թ. – 31.12.2015թ. |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 10.04.2015թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի ծրագիր՝ 01.05.2015թ.– 31.12.2015թ.,բյուջեն – **86 191.6 հազար դրամ**, այդ թվում |

1. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում (2-րդ, 3-րդ եռամսյակ) - **3 032.9 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Կորպորատիվ համազգեստ | հավաքածու | 30 | 2550.0 |
| Կիսաճտքավոր կոշիկներ | հատ | 30 | 90.0 |
| Աշխատանքային ձեռնոցներ | հատ | 105 | 21.0 |
| Արտադրական հատուկ հագուստ | հատ | 8 | 48.0 |
| Թանաքային քարթրիջներ | հատ | 5 | 200.0 |
| Թուղթ A4 ֆորմատի | տուփ | 33 | 75,9 |
| Չիպային քարտեր ֆոտոխցիկի համար | հատ | 3 | 48.0 |

2. Ընթացիկ նորոգում և պահպանում (3-րդ, 4-րդ եռամսյակ) - **7 950.0 հազար դրամ**, այդ թվում

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | դրամ | 1 | 3500.0 |
| Ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություն | դրամ | 1 | 4450.0 |

3. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (3-րդ, 4-րդ եռամսյակ) - **18 458.7 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Բենզին «Ռեգուլյար» | լիտր | 21190 | 9748.0 |
| Դիզելային վառելիք | լիտր | 5000 | 2250.0 |
| Սեղմված բնական գազ | խ.մ | 15140 | 3255.1 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 8 | 480.0 |
| Ավտոմեքենաների անիվներ /ձմեռային/ | հատ | 4 | 220.0 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 4 | 214.0 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 5 | 240.0 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 4 | 188.0 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 4 | 120.0 |
| Ավտոմեքենաների անիվներ /ձմեռային/ | հատ | 12 | 780.0 |
| Ավտոմեքենաների անիվներ /ձմեռային/ | հատ | 4 | 240.0 |
| Ավտոմեքենաների անիվներ | հատ | 4 | 220.0 |
| Ավտոմեքենաների անիվներ /ձմեռային/ | հատ | 8 | 400.0 |
| Կուտակիչ մարտկոցներ | հատ | 3 | 103.6 |

4. Գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերում (2-րդ, 3-րդ եռամսյակ) - **1 243,0 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Ձիերի կեր /գարի/ | կգ | 3674 | 643.0 |
| Որոշակի ոլորտներում օգտագործվող բույսերի սերմեր | կգ | 200 | 600.0 |

5. Կենցաղային նյութերի ձեռքբերում (2-րդ, 3-րդ եռամսյակ) – **200.4 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Թղթե անձեռոցիկ, երկշերտ | տուփ | 200 | 21.0 |
| Ցախավել | հատ | 6 | 10.2 |
| Կահույքի փայլեցման միջոց | հատ | 10 | 6.0 |
| Սպասքի լվացման փոշի | հատ | 20 | 15.0 |
| Օճառ, հեղուկ | հատ | 40 | 17.2 |
| Զուգարանների մաքրման նյութեր | հատ | 40 | 32.0 |
| Զուգարանի թուղթ | հատ | 200 | 20.0 |
| Հոտազերծիչ, օդի | հատ | 50 | 25.0 |
| Հատակ փայլեցնող պարագաներ | հատ | 18 | 54.0 |

6. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում՝ (3-րդ, 4-րդ եռամսյակ)- **980.3 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W | հատ | 103 | 10.3 |
| Դույլ, ցինկապատ | հատ | 5 | 6.5 |
| Ախտահանիչ նյութեր | դրամ | 1 | 7.0 |
| Վրձիններ | հատ | 10 | 3.5 |
| Էլեկտրոդներ | կգ | 25 | 30.0 |
| Տնտեսող լամպեր | հատ | 20 | 36.0 |
| Բահեր | հատ | 5 | 5.0 |
| Թոխրեր | հատ | 5 | 5.0 |
| Փոցխեր | հատ | 5 | 5.0 |
| Կացիններ | հատ | 5 | 15.0 |
| Այլ զանազան այգեգործական սարքավորումներ | հատ | 40 | 240.0 |
| Այլ զանազան շինարարական նյութեր, ամրաններ | կգ | 230 | 276.0 |
| Մետաղական ցանցեր | հատ | 800 | 320.0 |
| Անկյունակ | մետր | 14 | 21.0 |

7. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (4-րդ եռամսյակ) – **11 000.0 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Ամենագնաց մեքենա (ներկրում) | հատ | 2 | 9000.0 |
| Ավտոմեքենա | հատ | 1 | 2000.0 |

8. Վարչական սարքավորումների ձեռքբերում (3-րդ եռամսյակ) – **2 050.3 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ /A4, 23 էջ/րոպե արագության/ | հատ | 2 | 138.0 |
| Թվային տեսաձայնագրիչներ | հատ | 12 | 1200.0 |
| Լազերային տպիչներ | հատ | 1 | 30.0 |
| Մակաշերտիչներ (լամինատորներ) | հատ | 1 | 32.0 |
| Թվային լուսանկարչական ապարատներ | հատ | 4 | 200.0 |
| Դյուրակիր համակարգիչներ | հատ | 2 | 450.3 |

9. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (3-րդ եռամսյակ) - **2 402.0 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Սիզամարգի հնձիչ մեքենաներ | հատ | 2 | 92.0 |
| Անտառային տնտեսության սարքավորումների մասեր | դրամ | 2 | 560.0 |
| Հատիչներ | հատ | 2 | 130.0 |
| Էլեկտրոնային մանրադիտակ | հատ | 1 | 120.0 |
| Հյութի արտադրության սարք | հատ | 1 | 1500.0 |

10. Նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում (2-րդ եռամսյակ)- **950,0 հազար դրամ**, այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| Նախագծահաշվարկային աշխատանքներ | դրամ | 1 | 300.0 |
| Տեղագրական քարտեզների կազմման ծառայություններ | դրամ | 1 | 650.0 |

<table>
<tr><td></td><td></td><td>
11. Ծառայությունների ձեռքբերում (2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակ) – 2 650,0 հազար դրամ, այդ թվում՝
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th></tr>
<tr><td>Բանկային ծառայություն</td><td>դրամ</td><td>1</td><td>50.0</td></tr>
<tr><td>Էներգետիկ ծառայություններ</td><td>դրամ</td><td>1</td><td>400.0</td></tr>
<tr><td>Կենցաղային գազի սպառման ծառայություն</td><td>դրամ</td><td>1</td><td>300.0</td></tr>
<tr><td>Հանրային հեռախոսային, ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կապի (ինտերնետի) ծառայություններ</td><td>դրամ</td><td>1</td><td>600.0</td></tr>
<tr><td>Կոմունալ ծառայություններ</td><td>դրամ</td><td>1</td><td>200.0</td></tr>
<tr><td>Ապահովագրական ծախսեր</td><td>դրամ</td><td>1</td><td>500.0</td></tr>
<tr><td>Գույքի և սարքավորումների վարձակալություն</td><td>դրամ</td><td>1</td><td>500.0</td></tr>
<tr><td>Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն</td><td>դրամ</td><td>1</td><td>100.0</td></tr>
</table>
12.«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) /յուրաքանչյուր եռամսյակ/ – 32 474.0 հազար դրամ:<br>
13. Այլ ծախսեր /գործուղման ծախսեր/ (2-րդ, 3-րդ եռամսյակ) – 2 500.0 հազար դրամ:<br>
14. Ներկայացուցչական ծախսեր (2-րդ, 3-րդ եռամսյակ) – 300.0 հազար դրամ:
</td></tr>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>
1. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 3 032.9 հազար դրամ,<br>
2. Ընթացիկ նորոգում և պահպանում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 7 950.0 հազար դրամ,<br>
3. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 18 458.7 հազար դրամ,<br>
4. Գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 1 243.0 հազար դրամ,<br>
5. Կենցաղային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- 200.4 հազար դրամ<br>
6. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- 980.3 հազար դրամ,<br>
7. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 11 000.0 հազար դրամ,<br>
8. Վարչական սարքավորումների ձեռքբերում(գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 2 050.3 հազար դրամ,<br>
9. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- 2 402.0 հազար դրամ<br>
10. Նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում- 950.0 հազար դրամ<br>
11. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 2 650.0 հազար դրամ:
</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</td><td>Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի հետ</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը |

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Կիրակոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**11 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1350-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N Մ-416-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 8-ի N 1/06.2/12580-15 գրությունը և 2015 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կողմից ձեռք բերված ամենազնաց 1 ավտոմեքենան (2008 թվականի արտադրության, «FORD» մակնիշի, նույնականացման համարը՝ WFODXXTTFD8L09364, 8,730,000 դրամ արժեքով, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության բնա-պահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2015 թվականի ծրագրի մասին» N Մ-416-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1283-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

15/15 2/21170-15
11.12.15թ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1351 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանյան մասնաճյուղ)**

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի դեկտեմբերի 8-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված ավտոմեքենայի (1 տեղ, 1,480 կգ, 3,750 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, 2003 թվականի արտադրության Opel Vectra նույնականացման համարը՝ WOLOZCF6848016259, ԱՄ ՄՋՄ ՏՄ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարենկեցիկ պայմաններ» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA
02508251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 դեկտեմբերի 2015 թվականի N Մ - 1352 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՍՅՈՒՆՅԱՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N 07/80-2/38449-15 և դեկտեմբերի 7-ի N 06/3-3/38641-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/10811-15 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N 01/5957-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Աջակցություն ինքնորոշված Արցախին» միավորման կողմից աջակցության նպատակով «Սյունյաց նախադպրոցականներ» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռների («Renault Master» մակնիշի 2006 թվականի արտադրության հաշմանդամների համար հարմարեցված մեքենա, նույնականացման համարը՝ VF1FDCJH536073028, 3,500 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, ԱՄ ՄՁՄ ՄՏ և հաշմանդամների համար նախատեսված մեկ հատ անվասայլակ, 1,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, «Սյունիքի» ՏՄ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 3,150 եվրո) ներմուծման ծրագիրը:

2. «Սյունյաց նախադպրոցականներ» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**14 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1353 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին)
**քաղ. Երևան**

# «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 07/80-2/39625-15 և դեկտեմբերի 12-ի 06/3-3/39549-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 02/14/14782-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N 03/07-1/14347-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N ՖԲ/ԱնՄ2-1/10649-15 և Շիրակի մարզպետարանի 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 01/6046-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող ՛ 506,100,000 դրամ արժեքով «Ամառային ճամբար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, ք. Գյումրի, Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Կոտայքի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 04108135413 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գազի մատակարարում՝ 15,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Գեղամա մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի հուլիսի 24-ին կնքված N 675001161928 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 7,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2010 թվականի հունվարի 10-ին կնքված՝ N 540-541 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Ծաղկաձոր» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2015 թվականի հուլիսի 4-ին կնքված N 369098802 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանի
Մեծավորուհի Ջաննեթ (քույր Արուսյակ)
Մաղզինյանի կողմից

«13» նոյեմբեր 2015թ

## 2016-2018 ԹԹ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Յուրաքանչյուր տարի Տիրամայր Հայաստանի Կուսաստանի Ծաղկաձորի ամառային ճամբարում 4 հերթով հանգստանում, կրթվում և դաստիարակվում են անապահով ընտանիքների մոտ 1000 երեխաներ՝ Հայաստանի տարբեր մարզերից, ինչպես նաև՝ վրացահայ Հնչտիա, Ուչմանա, Թորիա, Ժդանովական, Օրջալար, Գանձա, Խանջալի, Բավրա, Կաթնատուր գյուղերից և Նինոսմինդա քաղաքից: Ակտիվ հանգստի հետ միասին երեխաները ուսանում են կրոնի պատմություն, երգ, պար, օտար լեզուներ, նկարչություն, ձեռագործ և այլն, ինչպես նաև մասնակցում են թատերականացված ներկայացումների, զվարճալի ու ինտելեկտուալ խաղերի, սպորտլանդիաների: Կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի Սևան, Հաղարծին, Մատենադարան և այլուր: Ճամբարի ընթացքում երեխաներին անվճար բաժանվում են հագուստներ և կոշիկներ, գրենական պիտույքներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ամբողջ ծրագիրը հիմնականում ֆինանսավորում են.<br>Ջինիշյան Հիշատակի հիմնադրամը – տարեկան մոտ 4՛800՛000 դրամ<br>Ռենովաբիս ԲԿ – տարեկան մոտ 9՛000՛000 դրամ<br>«Ֆոնդասիոն Այյանս Արմենիեն» ԲԿ - տարեկան մոտ 6՛500՛000 դրամ<br>Եուրո Դ՛Օրիան ԲԿ – տարեկան մոտ 6՛700՛000 դրամ<br>Միսիոնուերք ԲԿ – տարեկան մոտ 8՛500՛000 դրամ<br>ՔՆԵՎԱ ԲԿ – տարեկան մոտ 10՛900՛000 դրամ<br>«Ասոսասիոն Այյանս Արմենիեն» ԲԿ- տարեկան մոտ 12՛400՛000 դրամ<br>ՍՕԱՌ ԲԿ- տարեկան մոտ 3՛300՛000 դրամ<br>Մարլին Երևանյան տարեկան մոտ 6՛700՛000 դրամ<br>Հրայր և Աննա Հովնանյան հիմնադրամ – տարեկան մոտ 7՛500՛000 դրամ<br>Կիրխ ին Նոթ ԲԿ- տարեկան մոտ 7՛500՛000 դրամ<br>Գիլլեներյան հիմնադրամ - տարեկան մոտ 25՛000՛000 դրամ<br>Փիթեր Ոսպիկյան տարեկան մոտ 12՛000՛000 դրամ<br>Նոթր Արմենի կազմակերպություն տարեկան մոտ 15՛000՛000 դրամ<br>Րաֆֆի Արթինյան տարեկան մոտ 5՛900՛000 դրամ<br>Հայր Թովմաս Դիրադուրեան - տարեկան մոտ 7՛500՛000 դրամ<br>Ֆերիդ Թեջիմեր - տարեկան մոտ 7՛500՛000 դրամ<br>Եղբայր Լեո - տարեկան մոտ 7՛000՛000 դրամ<br>Գրիգոր Արայան - տարեկան մոտ 5՛000՛000 դրամ<br>Ընդամենը՝ 168՛700՛000 դրամ 1 տարվա համար և 506՛100՛000 դրամ 3 տարվա համար: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանը *(հասցե՝ Գյումրի, Ե.Չարենցի 6; ՀՎՀՀ 05513266)*: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի «Տիրամայր Հայաստանի Կուսաստան» ճամբարում: Ծրագիրն առնչվում է սոցիալական և կրթական ոլորտներին: |
| 6 | Ծրագրի բյուջեն | • ճամբարին նախորդող մարտ-մայիս ամիսների և հաջորդող՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ, որի ժամանակ կատարվում են վերանորոգումներ և վերակահավորումներ - այս ընթացքում ծախսվում է մոտ 60'000'000 դրամ տարեկան և 180'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար;<br>• բուն ճամբարի իրականացման փուլ հունիս –օգոստոս ամիսների ընթացքում - այս ընթացքում ծախսվում է մոտ 108'700'000 դրամ մեկ տարվա համար և մոտ 326'100'000 դրամ երեք տարվա համար:<br>Ընդամենը՝ 168'700'000 դրամ մեկ տարվա և 506՛100'000 դրամ՝ 3 տարվա՝ 2016-2018 թթ. համար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ամեն տարի ծրագրից կօգտվեն Հայաստանի Շիրակի և Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատիև Արմավիրի մարզերի, Երևանի, ինչպես նաև Վրաստանի Նինոծմինդայի շրջանի հայաբնակ վրացահայ Հնչտիա, Ուչմանա, Թորիա, Ժդանովական, Օրջալար, Գանձա, Խանջալի, Բավրա, Կաթնատուր գյուղերի և Նինոսմինդա քաղաքի անապահով ընտանիքների 6-ից 16 տարեկան մոտ 1000 երեխաներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է, այժմ որակավորման է ներկայացնում 2016-2018 թվականներին իրականացվելիք ծրագիրը; |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ մարտ-մայիս և սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներ -ճամբարի շենքի վերանորոգումներ, որի արժեքը կազմում է տարեկան միջինը 60'000'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 180'000'000 դրամ;<br>➢ ճամբարի շահագործման և կոմունալ-կենցաղային ծախսեր - տարեկան մոտ 9'500'000 դրամ, երեք տարվա՝ 2015-2018թթ. համար մոտ 28'500'000 դրամ;<br>➢ ճամբարի իրականացման համար անհրաժեշտ սննդի, տնտեսական պարագաների, գրենական պիտույքների և այլ ծախսեր - տարեկան մոտ 38'000'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 114'000'000 դրամ;<br>➢ ճամբարի գործունեության, ինչպես նաև՝ ճամբարականներին բաժանելու համար բարեգործական բեռների ներմուծում- տարեկան մոտ 60՛000՛000 դրամ և մոտ 180՛000՛000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>➢ ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման ծախսեր - տարեկան մոտ 1'200'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3՛600'000 դրամ; |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են.<br>➢ ճամբարի շենքը կառուցված է անցյալ դարի 60-ական թվականներին և կարիք ունի անընդհատ վերանորոգումների: տարեկան վերանորոգումների արժեքը կազմում է միջինը 60'000'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 180'000'000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների* |

| | | |
|---|---|---|
| | | *տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*)*;<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 5'000'000 դրամի գազ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 15'000'000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*)*;<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 2'500'000 դրամի էլեկտրաէներգիա, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար՝ մոտ 7'500'000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*)*;<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 1'000'000 դրամի ջուր, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3'000'000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*)*;<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 1'000'000 դրամ՝ հեռախոսակապի և ինտերնետ ծառայությունների համար, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3'000'000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*)*;<br>➢ տարեկան ծախսվում են մոտ 3'000'000 դրամի տնտեսական ապրանքներ և պարագաներ, ինչես նաև գրենական պիտույքներ (մնացածը ուղարկում են բարերարները), երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 9'000'000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*)*;<br>➢ տարեկան ծախսվում է մոտ 35'000'000 դրամի սննդամթերք, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 105'000'000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում* 2016թ. հունվար-2018թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համար*)*;<br>➢ մոտ 60'000'000 դրամ բարեգործական բեռների ներմուծման համար և 180'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>➢ ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման ծախսեր - տարեկան մոտ 1'200'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3'600'000 դրամ *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար):* |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | - հեռախոսակապի և ինտերնետ ծառայությունների համար - տարեկան մոտ 1'000'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3'000'000 դրամ;<br>-ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման ծախսեր - տարեկան մոտ 1'200'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար մոտ 3'600'000 դրամ; |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետարանի, ինչպես նաև՝ Գյումրու և Ծաղկաձորի քաղաքապետարանների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Վերահսկողություն կիրականացվի նաև հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 դեկտեմբերի 2015 թվականի N Մ- 1354 - Ա**

(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին)

**քաղ. Երևան**

## «ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N 07/80-2/39607-15 և 06/3-3/39603-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 02/14/14781-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 03/07-1/14329-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 30-ի N ԱՄ/22.2/13815-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ԱՆՄ2-1/10731-15 և Շիրակի մարզպետարանի 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 01/ 6043-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող՝ 573,000,000 դրամ արժեքով «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Գյումրի, Եղիշե Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Շիրակի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2014 թվականի ապրիլի 1-ին կնքված N 01108133571 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը գազի մատակարարում՝ 33,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված N 133123 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 10,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2005 թվականի մարտի 31-ին կնքված՝ N 410016812/758 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 18-ին կնքված N 402654358 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանի
Մեծավորուհի Ջաննեթ (քույր Արուսյակ)
Սարգսյանի կողմից

---------------------

«...» նոյեմբեր 2015թ

2016-2018 ԹԹ. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | 1. Տիրամայր Հայաստանի Կուսաստանի Պողոսյան կրթահամալիրում անվճար պահել և դաստիարակել 6-20 և ավելի բարձր տարիքի միակողմանի և երկկողմանի որբ մոտ 60 երեխաների ու պատանիների Հայաստանի բոլոր մարզերից, անկախ նրանց կրոնական պատկանելիությունից: Երեխաները հաճախում են պետական դպրոցներ, ապա վերադառնում են կրթահամալիր:<br>2. Տիրամայր Հայաստանի Կուսաստանի Ծերերի ցերեկային խնամքի կենտրոնում աջակցել աղքատության մեջ գտնվող սոցիալապես անապահով ընտանիքներին, միայնակ և կարիքավոր ծերերին: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում անհատույց բաշխման նպատակով բեռների ներմուծման (տղամարդու, կանացի, և երեխայի հագուստ, անկողնային, հիգիենիկ և դպրոցական պարագաներ և այլն), ինչպես նաև էլեկտրական էներգիայի, գազի, ջրամատակարարման և ջրահեռացման, սննդի, տնտեսական ապրանքների, գրենական պիտույքների, ինչպես նաև շենքի և տարածքի վերանորոգման համար օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ծրագիրը ֆինանսավորվում են.<br>Պողոսյան հիմնադրամ – տարեկան մոտ 28'500'000 դրամ<br>Վահե Դոմպալաքյան – տարեկան մոտ 15'000'000 դրամ<br>Ռեյմոն Կույումջյան - տարեկան մոտ 11'400'000 դրամ<br>«Ֆամիլիյա Ինսիեմ» ԲԿ - տարեկան մոտ 3'500'000 հազար դրամ<br>Եվրո Դ'Օրիան ԲԿ – տարեկան մոտ 5'220'000 դրամ<br>«Քնեվա» ԲԿ – տարեկան մոտ 10'700'000 դրամ<br>«Ռենովաբիս» ԲԿ – տարեկան մոտ 10'000'000 դրամ<br>«Ասոսաիոն Ալյանս Արմենիեն» ԲԿ-տարեկան մոտ 8'700'000 դրամ<br>Միսիոն Անֆանս ԲԿ - տարեկան մոտ 2'600'000 դրամ<br>ՍՈԱՌ ԲԿ – տարեկան մոտ 20'000'000 դրամ<br>Միշել Դավուդյան – տարեկան մոտ 3'000'000 դրամ<br>Սաջոնյան քույրեր – տարեկան մոտ 4'800'000 դրամ<br>Հրայր Հովնանյան – տարեկան մոտ 10'000'000 դրամ<br>Ռաֆֆի Արթինյան – տարեկան մոտ 5'000'000 դրամ<br>Մաղին Երևանյան – տարեկան մոտ 15 միլիոն դրամ<br>Աննա Գազանչյան – տարեկան մոտ 16 միլիոն դրամ<br>Րաֆֆի Բալյան– տարեկան մոտ 10 միլիոն դրամ<br>Նոթր Արմենի կազմակերպություն– տարեկան մոտ 6 միլիոն դրամ<br>Կյուլեմերյան հիմնադրամ– տարեկան մոտ 5 միլիոն 580 հազար դրամ<br>Ընդամենը՝ 191'000'000 դրամ և 573'000'000 դրամ 3 տարվա համար: |
| 4 | Ծրագիրը կատարողը | Ծրագիրն անմիջականորեն կազմակերպող, իրականացնող և պատվիրատու է հանդիսանում Անարատ Հղության ՀՔ Միաբանության Տիրամայր Հայաստանի Կուսաստանը *(հասցե՝ Գյումրի, Ե.Չարենցի 6; ՀՎՀՀ 05513266)*. |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայր է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքը: Ծրագրի ուղղվածությունը կրթական, սոցիալական և առողջապահական է: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի արժեքն է 1 տարվա կտրվածքով՝ մոտ 191'000'000 դրամ, երեք տարվա՝ 2016-2018թթ. համար՝ մոտ 573'000'000 դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրում ընդգրկված են.<br>➢ Տիրամայր Հայաստանի Կուսաստանի «Պողոսյան կրթահամալիր» հաճախող 6-20-ից բարձր տարիքի մոտ 60 երեխաներ ու պատանիներ, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող ընտանիքներում, կամ միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ են:<br>➢ Տիրամայր Հայաստանի Կուսաստանի «Ծերերի ցերեկային խնամքի» կենտրոն հաճախող մոտ 50 միայնակ ծերեր:<br>➢ Հայաստանի բոլոր մարզերի, անապահով ընտանիքները, որոնց ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական նկարագրերի մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա:<br>Ընդհանուր առմամբ, ծրագրի շահառուներն են հանդիսանում 1000-ից ավելի ընտանիքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2001 թվականից, այժմ որակավորման է ներկայացնում 2016-2018 թվականներին իրականացվելիք ծրագիրը; |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը | • Շենքի շահագործման և կոմունալ-կենցաղային ծախսեր – տարեկան մոտ 37'000'000 դրամ և մոտ 111'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Կենտրոն հաճախող երեխաներին վիտամիններով և հանքային նյութերով հարուստ տաք սննդի մատուցում օրը 3 անգամ: Մեկ երեխայի սննդի օրական արժեքը կազմում է մոտ 1'000 դրամ: Տարեկան սննդի ծախսը կազմում է մոտ 20'000'000 դրամ և մոտ 60'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Դպրոցահասակ երեխաների դպրոցական տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո: Երեխաներին գրենական պիտույքների, ուսումնական նյութերի պայուսակների ապահովում: Մեկ երեխայի հաշվով գրենական պիտույքների արժեքը ամսական կազմում է մոտ 1600-2000 դրամ: Տարեկան գրենական պիտույքների և ծախսը կազմում է մոտ 1'300'000 դրամ և մոտ 3'900'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Երեխաների բնականոն կենցաղի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական պարագաներ - տարեկան մոտ 1'700'000 դրամ և մոտ 5'100'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Կենտրոնի գործունեության, ինչպես նաև՝ անապահով ընտանիքներին բաժանելու համար բարեգործական բեռների ներմուծում-տարեկան մոտ 128'000'000 դրամ և մոտ 384'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>• Ծրագրային և ֆինանսական աուդիտի իրականացման ծախսեր-տարեկան մոտ 3'000'000 դրամ և մոտ 9'000'000 դրամ 3 տարվա՝ |

| | | |
|---|---|---|
| | | 2016-2018թթ. համար:<br>• Բժշկական ծառայություններ/ ակնաբույժի, ատամնաբույժի/ բժշկական վերահսկողություն<br>• հոգեբանական ծառայություններ՝ հոգեբանական աջակցության կազմակերպում, անհատական և խմբային թերապիաներ:<br>• Սոցիալական ծառայություններ<br>• Պատմա-մշակութային արժեքների հետ շփում, ամիսը 1 անգամ սպորտային և մշակութային ծրագրերի կազմակերպում; |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Այս ծրագրի շրջանակներում ծախսվում է՝<br>-մոտ 3'500'000 դրամ էլեկտրականության համար կամ 10'500'000 դրամ և 3 տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 1'000'000 դրամ ջրամատակարարման և ջրահեռացման համար և 3'000'000 դրամ 3 տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 1'500'000 դրամ հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի համար և 4'500'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 11'000'000 դրամ գազի համար և 33'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 20'000'000 դրամ շենքերի և տարածքի վերանորոգման համար և 60'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 20'000'000 դրամ սննդի համար (մնացած սնունդը ուղարկում են բարերարները) և 60'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 1'300'000 դրամ գրենական պիտույքների համար (մնացած անհրաժեշտ գրենական պիտույքները ուղարկում են բարերարները) և 3'300'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 1'700'000 դրամ տնտեսական ապրանքների և գրենական պիտույքների համար (մնացած անհրաժեշտ տնտեսական ապրանքները ուղարկում են բարերարները) և 5'100'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 128'000'000 դրամ բարեգործական բեռների ներմուծման համար և 384'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ.համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)*<br>-մոտ 3'000'000 դրամ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 9'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար *(ակնկալվում է հարկային արտոնությունների տրամադրում 2016 հունվար-2018 դեկտեմբեր ժամանակահատվածի համար)* |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | -մոտ 1'500'000 դրամ հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի համար և 4'500'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար:<br>-մոտ 3'000'000 դրամ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 9'000'000 դրամ երեք տարվա՝ 2016-2018թթ. համար: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ շահառուների ցուցակների ճշտման կապակցությամբ: Ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի. ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության գնահատումը, վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք պետք է ներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Վերահսկողություն կիրականացվի նաև հարկային մարմինների և ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի կողմից: |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**14 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1355-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-929-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի դեկտեմբերի 11-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված «Ֆորդ Կուգա» մակնիշի ավտոմեքենան (նույնականացման համարը՝ WFOAXXWPMAFJ77761, 2015 թվականի արտադրության, 22,687.43 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4.000 եվրո) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության և «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող «Առողջություն երեխաներին» ծրագրի մասին» N Մ-929-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 դեկտեմբերի 2015 թվականի N Մ-1356-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՖՈՒՏԲՈԼԻ ՓՈՔՐ ԽԱՂԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N 07/80-2/35949-15 ու նոյեմբերի 19-ի N 06/3-3/35830-15 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի նոյեմբերի 23-ի N 02/14/14461-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 9,266,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղադաշտի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ձեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2015 թվականի նոյեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ստեփանակերտ քաղաքի Թումանյան 54 և 56 շենքերի հարակից տարածքում ֆուտբոլի փոքր խաղադաշտի կառուցման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9,266,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ ծրագրի ավարտից հետո [illegible] սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«13» նոյեմբերի 2015թ.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում ֆուտբոլի փոքր խաղադաշտի կառուցում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հարակից տարածքում ֆուտբոլի փոքր խաղադաշտի կառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - ՈւԵՖԱ (Շվեյցարիա, Նիոն) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի Թումանյան 54 և 56 շենքերի հարակից տարածքում՝ սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 9,266,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության նախարարություն: |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը: |
